

**ԳԻՐՔԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ Է ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՈՎ**

**ՀՀ ՍՓՅՈՒՈՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԳԱԱ Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ԱՐԴԻ ԼԵԶՎԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

**Մայրենիի օրվան նվիրված գիտաժողովի նյութեր
(21 փետրվարի 2013թ.)**

Ե Ր Ե Վ Ա Ն - 2013

Արդի լեզվաքաղաքականության խնդիրներ: Գիտաժողովի նյութեր / ՀՀ Սփյուռքի նախ., ԳԱԱ լեզվի ինստիտուտ.- Եր.

Գիրքն ընդգրկում է Մայրենիի օրվան նվիրված <<Արդի լեզվաքաղաքականության խնդիրներ>> գիտաժողովի նյութերը, որն անցկացվեց Երևանում 2013թ. փետրվարի 21 - ին:

ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈՒՅԱԼ

ՀՀ Մփյուռքի նախարար

ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

Հարգարժան գիտնականներ, մանկավարժներ, ուսանողներ

Միրով ու ջերմությամբ ողջունում և շնորհավորում եմ բոլորիդ Մայրենի լեզվի տոնի առիթով. այն ոչ միայն պետական, այլև ազգային և համազգային տոն է, որովհետև լեզուն մեր հարստությունն է և համայն հայության գոյության ու լինելիության հիմքը:

Շնորհակալ եմ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայից, նրա նախագահից, ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտից, որ մեզ հետ համատեղ կազմակերպել են այս համաժողովը, որպեսզի ամփոփենք, ի մի բերենք ձեռքբերումները՝ անպայման նշելով բացերը, սխալները, թերությունները, և մտածենք ապագա մեր գործողությունների ու ծրագրերի մասին:

Պետության հիմքը կազմում են ընտանիքը, հավատքը, մշակույթը և լեզուն: Հատկապես աշխարհասփյուռ հայության համար լեզուն առանձնահատուկ նշանակություն ունի: Լեզուն մեր ինքնության պահապանն է, մեր միասնության հիմքը, մեր ինքնապաշտպանության կարևոր վահանը: Լեզուն մեր փրկությունն է, մեր Հայրենիքն է, մեր բանակն է, մեր հոգու հացն է և վերջապես հայի տունն է աշխարհի չորս ծագերում: Մեր լեզուն անցել է հազարամյակների ճանապարհ, դիմակայել բազում փորձությունների, բայց, ցավոք, ազգի հետ լեզուն էլ բաժան-բաժան է եղել: Մեր լեզվի արևելահայերեն տարբերակը ունեցավ պետական լեզվի գործառույթներ, գիտնական հետազոտողներ, զարգացման հնարավորություններ ու հեռանկարներ, մեթոդաբանություն, իսկ արևմտահայերենը՝ իր դասական ուղղագրությամբ, մնաց անտուն, անհայրենիք և փորձեց զարգանալ անհատների, երբեմն տարբեր կազմակերպությունների, բարերարների քմահաճույքի ներքո: Փառք ու պատիվ այն մարդկանց, այն կառույցներին, որ կարողացան պահել - պահպանել նաև արևմտահայերենը և փոխանցել մեր սերունդներին, հասցնել 21-րդ դար:

Սակայն այսօր թե՛ Հայաստանում և թե՛ Մփյուռքում հայերենը վտանգվում է: Այսօր մասնագիտական քննարկում կազմակերպելով՝ պետք է կոչնակ հնչեցնենք, ահազանգ պետք է հնչեցնենք՝ մեր մայրենին, մեր ոսկեղենիկը պահպանելու, գործածելու և զարգացնելու այն նույն երկյուղածությամբ ու հոգածությամբ, ինչպես որ մեզ ավանդել է Մեծ Մեսրոպ Մաշտոցը: Երբ այսօր դիտարկում ենք հայաստանյան իրականությունը, նկատում ենք, որ անսխալ և գեղեցիկ գրական հայերենով խոսողների թիվը սրընթաց պակասում է, խոսքում ավելանում են անհարկի օտարաբանություններն ու

բարբառայնությունները, ժարգոնային մերժելի արտահայտությունները, աններելի անմխիթար վիճակում է հրապարակային լեզուն, հատկապես՝ պաշտոնական լեզուն, որի անճշտությունները մեր երեխաների, պատանիների ու աղջիկների համար դառնում են բացարձակ արժեք և ընդօրինակման առարկա: Ցավալիորեն վատ վիճակում է նաև մեր մամուլի և հեռատեսիլի լեզուն: Մասնավորապես՝ սերիալների վայրիվերո և հասարակաբանություններով ու ժարգոնով խճողված լեզուն մխրճվում է հասարակական գիտակցության մեջ՝ այնտեղից երբեք դուրս չգալու պայմանով:

Ինչպես իր ողջույնի խոսքում նշեց պարոն Ռ.Մարտիրոսյանը, մեսրոպյան գիրը վերանում կամ չի երևում մեր գովազդային վահանակների և ցուցավահանակների վրա: Հայերենը իր տեղը չի գտնում նաև էլեկտրոնային տարածքում: Էլ չենք խոսում դպրոցներում հայերենի դասավանդման որակի անբավարար լինելու մասին, որի վկան ընդունելության քննությունների ոչ ցանկալի արդյունքներն են: Վերջապես, ակնհայտորեն արդյունավետ չեն այն մեթոդները, ձևերը, որոնցով մենք պատրաստում կամ վերապատրաստում ենք լեզվի մեր մասնագետներին:

Իսկ ի՞նչ է կատարվում այսօր Սփյուռքում: Բնականաբար բնակչության տեղաշարժերը, փոփոխությունները ոչ միայն Սփյուռքի պատկերն են դարձնում բազմաշերտ, այլ նաև փոխում են լեզվի խճանկարը: Աշխարհի տարբեր մասերում մեր լեզուն երթարկվում է բազմաթիվ մշակութային ազդեցությունների, տարբեր լեզուների և լեզվամտածողությունների, լեզվակաղապարների ու բառաշերտերի շարունակական ու համառ գրոհի, վտանգվում է մայրենիի միասնականությունը: Ցավով եմ ընդգծում, որ հայ երիտասարդությունը սկսել է չխոսել հայերեն: Հայկական դպրոցները փակվում են, պակասում է հայկական դպրոցներ հաճախող աշակերտների թիվը, ավելանում են խառնամուսնությունները, և այս բոլորն իրենց հետքն են թողնում հայերենի իմացության ու գործառության վրա: Տազնապահարույց է վիճակը հատկապես Անկախ պետությունների համագործակցության երկրներում, Եվրոպայում, Լատինական Ամերիկայում, ԱՄՆ-ում: Եվ այս մարտահրավերներին դիմագրավելու համար Հայոց պետությունն է, որ պետք է լրջագույնս մտածի առկա և ծագող հիմնախնդիրները արագ լուծելու, Մայրենին որպես սրբություն, որպես պատմականորեն ձևավորված անփոխարինելի արժեք, որպես ամենագորեղ մի վահան աչքի լույսի պես պահելու-պահպանելու և սերունդներին փոխանցելու մասին:

Կարծում եմ՝ մենք, որպես պետություն, աշխատանքներում ներգրավելով գիտնականներին, մասնագետներին, նաև սփյուռքյան հատվածը, ի գորու ենք և պետք է լուծենք հետևյալ խնդիրները.

Առաջին. պետք է վերանայել լեզվաքաղաքականության մասին ծրագիրը՝ որոշակի և լուրջ տեղ հատկացնելով հատկապես սփյուռքի լեզվական խնդիրներին:

Երկրորդ. Ժամանակն է, որ վերականգնվի և գործուն աշխատի մեր եզրութաբանական բարձրագույն խորհուրդը:

Երրորդ. ակադեմիայի լեզվի ինստիտուտը, ինչպես նշեց պարոն Ռ.Մարտիրոսյանը, պետք է զբաղվի մեր լեզվի երկու ճյուղերի մերձեցման խնդրով՝ առաջադրելով և մշակելով հստակ ծրագիր, որը և քայլ առ քայլ պետք է փորձենք միասին իրականացնել:

Չորրորդ. կարծում եմ՝ մեր բոլոր համալսարանների բանասիրական ֆակուլտետներում արևմտահայերենի ուսուցումը պետք է ընթանա առանձին բաժնով, այն չպետք է մատուցվի իբրև մեկ դասընթաց և այդքանով ավարտվի: Նաև կարծում եմ, որ արևմտահայ գրականությունը, որ ստեղծված է սփյուռքում, պետք է անհրաժեշտ ուշադրության արժանանա գիտահետազոտական աշխատանքներում: Մենք պարտավոր ենք ճշգրտել և արձանագրել, թե այսօր ինչ տեղեկատուներ, ինչ բառարաններ, ինչ նյութեր ունենք հրապարակի վրա, պարզել, թե դրանք որքանով են փակում այն տարածքը, որը կոչվում է լեզվաքաղաքականություն, և որոնք են այն առաջնայնությունները, որոնցով պետք է զբաղվի հայ գիտնականը, և որոնց վրա պետք է քննել հայ հանրության ուշադրությունը: Ժամանակն է, որ 20 տարվա բարձունքից Հայաստանի պետությունը, մեր կառավարման մարմինները այլալեզու միջավայրում ապրող հայկական խոշոր համայնքների համար մշակեն հայոց լեզվի ուսուցման ձեռնարկներ՝ համապատասխան երկրների լեզուների հիմքով:

Եվ, վերջապես, լիահույս եմ, որ այսօրվա գիտաժողովը իր կարևոր նշանակությունը կունենա՝ առաջադրված խնդիրները լուծելու հեռանկարներ և հնարավորություններ նախանշելու առումով:

Շատ կուզենամ, որ աշխարհի հայկական օջախներում լիիրավ հնչի հայերենը, հայերը տանը խոսեն միայն հայերեն: Հայաստանի Հանրապետության Նախագահի հորդորն է Սփյուռքին, որ գործվանքը լինի միայն հայերենով, որ աղոթքը Աստծուն ուղղվի հայերենով, որ օրհնանքը հնչի հայերեն: Եթե մենք կարողանանք այսպիսի իրավիճակ, մթնոլորտ ստեղծել, հաջողել հայերենի իմացության ու գործառության համար պայքարում, կարծում եմ՝ մեծ նպաստ բերած կլինենք հայապահպանության գործին, որովհետև առանց լեզվի մենք կորցնում ենք շատ ու շատ այլ բաներ: Ուրեմն պայքարենք հայերենի իմացության, հայերենի գորացման, հայերենի տարածման և նրա սահմանների ընդլայնման համար:

Շնորհակալ եմ, մեր գիտաժողովին մաղթում եմ լուրջ և արգասաբեր աշխատանք: Սա միայն սկիզբն է այն մեծ գործի, որի հաջող ընթացքի համար յուրաքանչյուրս պետք է հանդես բերի գիտելիք, նվիրում, եռանդ և կամք:

ՎԻՎՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱԼ

ՀՀ ԳԱԱ Ն.ԱՃառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԱՐԴԻ ԼԵԶՎԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Միրով շնորհավորում եմ բոլորիդ՝ Մայրենի լեզվի օրվա կապակցությամբ, ցանկանում, որ հայոց լեզուն լինի ոչ միայն գովերգման ու փառաբանման, հիացմունքի ու հպարտության առարկա, իսկ այն իսկապես արժանի է դրան, այլ նաև յուրաքանչյուր հայի ոգեշնչի ազգային արժանապատվության, ինքնության պահպանման, հայրենասիրության, պետականության, մարդասիրության վեհ զգացումներով, լինի պետության ու հասարակության ակնածալից և հոգածու վերաբերմունքի առարկա, արդյունավետ և հետևողական լեզվաքաղաքականության շնորհիվ անկաշկանդ ու անաղարտ գործառի հասարակական կյանքի բոլոր ասպարեզներում, գիտակրթական ոլորտի նպատակալաց գործունեության արդյունքում շարունակի իր երթը իբրև կանոնարկված, նորմավորված լեզու, իբրև բառաստեղծական իր մեծ հնարավորությունների գործադրմամբ ու անհրաժեշտ և հաջողված փոխառություններով անընդհատ հարստացող լեզու: Ցանկանում եմ նաև, որ հայերենի դրսևորման բոլոր տարբերակները՝ արևմտահայերեն և արևելահայերեն գրական լեզուները, խոսակցական լեզուն և բարբառները, իբրև միասնական համակարգի անտրոհելի բաղադրիչներ, ունենան բնականոն զարգացման և փոխադարձաբար միմյանց հարստացնելու իրական հնարավորություններ:

Մայրենի լեզվի օրվա կապակցությամբ սիրով շնորհավորում եմ նաև Հայաստանի Հանրապետությունում բնակվող ազգային փոքրամասնություններին և ուրախությամբ նշում, որ մեր երկրում նրանց լեզուներն ունեն ազատ գործառնելու և զարգանալու իրական հնարավորություններ:

Հարգելի բարեկամներ, փաստը, որ ՄԱԿ-ի՝ կրթության, գիտության և մշակույթի հարցերով կազմակերպությունը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ն, փետրվարի 21-ը հռչակել է Մայրենի լեզվի միջազգային օր, որը և 2000 թվից սկսած՝ նշվում է ամեն տարի, վկայում է այն մասին, որ արդի աշխարհում մեծապես կարևորվում է մայրենի լեզվի դերը ազգերի ինքնության, մշակութային ինքնատիպության զարգացման և պահպանման գործում: Մեր օրերում մեծ թափ առած համընդհանրայնացման գործընթացները չպետք է միտված լինեն ազգերի ձուլման, մշակույթների համահարթեցման, լեզուների վերացման, և ՅՈՒՆԵՍԿՕ-ի այս որոշումը, ինչպես նաև դրան հետևած միջոցառումները, 2008

թվականը Մայրենի լեզվի տարի հռչակելը, մատնանշում են համընդհանրայնացման իրական ուղին, այն է՝ բազմամշակութային ու բազմալեզու աշխարհում ազգային արժեքների ու լեզուների պահպանում, զարգացում, տարածում և համամարդկային արժեքների վերածում:

Մեկնաբանելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախաձեռնությունը՝ կազմակերպության գլխավոր տնօրեն Կոիտիբո Մացուուրան իրավացիորեն նկատել է, որ լեզուները մարդկության բազմաբնույթ ստեղծագործության անկրկնելի արտահայտությունն են, լինելով հաղորդակցման, ընկալման և մտածողության միջոց՝ յուրաքանչյուր լեզու ներկայացնում է ազգի յուրահատուկ աշխարհընկալումը, արտացոլում է կապը անցյալի, ներկայի և ապագայի միջև, մայրենի լեզուն առանձնահատուկ է նրանով, որ իր կնիքն է դնում յուրաքանչյուր մարդու հոգեկերտվածքի, աշխարհայեցողության վրա նրա ծննդյան օրվանից, և այդ կնիքը երբեք չի անհետանում՝ անկախ այն բանից, թե հետագայում քանի այլ լեզու է մարդը յուրացնում:

Լեզվի վերաբերյալ արդիական այս դատողությունները անշուշտ ներդաշնակ են մեր ազգային մեծությունների՝ տասնամյակներ առաջ արտահայտած և մեզ միշտ ուղեկցող մտքերին: Հիշենք Թումանյանի խոսքերը. «Լեզուն է ամեն ժողովրդի ազգային գոյության ու էության ամենախոշոր փաստը, ինքնուրույնության ու հեռավոր անցյալի կախարդական բանալին, հոգեկան կարողությունների ամենաճոխ գանձարանը, հոգին ու հոգեբանությունը»: Բերենք նաև Իսահակյանի բնութագրումը. «Հայրենիքը լեզուն է. նա է միացնում անցյալն ու ներկան, ապագան, մեռածն ու ապրողը, ծնվողը. նա է հավերժացնում ազգը, շտեմարանում ազգի հոգեկան գանձերը»: Լեզվի մասին մեր ազգային պատկերացումները եզրափակենք Շիրազի խոսքերով. «Մեծ ու փոքր ազգերը պիտի ծաղկեն իրենց մայրենիներով ու մշակույթով, ինչպես ծաղկում են անտառում և՛ փոքրիկ մանուշակը, և՛ հսկա կաղնին, և՛ մասրենու թուփը, և՛ բարձր բարդին»:

Ահա մայրենի լեզվի և ազգային մշակույթի այսօրինակ ըմբռնումն էլ հիմք դարձավ, որպեսզի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կրթության, գիտության, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հրանուշ Հակոբյանի նախաձեռնությամբ 2005 թվին փոփոխություն մտցվեր «Տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքում, և ՀՀ պետական տոնացույցում փետրվարի 21-ը հաստատվեր որպես Մայրենի լեզվի օր: 2006 թվականից Հայաստանի Հանրապետությունում Մայրենի լեզվի օրը նշվում է իբրև պետական տոն, կազմակերպվում են տարաբնույթ միջոցառումներ, և հասարակության ուշադրությունը բնեղվում է մայրենիի պահպանման, զարգացման, կանոնարկման, անաղարտ գործառության հարցերին, տոնը առիթ է դառնում, որպեսզի քննարկվեն ոլորտում առկա խնդիրները: Բացի այդ, ՀՀ սփյուռքի նախարարությունը 2010 թվականը հռչակեց Մայրենիի տարի և ՀՀ պետական շահագրգիռ ու Սփյուռքի հայկական կառույցների հետ իրականացրեց «Մեր լեզուն մեր Հայրենիքն է» խորագրով միջոցառումների ծրագիր, որը

միտված էր Հայաստանում եւ Սփյուռքում մայրենի լեզվի անադարտության պահպանմանը, մեր լեզվամշակույթի միջոցով ազգային ինքնության ամրապնդմանը, մատաղ սերնդի մեջ լեզվական արժանապատվության ձևավորմանը, հայոց լեզվով ստեղծված մեր գրական-մշակութային ժառանգության ներկայացմանը, մատաղ սերնդի հայեցի դաստիարակությանը: Միաժամանակ պետական բարձրագույն մակարդակով արտահայտվել է այն բանի գիտակցումը, որ յուրաքանչյուր պետություն ամուր է իր արմատներով, լեզվով, հավատով եւ մշակույթով՝ արժեքներ, որոնք պատմության, ազգային ինքնագիտակցության, սեփական արժանապատվության պահպանման իրական ու գործուն գրավականներ են, ընդգծվել է նաև, որ մեր լեզուն հայապահպանության գլխավոր զենքն է, մեր գոյության հիմնասյունը, ազգային միաբանության կարևոր առհավատչյան: Ինչ խոսք, այս ամենը մայրենի լեզվի նկատմամբ մեր պետության որդեգրած քաղաքականության արտահայտություն են: Նշենք նաև, որ այդ քաղաքականության իրավական և օրենսդրական հիմքերը վաղուց են ստեղծված: Այսպես, ՀՀ Սահմանադրությունը հայերենը հռչակում է Հայաստանի Հանրապետության պետական լեզու, ՀՀ «Լեզվի մասին» օրենքը հաստատագրում է, որ Հայաստանի Հանրապետության պաշտոնական լեզուն գրական հայերենն է, և սահմանում է լեզվաքաղաքականության հիմնական դրույթները, լեզվավիճակն ու լեզվահարաբերությունները կարգավորող նորմերը, ՀՀ «Կրթության մասին», «Մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին», «Գովազդի մասին» և այլ օրենքների ու իրավական ակտերի համապատասխան հոդվածներով կարգավորվում է պետական լեզվի՝ հայերենի գործառությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: ՀՀ կառավարությունը հաստատել է «Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականության պետական ծրագիրը»¹ և «Հայագիտության զարգացման հայեցակարգը»², որոնցում առաջադրված են լեզվաքաղաքականության վերաբերյալ խնդիրներ և գործողությունների ռազմավարություն: Իհարկե, համապատասխան օրենսդրության ձևավորումը շարունակական գործընթաց է և ժամանակի թելադրանքով մշտապես ենթակա է ճշգրտումների: Եվ պատահական չէ, որ անցած տարիների ընթացքում ՀՀ Ազգային ժողովում պարբերաբար տեղի են ունեցել լեզվական հարցերի քննարկումներ, որոշ օրենքներում կատարվել են անհրաժեշտ փոփոխություններ և լրացումներ, ընթացքի մեջ են այդ կարգի այլ նախաձեռնություններ: Մեր դիտարկմամբ, ներկայումս առաջացել է «Լեզվի մասին» օրենքում լրացումներ կատարելու կամ լեզվաքաղաքականության վերաբերյալ առանձին օրենք ունենալու պահանջը: Երկու դեպքում էլ առաջնահերթ խնդիր պետք է համարել լեզվի պետական տեսչության

¹ Հաստատված է ՀՀ կառավարության 2002 թ. փետրվարի 18-ի N 138 որոշմամբ:

² Ըստ ՀՀ կառավարության 2012 թ. հունվարի 12-ի նիստի N 1 արձանագրային որոշման:

կարգավիճակի ու գործառույթների հստակեցումը, Հայերենի բարձրագույն խորհուրդը իբրև կառավարությանն առընթեր կառույց վերականգնելու հիմքերի ստեղծումը:

Ինչ խոսք, օրենսդրությունը մշտապես կատարելագործվելու կարիք ունի, իսկ գործող օրենքների պայմաններում պետական լեզվի գործառույթունը կարգավորող օրենսդրական նորմերի և իրավական ակտերի խախտումները, ցավոք սրտի, դարձել են համատարած և գրեթե անվերահսկելի, սովորական են դարձել գրական լեզվի աղավաղումները:

Ստեղծվել է մի իրավիճակ, երբ անգամ բարձրագույն կրթություն ու գիտական աստիճան ունեցող անձինք, պետական պաշտոնյաները իրենց թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքում չեն կարողանում պահպանել գրական հայերենի նորմերը և թույլ են տալիս տարաբնույթ բազմաթիվ սխալներ: Այդպիսիք հաճախ առկա են նաև դասագրքերում, պաշտոնական գրություններում, գիտական աշխատություններում:

Այս երևույթը, կարծում ենք, կարող է պայմանավորված լինել մի շարք հանգամանքներով: Նման իրավիճակի պատճառ նախ և առաջ կարող են լինել բացթողումները կրթական համակարգում, և լրջագույն քննարկման առարկա պետք է դառնա այն հարցը, թե կրթական առկա ծրագրերը, դասագրքերը, ուսուցման մեթոդներն ու եղանակները որքանով են նպաստում, որպեսզի դպրոցի կամ բուհի շրջանավարտը տիրապետի ճիշտ ու գեղեցիկ գրավոր և բանավոր խոսքի կառուցման ունակությունների, հմտությունների, մայրենիի քերականական կանոններին: Չե՞ որ Գնահատման և թեստավորման կենտրոնի անցկացրած ստուգման և գնահատման արդյունքներով, ըստ մամուլի տեղեկությունների, դպրոցներում արձանագրվել է հայերենի իմացության խիստ ցածր մակարդակ: Իբրև պատճառաբանություն բերվող այլ հանգամանքները, ինչպիսիք են ուսման նկատմամբ հետաքրքրության անկումը, ընթերցասիրության պակասը, համակարգիչն ու համացանցը, հեռուստատեսությունն ու զվարճանքների վայրերը, ընդամենը հաստատում են այն միտքը, որ կրթական համակարգը, մասնավորապես՝ մայրենիի ուսուցման ներկա եղանակը, կարիք ունի էական այնպիսի բարեփոխման, որի արդյունքում աստիճանաբար պետք է չեզոքանա խանգարող հանգամանքների ազդեցությունը: Նշենք նաև, որ մայրենիի ուսուցմանը ակնհայտորեն չի նպաստում «Հայոց լեզու և գրականություն» առարկայի՝ բուհական ընդունելության քննության թեստային ներկա կարգը, որի պատճառով դպրոցի բարձր դասարաններում բովանդակային ուսուցմանը ընդհանուր առմամբ փոխարինել է ինչ-ինչ փաստական տվյալների անիմաստ ու աննպատակ սերտումը: Բացի այդ, անհասկանալի է մնում հումանիտար և բնագիտական ուղղվածությունների դիմորդների գիտելիքները նույն հարցաշարերով ստուգելու իրողությունը: Մայրենիի և ընդհանրապես ուսուցման գործում մեծ կարևորություն ունի գրավոր խոսքը, մինչդեռ հայերենով գրված շատ դասագրքերի լեզուն մանվածապատ է, խճողված, ոճականորեն՝ անհարթ, քերականորեն՝ սխալաշատ, և հաճախ միայն փորձառու մանկավարժն է

կարողանում կռահել, թե ինչ է ուզում ասել կամ ինչ պահանջ է առաջադրում դասագրքի հեղինակը: Թերևս կարելի է կատարել նոր դասագրքերի ձեռագրերի լեզվական փորձաքննություն՝ գործընթացում ներգրավելով լեզվի պետական տեսչությանը, ԳԱԱ լեզվի ինստիտուտին, բուհերի հայերենագիտական ամբիոններին, և խմբագրական աշխատանքներից հետո միայն կազմակերպել հրատարակումը:

Գրական հայերենի իմացության ցածր մակարդակի հիմնավոր պատճառ է նաև արդի գրական արևելահայերենի ակադեմիական նորմատիվ քերականության, կանոնարկող տեղեկատուների, բառարանների, լեզվի մաքրության չափորոշիչների, նորմավորող այլ կարգի ուղեցույցների բացակայությունը կամ սակավությունը: Բացը կարելի է լրացնել պետական համապատասխան կառույցի՝ Հայերենի բարձրագույն խորհրդի ձևավորումով, որը, համագործակցելով գիտակրթական կենտրոնների հետ, կստանձնի լեզվի կանոնարկումը համակարգող կենտրոնի դեր: Նման կենտրոնի առկայությամբ հնարավոր կլինի նաև հայերենը զերծ պահել ահագնացող անհարկի փոխառություններից: Ընդ որում՝ խոսակցական հայերենը առանց այդ էլ հազեցած է առարկաների, իրողությունների օտարամուտ, հաճախ անբարեհունչ անվանումներով: Երևույթից զերծ չի մնում նաև գրավոր խոսքը: Դեպքերի մի մասում անհարկի փոխառությունների գործածությունը պայմանավորված է հասարակության որոշ շերտերի օտարամոլությամբ, սեփական արժեքները ըստ արժանվույն չգնահատելու քաղքենիական պատկերացումներով: Ցավոք, այս մտայնությունը մեր մեջ բավականին հիմնավոր է նստած, և մեր մեծերը հաճախ են ցավով արձանագրել այն: Տեսեք, թե որքան արդիական են Միսաք Մեծարենցի խոսքերը. «Օգտվենք եվրոպական լեզուներու նորանոր ու թարմ արտահայտություններեն, բայց չմոռնանք գրաբարին հուռթի շտեմարաններեն օգտվիլ մանավանդ: Ինչո՞ւ մեր հացը ձգենք ու մուրացիկ, ուրիշի հետենն վազենք»: Դեպքերի մեկ այլ մասում օտարաբանությունների գործածությունը պայմանավորված է հայերեն առկա համարժեքների չիմացությամբ: Մակայն ավելի շատ են այն դեպքերը, երբ օտար բառեր գործածվում են, որովհետև չկան հայերեն համարժեքներ, կամ էլ օտար բառերի դիմաց առաջարկվել են կազմությամբ անհաջող, անբարեհունչ կամ իմաստը ճշգրիտ չներկայացնող ձևեր: Վերականգնվելու դեպքում Հայերենի բարձրագույն խորհուրդը ոչ միայն կհամակարգի հայերենի բառակերտման, նոր տերմինների ստեղծման գործընթացը, այլ նաև գիտական միտքը կուղղորդի՝ օգտագործելու գրաբարյան, միջինհայերենյան և բարբառային անսպառ բառազանձը: Խորհուրդը մեծապես կնպաստի նաև արևելահայերենի և արևմտահայերենի տերմինային համակարգերի զարգացմանն ու մերձեցմանը:

Լեզվական չարիք է դարձել գրական լեզվի ոլորտ խոսակցական լեզվի, հաճախ նաև նրա ցածր դրսևորումների՝ հասարակաբանությունների և գոեհկաբանությունների, ժարգոնային արտահայտությունների անզուսպ ներթափանցումը: Զանգվածային լրատվության միջոցները իրենց պարբերաբար կրկնվող և անվերահսկելի ու անուղղելի

լեզվական շեղումներով, հեռուստաընկերությունները՝ հաղորդավարների ու սերիալների հերոսների իբրև թե անբռնազբոս, բայց իրականում լեզվական ոչ վայել վարքով, նաև հայերենին ոչ հատուկ առողջանությամբ ու շեշտադրությամբ ուղղակի ավերիչ ազդեցություն են ունենում երիտասարդության, դեռահասների լեզվամտածողության վրա: Ավելին, կան ստեղծագործողներ, որոնք երևի թե տաղանդի և պատկերավոր մտածողության իրենց պակասը փորձում են լրացնել և աչքի ընկնել գոեհիկ արտահայտություններով, հայիոյաբանություններով: Ակնհայտ է, որ այս ոլորտներում լեզվական վերահսկողության պահանջ կա, իսկ լեզվի պետական տեսչության գործառույթների մեջ հեռուստաթերում, ՋԼՄ-ներում և գրքերում լեզվի անաղարտության վերահսկումը չի մտնում: Նշված ոլորտներում թերևս լեզվական ոչ բարվոք իրավիճակը կարելի է շտկել լեզվի պետական տեսչության իրավասությունների ընդլայնումով, բացատրական աշխատանքներով, մասնագիտական խորհրդատվություններով, խմբագրական արհեստավարժ աշխատանքներ ձեռնարկելով, բնագավառի պատասխանատուներին լեզվին վերաբերող օրենսդրական նորմերը պահպանելու, օրենքով գրական հայերենին վերապահված ոլորտներում այլ լեզվավիճակներ չգործածելու և գրական լեզուն չաղավաղելու լրջագույն պահանջ առաջադրելով: Պետք է նշել, որ մենք աչքի չենք ընկնում նաև օրինապաշտությամբ: Թե՛ պաշտոնական, թե՛ մասնագիտական մի շարք ոլորտներում գրագրությունների լեզուն դեռևս հայերենը չէ, իսկ այլալեզու ցուցանակների դեմ պայքարում լեզվի տեսչությունը առայժմ էական հաջողությունների չի հասնում:

Լեզվական աղճատումների մեջ իրապես էական դեր ունի այն հանգամանքը, որ թե՛ հասարակությունն ընդհանրապես և թե՛ անհատները անհրաժեշտ չափով չեն կարևորում գրական լեզվի կանոնների պահպանումը: Լեզվական ինքնավերահսկման թուլացումը գուցե պայմանավորված է առկա սոցիալ-տնտեսական իրավիճակով, հասարակական հոգեբանության մեջ կատարված տեղաշարժերով, ձևավորվող նոր հարաբերություններով: Ումանք էլ կարծում են, թե եկել է նաև լեզվական ազատությունների ժամանակը, իսկ գրական հայերենը իր օրենքներով այլևս հնացել է: Իրականում լեզուն իսկապես քարացած իրողություն չէ և շարունակ զարգանում ու փոփոխվում է: Եվ իրավացի է Վահան Տերյանը, երբ գրում է, որ «Լեզուն զարգանում է ազատ և չի կամենում հպատակվել լեզվաբանների պեղած հին օրենքներին և օրինակներին»: Սակայն լեզվի զարգացում ասելով՝ մաքրամաքուր հայերենով գոհարներ ստեղծող բանաստեղծը ամենևին էլ նկատի չունի կենդանի գործառող գրական լեզուն խոսակցական տարբերակով փոխարինելը: Լեզվի զարգացումը նշանակում է նաև բարբառների և խոսակցական լեզվի բառագանձի տարրերով ու արտահայտչամիջոցներով, անհրաժեշտ ու բարեհունչ փոխառյալ բառերով գրական լեզվի բառապաշարի շարունակական հարստացում, քերականական համակարգում նոր իրողությունների առաջացում և այնուհետև կանոնականի վերածում, աստիճանական

տեղաշարժեր հնչյունական համակարգում և այլն. սրանք իրողություններ են, որոնք ժամանակի ընթացքում իրոք անվերահսկելի են: Մակայն յուրաքանչյուր կոնկրետ պահի կենդանի գրական լեզուն՝ իբրև կայուն գործառոդ և միասնական համակարգ, ենթակա է կանոնարկման և մշակման, նաև՝ գրական ճանապարհով: Կարծես մեր օրերի համար են ասված նշանավոր հայագետ Անտուան Մեյեի հետևյալ խոսքերը. «Քաղաքակրթության որևէ լեզու, որ արդեն կազմավորվել է և ունի իր սեփական գրականությունն ու արտահայտման անհրաժեշտ բոլոր միջոցները, համառորեն հարստանում է նույնիսկ ամենադժվար պայմաններում: Դրա պերճախոս մի օրինակն է հայերենը»: Այնպես որ, եթե հասարակությունը և նրա անդամները գրական լեզվի հանդեպ հանդես են բերում անխնամ, անփույթ վերաբերմունք, ուրեմն հարկավոր է գործուն միջոցներով ազդել հասարակության լեզվական ինքնագիտակցության վրա՝ այդ գործին ծառայեցնելով ողջ կրթական համակարգը, լեզվին նվիրված հեռուստահաղորդումների շարքերը, հրապարակային ելույթներն ու հանդիպումները, տարաբնույթ միջոցառումները:

Մայրենիի նկատմամբ հասարակության վերաբերմունքը որոշակիորեն պայմանավորված է նաև գրական լեզվի մշակվածությամբ, համաշխարհային լեզվաքաղաքակրթության մեջ մայրենի լեզվի տեղի և դերի գիտակցմամբ, լեզվի տարբեր դրսևորումների մասին ճիշտ պատկերացումների առկայությամբ, լեզվի համակողմանի ուսումնասիրության ուղղությամբ տարվող աշխատանքների խորությամբ:

Արդի պայմաններում պետք է շարունակվեն աշխատանքները գրական հայերենի երկու ճյուղերի կանոնարկման ուղղությամբ, անհրաժեշտ է մշակել բառակերտման, տերմինաբանության, ուղղագրության և ուղղախոսության, տառադարձության և կետադրության կանոնարկման միասնական սկզբունքներ, ավելի խորացնել հայերենի համակողմանի ուսումնասիրությունը, օգտագործել գիտության արդի նվաճումները, տեղեկատվական բարձր տեխնոլոգիաները՝ ապահովելով հայերենագիտության մրցունակությունը բազմամշակույթ աշխարհում: Թե՛ գրական հայերենի կանոնարկման և թե՛ հայերենի համակողմանի ուսումնասիրության աշխատանքները առավել արդյունավետ կարող են լինել, եթե ընթանան հանրապետությունում գործող լեզվական ու հայերենագիտական բոլոր կենտրոնների համագործակցության պայմաններում և կրեն համակարգված բնույթ: Կարծում ենք՝ այդ իմաստով ՀՀ «Լեզվի մասին» օրենքի համապատասխան հատվածում ճիշտ կլինեք կատարել հետևյալ լրացումը. «Հայաստանի Հանրապետությունը նպաստում է հայերենի համակողմանի գիտական ուսումնասիրությանը»: Մայրենի լեզվի ուսումնասիրությամբ զբաղվող գիտությունը՝ լեզվաբանությունը, պետք է հոգաճու վերաբերմունքի արժանանա թե՛ պետության, թե՛ հասարակության կողմից, մինչդեռ հայերենագետները որպես կանոն իրենց աշխատությունները հրատարակելու հնարավորություն չեն ունենում, իսկ միջոցների սղության պատճառով շատ կարճ կյանք ունեցավ հանրապետությունում լույս տեսնող լեզվաբանական միակ՝ «Լեզու և լեզվաբանություն» հանդեսը: Մեր գիտությունը այսօր

երիտասարդ գիտնականների մեծ կարիք ունի, սակայն գիտնական դառնալու հեռանկարը չի ենթադրում անգամ կենսական տարրական պայմանների ապահովում: Իսկ եթե այնուամենայնիվ գտնվում են նվիրյալներ, ապա նրանց ճանապարհին անհաղթահարելի պատնեշի պես վեր է հառնում ամենագոր օտար լեզուն ու հաղթական հոխորտում՝ եթե հանդգնում ես զբաղվել մայրենի լեզվի դուստմնասիրությամբ, մայրենիից առավել ինձ պետք է տիրապետես: Ջավեշտ է, ինչ խոսք: Իրականում մենք ամենևին դեմ չենք գիտնականի՝ օտար լեզուների իմացությանը. համընդհանրայնացող աշխարհում յուրաքանչյուր մարդ կարիք ունի օտար լեզուների իմացության: Բայց արդյո՞ք այսօր մեր դպրոցներում, այն էլ՝ շրջանների, օտար լեզուն ուսուցանվում է այնպիսի մակարդակով, որ երիտասարդներին թույլ տա բուհական համակարգում որոշ խորացումից հետո հանձնել նման բարդության ասպիրանտական քննություն: Եվ քանի որ պատասխանը պարզ է, ուրեմն կրթական համակարգի պատասխանատուներին առաջարկում ենք մտահոգվել այս հարցով և գտնել հարցի լուծման խելամիտ տարբերակ:

Արդի լեզվաքաղաքականության առաջնահերթ խնդիրներից է արևմտահայերենի պահպանության և զարգացման հարցը: Հայաստան աշխարհը բոլոր հայերի հայրենիքն է, իսկ հայերենը իր բոլոր դրսևորումներով բոլորիս մայրենին է: Հետևաբար Հայաստանում գրական արևմտահայերենը արևելահայերենին հավասարազոր իրավունքներ ունի, մանավանդ որ ըստ ՀՀ Սահմանադրության՝ մեր երկրում պետական լեզուն հայերենն է, այլ ոչ թե արևելահայերենը: Ցավոք, արևմտահայերենը այսօր ստիպված է դիմագրավել մի շարք մարտահրավերների. հասկանալի պատճառներով այն զրկված է միասնական գործառության ու զարգացման, հետևաբար նաև՝ կանոնարկման հնարավորությունից, գրեթե չկան սփյուռքում հայերենի ուսուցման միասնական ծրագրեր, դասագրքեր ու մեթոդական մշակումներ, նոր սերնդի շարքերում շարունակ նվազում է հայախոսների թիվը, հայ երեխաների միայն մի մասն է հաճախում սփյուռքի լիօրյա դպրոցներ և այլն: Փաստորեն սփյուռքը, զուրկ լինելով պետական կառավարման լծակներից, հայրենիքից դուրս չի կարող միավորվել և հաջողությամբ շարունակել իր գոյապայքարը: Բարեբախտաբար մեր պետականությունը ստեղծում է պայմաններ, որպեսզի Հայաստանը դառնա սփյուռքը միավորող, համայն հայությունը միավորող կենտրոն՝ վճռական դերակատարություն ունենալով սփյուռքի հայապահպանության գործում: Այս ուղղությամբ բավականին քայլեր արդեն արվել են: Իր ստեղծման օրից Սփյուռքի նախարարությունը մեծ ջանքեր է գործադրել արտերկրի հայ համայնքներում մայրենի լեզվի իմացության և պահպանության խնդիրների ուղղությամբ, ներկայումս նաև կրթական էական օժանդակություն է ցուցաբերում սիրիահայ համայնքին: Նախարարության ջանքերով երևանյան մի շարք բուհերում ստեղծվել են արևմտահայերենի ուսումնասիրության կենտրոններ: Վերջերս Սփյուռքի նախարարությունը դիմել է ՀՀ ԳԱԱ նախագահին՝ առաջարկելով քննարկել Հ.Աճառյանի

անվան լեզվի ինստիտուտում արևմտահայերենի ուսումնասիրության բաժին կազմավորելու հարցը, և մենք արդեն ստացել ենք համապատասխան հանձնարարական: Այդպիսով հնարավորություն է ստեղծվելու կատարելու սփյուռքի լեզվավիճակի համալիր ուսումնասիրություն ու վերլուծություն, գրական արևմտահայերենի կանոնարկում, արևմտահայերենի ամբողջական բառարանի և ակադեմիական քերականության ստեղծում, գրական լեզվի երկու ճյուղերի տերմինաբանության և ուղղագրության հարցերի գիտական կանոնարկում, արևելահայերենի և արևմտահայերենի փոխադարձ հարստացման ուղիների մշակում, նաև սփյուռքի հետ գիտակրթական կապերի ամրապնդում: Կարծում ենք՝ արևմտահայերենի ուսումնասիրության հայաստանյան կենտրոնները, ինչպես նաև արտերկրի հայազիտական կենտրոններն ու հայերենագետները ի զորու են միասնաբար լուծելու առաջադրված և օրակարգային այլ խնդիրներ՝ ուղենիշ ունենալով Դանիել Վարուժանի հետևյալ միտքը. «... ըսենք թե երկու բարբառներու՝ արևելյան և արևմտյան, և իրենց ուրույն գրականություններուն հավասարագոր գոյությունը ոչ մեկ անպատեհություն չունենալե զատ՝ ան հայ ցեղին հոգեբանության զանազան երեսները ցույց կուտա ու անոր այլազան կարողություններն ու գեղեցկությունները կը պրիսմակե: ... երկու բարբառները արգելք մը չեն, որ հայ տարրին երկու հատվածները զգացումով, իտեալով, հոգեբանությամբ ներդաշնակ ապրին իրարու հետ: Եվ ո՞չ ապաքեն ամենն ավելի գեղեցիկ ներդաշնակությունը զանազանության մեջ կը հորինվի»:

Հարգելի բարեկամներ, ես գիտեմ, որ առաջադրված և մայրենիին առնչվող այլ խնդիրներ բոլորիդ են մտահոգում, ձեզանից շատերը բազմիցս բարձրաձայնել են դրանց մասին, սակայն սայլը, կարծես թե, տեղից չի շարժվում: Ուրեմն եկեք միասին և հետևողականորեն փորձենք այդ սայլը տեղաշարժել: Մեր այս գիտաժողովի նպատակն է ոչ միայն վեր հանել առկա խնդիրները, այլ նաև սկիզբ դնել լեզվական խնդիրները միասնաբար քննարկելու և դրանց լուծմանը նպաստելու գործընթացին: ԳԱԱ լեզվի ինստիտուտը պատրաստակամ է պարբերաբար կազմակերպելու առկա խնդիրների քննարկումներ, որոնց արդյունքում կարող են ծնվել առաջարկություններ, գտնվել լուծման ուղիներ, որոշվել հարցեր: Համոզված եմ՝ մայրենին մտավորականների համախմբման և նվիրյալ ու ջանադիր աշխատանքի կարիքն ունի: Եվ ցանկանում եմ խոսքս ավարտել երջանկահիշատակ Վազգեն Առաջին հայրապետի կոչով. «Ո՛վ հայ ժողովուրդ, հայրենիքեն ներս, թե ի սփյուռս աշխարհի, արթնցի՛ր և միացի՛ր ու իմաստությամբ վարե կյանքդ, իմաստությամբ գործե: Մի՛ մոռնար, որ Օշականեն հսկող Մեծ Վարդապետը քեզի համար թարգմանեց «Ճանաչել զիմաստութիւն և զիւրաս, իմանալ զբանս հանճարոյ»»:

ՍԵՐԳՈՒ ԵՐԻՑՅԱԼ

ՀՀ ԿԳՆ լեզվի պետական տեսչության պետ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԼԵԶՎԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Այսօր, երբ խոսք է բացվում լեզվի և նրա հիմնախնդիրների վերաբերյալ, առաջին հերթին մեր առջև ծառանում է լեզվական քաղաքականության զարգացման ծրագրի բացակայությունը: Մի փորձ եղել է, և ՀՀ կառավարությունը 2002 թվականին ընդունել է 2002-2005 թվականների զարգացման ծրագիրը: Իսկ ավարտից հետո ծրագիրը որևէ շարունակություն չի ունեցել: Մտածել, որ այդ ծրագրով լուծվել են լեզվական բոլոր հիմնախնդիրները, ծիծաղելի կլինի: Պարզապես երևի հասկացել են՝ եղած և հնարավոր ծրագրերը ավելի հիմնարար ու ամբողջական պետք է լինեն, ապահովված ֆինանսական միջոցներով և ոչ թե լինեն հայտարարությունների տեսքով: Կամ այլ խոսքով՝ բարի ցանկություններ լինեն: Գո՞ւցե և այս մտայնությունն է պատճառ դարձել, և այսօր մենք չունենք այն ծրագիրը, որն ավելի քան անհրաժեշտ է, որ ոչ միայն ականջալուր լինենք դրան և առաջ շարժվենք այդ ծրագրի դրույթներով, այլև մի վերջին հաշվով հասկանանք, թե ի՞նչ բնութագրիչներ պետք է ունենա նման ծրագիրը, ի՞նչ ժամանակահատված պետք է ընդգրկի և ի՞նչ հիմնախնդիրներ ներառի: Կամ կարելի է առաջ շարժվել կյանքի այլ ոլորտներում այսօր գոյություն ունեցող պետական ծրագրերի պրակտիկայով, երբ նախանշվում են առաջիկա 5-10 տարիների հիմնական անելիքները տվյալ բնագավառում, փորձում են նաև որոշ ֆինանսական ապահովվածություն ունենալ:

Երբ անցած տարի ուսումնասիրում էինք Լիտվայի մեր գործընկերների լեզվի բնագավառում գործունեությունը, միանգամից մեզ ներկայացրին մի մեծ ծրագիր և 3 ենթածրագիր: Առաջին ծրագիրն առնչվում էր առաջիկա 10 տարիների ընթացքում լեզվի հիմնարար խնդիրներին, իսկ 3 ծրագրերը ենթադրում էին 2-3 տարվա գործունեություն՝ տարբեր հրատապ խնդիրներով: Հիմա մենք այս և նման ծրագրեր չունենք, չունենք նաև դրանք իրականացնելու գործառնություններ ունեցող պետական մարմին: Լեզվի պետական տեսչությունը կոչված է միայն վերահսկողություն իրականացնելու: Այս և նման գործոնները, այսպիսի գործելակերպը բերել են մի վիճակի, երբ ոչ միայն լեզվի զարգացման ծրագիր չկա, այլև վտանգված են լեզվականոնարկման, լեզվաշինության խնդիրները: Տերմիանաբանական խորհրդի գործունեությունը 6-7 տարի փակուղում է հայտնված, քանի որ անընդհատ պնդում են, որ դրա որոշումները պետական գրանցում պետք է ստանան ՀՀ արդարադատության նախարարությունում, բայց գործող օրենքները

թույլ չեն տալիս դա անել, իսկ օրենքն էլ փոխել չեն ուզում, չնայած վաղուց կա դրա նախագիծը: Եվ, ընդհանրապես, վախ կա որևէ բան փոխելու լեզվին առնչվող օրենսդրությունում: Անկասկած, դա լեզվի նկատմամբ հարգանքից ու պատկառանքից չէ: Չեմ կարծում, որ նրանք սպասում են, թե երբ պետք է գա 2013 թվականի ապրիլի 17-ը և նշեն «Լեզվի մասին» ՀՀ օրենքի ընդունման 20-րդ տարին: Այստեղ թիվ մեկ ընդդիմախոսը ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն է, որը համարում է, թե երկրի զարգացող տնտեսությունը կքանդվի, եթե որևէ մեկը որևէ կերպ պաշտպանի մայրենին: Այդ դեպքում առաջին պլան է գալիս տնտեսությունը, և միակ խանգարիչ գործոնը հայոց լեզուն է: Ահա այստեղ է, որ նրանք ասում են՝ ի՞նչ լեզվաքաղաքականության ծրագիր, այն քանդում է երկիրը, ի՞նչ տերմինաբանական կոմիտե, այն խառնաշփոթ է առաջացնում: Դա տնտեսությանը վնասներ կբերի, մեկ էլ տեսար՝ մեր տնտեսությունը գահավիժեց: Եվ այսպես շարունակ:

Այսպես մտածում են ու արդեն երկրորդ տարին է, որ լեզվին առնչվող օրենքները («Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականության, Հայաստանի Հանրապետության լեզվական վերահսկողության և Հայաստանի Հանրապետության լեզվի պետական տեսչության մասին», «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին») շրջապտույտի մեջ են, այդպես էլ ՀՀ կառավարությունից դուրս չեն գալիս, որ բռնեն ՀՀ Ազգային ժողով տանող բաղձալի ճանապարհը: Եվ այս ամենի արդյունքում մինչև հիմա չունենք օրենք ՀՀ լեզվի պետական տեսչության մասին:

Այդ ամենի արդյունքում կյանքի առանձին ոլորտներ ընդհանրապես դուրս են մնում վերահսկողությունից: Օրինակ, եթերի լեզուն, որի վերահսկումը վերապահված է ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովին: Այստեղ ոչ միայն մանրուքներ չկան, այլև օրենքը որևէ պատասխանատվություն չի սահմանում հեռուստառադիոթերի լեզվական խաթարումների համար:

Օրենսդրական բացերը բերում են դատական քաջքշուկների, աշխատուժի ավելորդ վատնման, տարընթերցումների, սողանցքների օգտագործման, որը խաթարում է լեզվի առանց այն էլ փխրուն աստղձը: Մեկ-երկու տարի առաջ կարծես թե մտադրություն կար փոխել այն, ինչ կա, ավելացնել, ընդլայնել լեզվի պետական տեսչության գործառույթները: Դեռ ավելին, այն հասցնել Լեզվի պետական կոմիտեի կարգավիճակի, երբ լեզվին առնչվող գործառույթների զարգացումները թույլ կտային

ունենալ առկա ծանրացող խնդիրների համապարփակ, կոնկրետ և հասցեական լուծումներ: Մակայն սայլը այդպես էլ տեղից չի շարժվում:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՔԱՐՅԱՆ

«Տաթև» գիտակրթական համալիր, ՀՊՄՀ,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՀՀ ԼԵԶՎԱՎԻՃԱԿԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայ պատմամշակութային ժառանգության առանցքային բաղադրիչը և հիմնական հենասյունը հայոց լեզուն է, որ ձևավորվել և ներկայիս իր զարգացմանն է հասել նախ և առաջ Հայկական լեռնաշխարհում:

Հայոց լեզվի հարատևության երաշխիքը նրա անխափան կիրառության ու զարգացման որոշակի պայմանների ապահովումն է: Հայ ազգի հարատևման ապահովումը հանձն առած և հայոց լեզուն պետական հոչակած երկու պետություն՝ Հայաստանի և Արցախի Հանրապետությունները, պարտավոր են իրենց տարածքում այնպիսի լեզվավիճակ ապահովել, որ հայերենը զարգանա ժամանակի պահանջներին համապատասխան և լինի այնքան մրցունակ, որ լիարժեք ապահովի այդ երկրների ազգաբնակչության, ինչպես նաև հայախոս սփյուռքի լեզվական ներքին հաղորդակցումը և հիմք ծառայի էլեկտրոնային միջոցներով նաև արտաքին հաղորդակցման համար:

Ինչպես հայտնի է, լեզվավիճակը որևէ տարածքում (տարածաշրջան, երկիր, բնակավայր) պատմական որոշակի պահի կիրառվող լեզուների ու դրանց տարբերակների քանակական, որակական, գործառական բնութագրերի և փոխհարաբերությունների ամբողջությունն է:

Լեզվավիճակը ամրագրվում ու պահպանվում է լեզվական օրենսդրությամբ, կառավարվում լեզվաքաղաքականությամբ և կարգավորվում լեզվաշինությամբ: Դա պետականաստեղծ գործունեության կարևոր բաղադրիչներից մեկն է, որ պահանջում է համապատասխան հայեցակարգ, ռազմավարություն, կառավարման հատուկ մարմին և իրականացման ենթակառուցվածք: Իսկ ամենից առաջ պետք է ունենալ առկա լեզվավիճակի ճշգրիտ պատկերը՝ որպես ուսումնասիրության առարկա և համապատասխան քաղաքականության մշակման ելակետ:

Հայաստանի (ՀՀ-ի, ԼՂՀ-ի, պատմական Հայաստանի այլ տարածքների) և հայոց սփյուռքի լեզվավիճակի ուսումնասիրությունը, նկարագրությունը, նրա ամբողջական պատկերի ստեղծումը, նրա հեռանկարների կանխատեսումը և դիմակայելիք վտանգների վերլուծությունը կարևոր են հայ ժողովրդի և նրա մշակույթի պահպանման ու զարգացման գերակայությունների ճշտման, արդի մարտահրավերներին համապատասխան գիտականորեն հիմնավորված մոտեցումների և գործողությունների միասնական ծրագրի մշակման, ռազմավարական ծրագրերի նախապատրաստման առումներով:

Հայաստանի ներկայիս լեզվավիճակին ընդհանուր առմամբ բնորոշ է խոցելիությունը: Դա պայմանավորված է աշխարհաքաղաքական իրավիճակով, մասնավորապես փոքր երկիր լինելով, երկիր, որ թիրախ է ծավալապաշտ մի շարք երկրների համար (Ռուսաստան, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա, Թուրքիա և այլն), որոնք փորձում են իրենց լեզուն ու մշակույթը տարածել այնտեղ ու պարտադրել նրա ժողովրդին: Իսկ Վրաստանն ու Ադրբեջանը շարունակում են կողոպտել Հայաստանի մշակույթը, մարդկային և նյութական պաշարները: Խոցելիությունը հետևանք է նաև երկրի թուլության, ժողովրդի լեզվամշակութային, բարոյաքաղաքական ու հոգեբանական պառակտվածության և ընկճվածության:

Հայաստանի լեզվավիճակը **բազմալեզու** է (գործածվում են հայերենը, ռուսերենը, անգլերենը, քրդերենը, նաև ասորերենը, հունարենը և այլն), **միաբնեռ** (կա մեկ գերիշխող լեզու), **տարակարգավիճակ** (մեկ լեզու պետական է, հինգը՝ ռուսերենը, ասորերենը, հունարենը, քրդերենը, եզդիերենը, փոքրամասնությունների), **աններդաշնակ** (լեզուների տարածվածությունը համամասնական չէ դրանց ժողովրդագրական հիմքին), **կարգավորվող** (կան լեզվաքաղաքականություն իրականացնող մարմիններ, օրենքներ), **գրային** (անգիր լեզու չկա), համեմատաբար **հանդուրժողական** (խտրականություն, ճնշումներ չկան), համեմատաբար **կայուն** (կտրուկ փոփոխություններ չեն նկատվում):

Գերիշխող լեզուն հայերենն է, որ ունի պետական-պաշտոնական կարգավիճակ, բնիկ է, հիմնական ազգի մայրենի լեզուն է, բազմագործառույթ է, ունի իր սեփական ու յուրահատուկ գրային համակարգը, ազգային կրթական համակարգ, հազարամյակների ավանդույթ, պաշտպանված է սահմանադրությամբ, լեզվի մասին օրենքով, լեզվի պետական տեսչությամբ, «Հայերենի զարգացման պետական ծրագրով»:

ՀՀ-ում կիրառվող լեզուներն ունեն նաև գործառական որոշ բաշխում: Ռուսերենը և անգլերենը տարածված են գիտության, տեխնիկայի, վարչական, դիվանագիտական, զանգվածային լրատվության, գովազդի ոլորտներում: Կան ռուսախոս համայնքներ (մոլդկաններ) և ընտանիքներ (ռուսների, հայերի, ուկրաինացիների, գերմանացիների, իսառը և այլն): Քրդերենը ներընտանեկան և ներհամայնքային խոսակցական լեզու է եզդիների համար, ասորերենը՝ ասորիների մի մասի համար: Մնացած լեզուները ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, հունարեն) գործառության զգալի ոլորտներ չունեն: Ռուսերենը, քրդերենը, ասորերենը՝ որպես ազգային փոքրամասնությունների լեզուներ, դասավանդվում են դպրոցում: Անգլերենը, ֆրանսերենը, գերմաներենը, իսպաներենը, պարսկերենը չունեն ազգային համայնքներ, դասավանդվում են դպրոցում: Ռուսերենը նաև ազգամիջյան և միջազգային հաղորդակցման լեզու է: Կա ոչ այնքան ռուսերենը պաշտպանելու, որքան ռուսերենից պաշտպանվելու կարիք: Անգլերենը միջազգային հաղորդակցման լեզու է: Հայաստանում նա ներխուժող և տարածվող լեզու է: Նա արդեն անհարկի մեծ տեղ է գրավում արտաքին գովազդում, ցուցանակներում, ապրանքապիտակների վրա, ապրանքային նշաններում, ինչպես

ռուսերենը՝ ավելի պակաս չափերով: Ռուսերենը զգալի տեղ ունի նաև զանգվածային լրատվության միջոցներում:

ՀՀ լեզվավիճակը բնորոշվում է նաև բարբառային չափավոր տարբերակվածությամբ, բարբառների մեծ մասի մահացմամբ, գրական և խոսակցական լեզուների մեծ խզումով: Հայերենի հանրային և գործառական-ոճական տարբերակումը չափավոր է: Հայերենի վրա համակարգային ազդեցություն է թողնում ռուսերենը: Խոսակցական հայերենը, փոխանակ մերձենալու գրականին, ներխուժում է զանգվածային լրատվամիջոցներ, թատրոն, կինո:

Հայաստանում հայերեն-ռուսերեն և հայերեն-անգլերեն երկլեզվությունը հանրային մակարդակի են, հայերեն-քրդերեն, հայերեն-ասորերեն երկլեզվությունը՝ համայնքային մակարդակի, այլ տիպի երկլեզվությունները՝ անհատական մակարդակի: Հայերեն-ռուսերեն երկլեզվությունը հիմնականում **լրացական** է (մի լեզուն լրացնում է մյուսին), **բազմոլորտ** (ամեն լեզու սպասարկում է մեկից ավելի ոլորտ), **փոխկապակցված** (մեկը մյուսի վրա հիմնված), մասամբ **դիպվածային** (երկրորդ լեզուն գործածվում է երբեմն) և մասամբ **կամընտրական** (երկրորդ լեզուն գործածվում է ըստ ցանկության, ոչ պարտադրաբար): Հայերեն-անգլերեն երկլեզվությունը **կրկնորդային** է (անգլերենը չունի յուրահատուկ ոլորտ), սովորաբար **միոլորտ** (մասնագիտության հետ կապված), **փոխկապակցված**, առավելապես **դիպվածային** և մասամբ **պարտադիր** (հարկադրված): Հայերեն-քրդերեն երկլեզվությունը լրացական է, միոլորտ, մեկուսացած (քրդերենը սովորում են հայերենից անկախ), **կանոնավոր** (հաճախադեպ) և պարտադիր: Հայերեն-ասորերեն երկլեզվությունը կրկնորդային է, միոլորտ, փոխկապակցված, դիպվածային և կամընտրական:

Հայաստանի լեզվավիճակի բնորոշ կողմերից է նաև լեզվական օրենսդրությամբ նախատեսվածի, պահանջվածի և իրականության մեծ խզումը: Դա նշանակում է, որ մեծ չափերի են հասնում լեզվական օրենսդրության խախտումները, որոնցով գրեթե բացառապես ոտնահարվում են պետական լեզվի շահերը: Փաստորեն լեզվական օրենսդրության մեջ չկա պետական լեզվի իրավունքները պաշտպանող հոդված, կետ ու ենթակետ, որ չխախտվի զանգվածաբար ու անպատիժ կերպով:

Հայաստանի ժողովրդագրական իրավիճակն այսպիսին է: Ազգաբնակչության 97 %-ը հայեր են, մնացած 3 %-ը՝ եզդիներ, քրդեր, ռուսներ, ասորիներ, հույներ, ուկրաինացիներ, գերմանացիներ, հրեաներ և այլն: Քրդերի ու եզդիների համայնքները հիմնականում քրդախոս են: Ասորիների համայնքի մի հատվածը մասամբ ասորախոս է: Հույների համայնքի մի փոքր հատված մասամբ հունախոս է: Ռուսների համայնքը գրեթե լիովին ռուսախոս է՝ երբեմն առանց պետական լեզվի՝ հայերենի իմացության: Սակայն ռուսախոսությունը այդքանով չի սահմանափակվում: Ռուսախոս են նաև քաղաքաբնակ հայերի 10-12 %-ը, ասորիների և հույների զգալի մասը, ուկրաինացիների, հրեաների մեծ մասը: Սա նշանակում է, որ ռուսախոսությունը Հայաստանում տարածված է պետական

լեզվի հաշվին: Ըստ ՀՀ օրենսդրության և միջազգային համաձայնագրերի՝ պետությունը պաշտպանում է ազգային փոքրամասնությունների լեզուները համապատասխան ազգային համայնքների շրջանակներում: Մակայն ռուսերենը՝ որպես նախկին խորհրդային կայսրության պաշտոնական լեզու, Հայաստանում շարունակում է մնալ ոչ ռուս բնակչության զգալի հատվածի առաջին լեզու: Հետևաբար խնդիր կա, որ այդ զանգվածի առնվազն հայազգի հատվածի համար առաջին լեզու դառնա հայերենը, իսկ ռուսերենը մնա որպես 2-րդ լեզու: Մա, իհարկե, ժամանակի հարց է, եթե չլինեն արտաքին ճնշումներ ու պարտադրանքներ, որոնց պատճառով ռուսախոս զանգվածը ոչ միայն պահպանում է իր ներկա վիճակը, այլև մասամբ հակված է ռուսախոսությունը փոխարինելու անգլախոսությամբ:

Ոչ ռուսների ռուսախոսությունը որոշ վերապահումով արդարացված է միայն ասորիների դեպքում, քանի որ ասորալեզու պետության բացակայության պայմաններում ռուսախոսությունը մասամբ նպաստում է, որ նրանք պահպանեն իրենց ազգային ինքնությունը և չձուլվեն հայերին:

Հեռանկարում կա անգլախոսության տարածման վտանգ: Անգլերենը Հայաստանում բացարձակապես չունի ազգային հիմք (համայնքի առկայություն): Նրա տարածումը արտաքին տնտեսական, քաղաքական և մշակութային ճնշման հետևանք է: Հայաստանում արդեն կան հիմնարկներ (առավելապես օտարերկրյա ոչ արտադրական ու ոչ առևտրային գրասենյակներ ու մասնաճյուղեր), որոնցում գործավարությունը և պաշտոնական հաղորդակցումը անգլերեն է: Այդտեղ գործի ընդունում են միայն անգլերենի գերազանց իմացությամբ և վճարում են գայթակղիչ բարձր: Այսինքն՝ անգլերենը (ինչպես ռուսերենը՝ խորհրդային տարիներին) դառնում է սոցիալական առաջխաղացման և բարեկեցության գործոն:

Եթե Խորհրդային Միությունը գոյատևեր ևս 50 տարի, Հայաստանը լիովին լեզվափոխ կլիներ՝ ռուսալեզու կդառնար: Նույն վտանգը կա անգլերենի դեպքում, եթե կանխարգելիչ լեզվաքաղաքականություն չիրականացվի: Մինչդեռ, ինչպես կտեսնենք ստորև, պետությունը կատարում է անգլախոսության և ընդհանրապես օտարախոսության տարածմանը նպաստող խիստ վտանգավոր քայլեր:

Պետական լեզվով կրթական միասնական համակարգը ռազմավարական նշանակություն ունի ցանկացած պետության համար: Այս սկզբունքը տեղ է գտել ՀՀ անկախության հռչակագրում: Արտաքին ճնշումները, սակայն, 3 տարի առաջ մեր իշխանություններին ստիպեցին շեղվել այդ սկզբունքից:

Մինչև 2010 թ. ՀՀ կրթական համակարգը հիմնականում հայալեզու էր: Իրենց ազգային լեզվով միջնակարգ կրթություն կարող էին ստանալ միայն ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները, նաև բարձրագույն կրթություն՝ ռուսները: Սահմանափակ թվով կային օտարալեզու բարձրագույն ուսումնական հաստատություններ կամ դրանց բաժանմունքներ: Համենայն դեպս Հայաստանի

հայազգի քաղաքացիների օտարալեզու միջնակարգ կրթությունը օրենքով բացառված էր: 2010 թ. ՀՀ Ազգային ժողովը կառավարության առաջարկով փոփոխություններ կատարեց ՀՀ «Լեզվի մասին» և «Կրթության մասին» օրենքներում՝ վերացնելով այդ սկզբունքային սահմանափակումը: Այս նահանջ քայլով խարխլվում են պետական լեզվի, ազգային դպրոցի հիմքերը: Դրա հետևանքով հայ ազգը դատապարտվում է օտարախոս և հայախոս հատվածների պառակտման, ազգի սերուցքի օտարման ու արտագաղթի: Դա կարող է հանգեցնել ազգի արագացված վերասերման և վերացման, քանի որ օտարախոսությունը կդառնա սոցիալական առաջխաղացման նախապայման և խթան:

Տվյալ երկրի կրթական համակարգի միասնականությունն ու կենտրոնացվածությունը նպատակ ունեն ապահովելու երկրի քաղաքացիների համար կյանքի ու գործունեության հավասար պայմաններ ու հնարավորություններ, բացառելու կրթական ու լեզվական խտրականությունը, պատրաստելու տվյալ երկրի լիարժեք քաղաքացիներ, երաշխավորելու տիրապետող ազգի ու նրա մշակույթի հարատևությունը:

Մինչդեռ օտարալեզու դպրոցում հանրակրթական առարկաները օտար լեզվով ուսումնասիրած շրջանավարտը դժվարանալու է հայալեզու բուհում սովորել և պահանջելու է օտարալեզու բուհեր ստեղծել, որն ավարտելուց հետո դժվարանալու է աշխատել մեր երկրում, որտեղ պետական լեզուն հայերենն է: Հետևաբար նա կա՛մ պիտի գնա այլ երկրում աշխատելու, կա՛մ պիտի պահանջի փոխել երկրի պետական լեզուն: Երկուսն էլ կորուստ են ազգի համար:

Պատմական փորձը ցույց է տալիս, որ երբ հայության որևէ հատված սկսում է ստանալ օտարալեզու կրթություն, արագորեն լեզվափոխ է լինում, ձուլվում և ի վերջո վերանում է: Այլապես հայերի թիվն աշխարհում կլիներ ոչ թե 10-12 մլն՝ այն էլ մեծ մասը ոչ հայախոս ու ձուլման ընթացքի մեջ, այլ 130-150 մլն:

Հետևաբար, ինչպես խորհրդային տարիներին, դարձյալ հրատապ է դարձել հայալեզու կրթության այլընտրանքների սահմանափակման անհրաժեշտությունը:

Միջազգային քաղաքական իրավիճակի հետ կապված՝ հայերենը ներկայումս ունի մրցունակության բարձրացման ու պետական պաշտպանվածության ուժեղացման անհրաժեշտություն:

Կենսական տարածքների և ազդեցության ոլորտների համար ազգերի ու պետությունների միջև մշտական հակամարտությունը դրսևորվում է նաև լեզվամշակութային պատերազմների ձևով: Այդ պատերազմներին զոհ են գնացել բազմաթիվ լեզուներ ու մշակույթներ՝ իրենց ժողովուրդների հետ միասին: Ներկայումս այդ պատերազմը ստացել է համամոլորակային բնույթ: Ամենից խոցելին մեզ նման փոքր ազգերն են, քանի որ աշխարհում պարբերաբար տեղի են ունենում **քաղաքակրթական հեղափոխություններ**, որոնք կտրուկ փոխում են պատերազմի զինանոցը, պայքարի միջոցները: Ամեն մի հեղափոխություն կապված է լինում տեղեկույթի մշակման,

տարածման ու փոխանակման մի նոր, ավելի արդյունավետ արտադրաբանության (տեխնոլոգիայի) հետ, որից առաջինն օգտվողները մեծ նվաճումների են հասնում, իսկ չօգտվողները կանգնում են իրենց լեզուն ու մշակույթը կորցնելու և ինքնությունից զրկվելով՝ ձուլվել-վերանալու վտանգի առջև: Այդպիսի միջոցներից են *գիրն ու գրականությունը, գիրքը, տպագրությունը, զանգվածային լրատվամիջոցները, հեռահաղորդակցումը, տեղեկույթի մշակման, պահպանման, տարածման ու փոխանակման թվային միջավայրն ու էլեկտրոնային ցանցերը:*

Հին ժամանակներում և միջնադարում հայերը կարողացել են երբեմն առաջիններից, երբեմն որոշ հապաղումով հետևել քաղաքակրթական զարգացումներին՝ պահպանելով իրենց լեզուն ու մշակույթը:

Հայաստանում ստեղծվել և գործածվել են գրի հնագույն ձևերը՝ պատկերագրերը (այծագրեր), գաղափարագրերը (մեհենագրեր), սեպագրերը (վանկագրեր): Առնվազն 5-րդ դարից հայերենը հնչյունագրական կատարյալ համակարգով լիարժեք գրավոր լեզու է, որով ստեղծվում էին ձեռագիր մատյաններ, թարգմանվում-հայերենացվում էին ժամանակի մտքի կարևորագույն նվաճումները, առաջացավ ինքնուրույն մատենագրություն՝ հետաքրքիր, բազմազան ու բարձրարժեք դրսևորումներով:

Միջնադարում Հայաստանում ևս ստեղծվեցին համալսարաններ, որոնցում հայոց լեզվով բարձրագույն կրթություն էին ստանում և պատրաստվում ժամանակի պահանջներին համապատասխան գիտնականներ, կրոնական և քաղաքական գործիչներ, ստեղծագործողներ:

Տպագրության գյուտից վեց տասնամյակ անց՝ 1512 թ., լույս տեսավ առաջին հայերեն տպագիր գիրքը: Կարճ ժամանակ անց արդեն լույս էին տեսնում ոչ միայն հայերեն գրքեր, այլև լրագրեր, հանդեսներ: Դրա շնորհիվ հայալեզու զանգվածները մեծապես պաշտպանված մնացին այլալեզու մշակութային ներխուժումներից և իրենց հայախոսությամբ բնավ էլ նվաստացած չզգացին իրենց այլ ազգերի կողքին:

Հայերը իրենց ինքնատիպ գրի շնորհիվ նույնիսկ ավելի պաշտպանված էին, քան եվրոպական մի շարք ազգեր, որ լատինական գիրը փոխառած լինելու պատճառով ավելի խոցելի էին լատինալեզու, ֆրանսալեզու, հետագայում նաև անգլալեզու մշակույթների կողմից: Պատահական չէ, որ գերմանացի իմաստասեր Հեգելը 18-րդ դարի վերջին գրում էր. «Կրթության բարձրագույն գործոններից մեկը *սեփական* լեզվով խոսելն է: Ժողովուրդը պատկանում է ինքն իրեն: Կորչի՝ ամեն մի օտար բան, ընդհուպ մինչև լատինական տառերը»¹:

19-20-րդ դարերում հայերենով հնարավոր եղավ այս կամ այն չափով իրականացնել նաև զանգվածային հաղորդակցման և տեղեկատվության նոր ձևերը՝

¹ Гегель, Работы разных лет, Т.2, М., 1971, с., 547.

հեռագիր, ձայնասփյուռ, հեռուստատեսություն, վերջին ժամանակներում՝ նաև էլեկտրոնային փոստ և համացանց (ինտերնետ):

Համակարգչային հաղորդակցման տարածումով մարդկությունը ոտք է դնում *նորբանահյուսական դարաշրջանի* շեմին: Ստեղծվում է մշակութային և ընդհանրապես քաղաքակրթական գործունեության նոր՝ **էլեկտրոնային միջավայր**: Մշակութային այս նոր հեղափոխությունը շատ բան կարող է փոխել թե՛ մարդկային հոգեբանության ու մտածողության մեջ, թե՛ ազգերի խճանկարում:

Ազգերի, նրանց լեզուների ու մշակույթների գոյատևման նոր մարտահրավերներ են նետված աշխարհակալության ձգտող անգլալեզու մշակույթի կողմից: Այդ մարտահրավերներն ընդունողները և համակարգչային համաշխարհային ցանցերում իրենց լեզվով լիարժեք մուտք գործողներն իրենց համար կստեղծեն ազգային անվտանգության կայուն և երկարատև երաշխիքներ:

Այսօր իրենից օգտվող հանրությանը ամենից լիարժեք կարողանում է սպասարկել անգլերենը՝ հատկապես էլեկտրոնային միջոցներով առաջարկելով ամեն տարիքի, ամեն ճաշակի, ամեն պահանջարկի բավարարող ամենաբազմազան տեղեկույթ: Նրա օրինակին փորձում են հետևել ֆրանսերենը, գերմաներենը, ռուսերենը, լեհերենը, իսպաներենը, արաբերենը, հնդկերենը, չինարենը և այլն:

Որպեսզի այս լեզուների կողքին հայերենը մրցունակ լինի և գոյատևի, պետք է հայախոսներին առաջարկի հավաստի, հետաքրքիր և հրատապ ուսումնական, տնտեսական, քաղաքական, գիտական, մշակութային, զվարճալի և այլ կարգի տեղեկատվություն: Այս խնդիրը պահանջում է տեղեկույթի մշակման ու փոխանակման էլեկտրոնային միջավայրում և հատկապես համացանցում հայալեզու բովանդակության առաջանցիկ զարգացում՝ օրենսդրական ու վարչական լծակներով ներգրավելով գիտական, կրթական, մշակութային, տնտեսական և այլ բնույթի կազմակերպություններ ու անհատներ:

Չի կարելի ասել, թե դեռ ոչինչ արված չէ այս ասպարեզում: Ստեղծվել են առաջին անհրաժեշտության հայերեն համակարգչային ծրագրեր: Համացանցում հայերենով տեղեկատվության ծավալը դանդաղ, բայց անշեղորեն աճում է: Ստեղծվում են ուսումնական, գիտական, գերատեսչական և այլ բնույթի կայքեր, գրադարաններ, ձայնադարաններ, պատկերադարաններ, տարաբնույթ շտեմարաններ, հանրագիտական և այլ կարգի տեղեկատուներ: Գոյություն ունեն հայերենով որոնման համակարգեր և տառաճանաչ, սրբագրիչ, թարգմանիչ ծրագրեր, բառարաններ: Համացանցում տեղադրված են մի շարք հայալեզու լրագրեր:

Ահա այն ամենը, ինչ կարելի էր անել խանդավառության, անհատների ու կազմակերպությունների նախաձեռնության շնորհիվ: Ավելի մեծ խնդիրներ լուծելու համար անհրաժեշտ են պետական աջակցություն, ազգովի համախմբված աշխատանքներ, խոշոր ներդրումներ:

Այսօր ամբողջ հայ ժողովուրդը բջջային կապով գրավոր հաղորդակցվելիս գրկված է հայերեն տառերն օգտագործելու հնարավորությունից և հարկադրված է գրելու լատինատառ կամ սլավոնատառ հայերենով: Պատճառն այն է, որ նախորդ քսան տարիների ընթացքում պետությունը հոգ չի տարել տեխնիկական միջոցների զարգացման բերումով ստեղծված նոր պայմաններում հայոց լեզվի ու մշակույթի պաշտպանության մասին: Դեռևս չի լուծված նույնիսկ այնպիսի մի պարզ խնդիր, ինչպիսին է հայատառ համակարգչային ստեղծաշարեր արտադրելը կամ պատվիրելը, չնայած այդ մասին արդեն 20 տարի է, ինչ գրված է ՀՀ «Լեզվի մասին» օրենքում:

Բանն այնտեղ է հասել, որ մենք ու մեր պետությունը մեր մասին ավելի քիչ ենք մտածում, քան օտարները: Ներկայումս համակարգչային իր ծրագրերի հայերենացումը ֆինանսավորում է «Մայքրոսոֆթ» ընկերությունը: Իսկ «Գուգլը» հայերենը ևս ինքնակամ ներդրել ու զարգացնում է իր բազմալեզու ցանցային թարգմանչի մեջ:

Նոր հազարամյակում մրցունակ կդառնան այն լեզուները, որոնք ընդունակ կլինեն համացանցում առկա ամբողջ տեղեկույթը իրենցով արտահայտելու, ի վիճակի կլինեն էլեկտրոնային միջավայր տեղափոխելու իրենց մշակույթն ու կրթական համակարգը: Այդ լեզուները դրանով իսկ կկարողանան ազատագրվել իշխող լեզուների (անգլերենի, ռուսերենի և այլն) թե՛ գործառական, թե՛ կառուցվածքային ճնշումից, դուրս կգան երկլեզվության ու բազմալեզվության պարտադրված կապանքներից:

Հատկապես թարգմանիչ ծրագրերի լիարժեք աշխատանքի դեպքում կտրուկ կմեծանա հայերենի տեղեկատվական արժեքը, կդադարի հայախոսության ծավալների նվազումը, մեծապես կբարձրանան հայախոս զանգվածի զարգացման հնարավորությունները ոչ միայն մտավոր, այլև տնտեսական առումով: Հակառակ դեպքում հայերենը շեշտակի կկորցնի իր վարկը, նոր սերունդները կնախընտրեն հայերենի փոխարեն սովորել ու գործածել անգլերեն (մի շատ վտանգավոր միտում, որն արդեն իսկ առկա է):

Քանի դեռ պետությունը չի կատարել այս ոլորտի իր պարտականությունները, գոնե հասարակական կազմակերպությունները, գիտական և ուսումնական կենտրոնները պետք է իրենց ուժերի սահմաններում հնարավորը անեն՝ եղած բացերը լրացնելու համար: Այսպես, ուսումնական կենտրոնները մեծ հնարավորություն ունեն առանց էական ծախսերի համալրելու հայերեն էլեկտրոնային գրադարաններն ու հանրագիտարանները: Դրա համար պետք են ընդամենը ուսումնական գործընթացի մարտավարության որոշ շտկումներ:

Հնարավոր է ուսանողներին ինքնուրույն աշխատանքներ, կուրսայիններ ու ռեֆերատներ հանձնարարել այնպես, որ դրանք ունենան հանրագիտական բնույթ, և դրանց հանրագումարում գոյանան մասնագիտական գրադարաններ: Օրինակ՝ բանասեր ուսանողները երկու տարում կարող են ստեղծել լեզվաբանական և գրականագիտական ընդհանուր և ճյուղային հանրագիտարաններ, եթե ամեն մի

կուրսային աշխատանք լինի այդպիսի մի հանրագիտարանի որևէ հոդված կամ դրա մի մասը: Ֆիզիկոս ուսանողները կստեղծեն ֆիզիկայի հայերեն հանրագիտարան, արվեստաբանները՝ արվեստի հանրագիտարան և այլն: Այդ աշխատանքների դասախոս դեկավարները կխմբագրեն դրանք: Մի խումբ ծրագրավորող ուսանողներ էլ կգրադվեն այդ նյութերի հիման վրա մասնագիտական կայքէջերի ստեղծմամբ ու սպասարկմամբ: Այս ամենը կհաշվարկվի որպես ամբիոնների ու դասախոսների ծանրաբեռնվածության մաս, ուսանողների գործնական աշխատանք: Մնում է, որ բուհերը, դրանց բաժանմունքներն ու ամբիոնները մշակեն իրենց գծով էլեկտրոնային հանրագիտարանների նախագծեր և համակարգեն դրանց ստեղծման աշխատանքները: Արդյունքում կգոյանա տեղեկույթի գիտակրթական հենք, որը թույլ կտա անցնելու ոլորտի յուրացման հաջորդ աստիճաններին՝ էլեկտրոնային դասագրքերի, ձեռնարկների, ինքնաստուգման ու քննական հարցաշարերի ստեղծմանն ու շարունակական կատարելագործմանը, գիտական հետազոտությունների ծավալմանը: Հաջորդ փուլերին կներգրավվեն նաև ակադեմիական ու այլ շրջանակներ, և գործը կստանա համազգային բնույթ:

Ներկայումս մեզ տրված է անցյալի մեր մշակութային բացթողումները լրացնելու, քաղաքակիրթ ազգերի շարքում մեր պատվավոր տեղը վերականգնելու հնարավորություն: Այդ հնարավորությունը կարող ենք իրացնել միայն ազգովի համախմբվելու և նպատակասլաց գործելու դեպքում:

Հայաստանում որոշ օտար լեզուների (անգլերենի, ռուսերենի, ֆրանսերենի, գերմաներենի, իտալերենի) վարկը ավելի բարձր է, քան հայերենինը: Դրա վկայություններից են քաղաքների փողոցները ողողած օտարալեզու ցուցանակները, գովազդերը, որոնք հաճախ, հակառակ օրենքի պահանջին, չունեն իրենց զուգահեռ հայերեն տարբերակը: Այս երևույթի դեմ վարչական ու իրավական պայքարը դժվարանում է այն պատճառով, որ ՀՀ «Գովազդի մասին» օրենքը գովազդի լեզվի մասին հոդվածում վերապահում է անում ապրանքային նշանների, մակնիշների համար՝ չարգելելով դրանց միայն օտարալեզու առկայությունը՝ առանց պետական լեզվով համարժեքի: Սա էլ պատճառաբանվում է միջազգային ինչ-ինչ համաձայնագրերի պահանջով: Բայց իրականությունն այն է, որ Եվրոպային ու ԱՄՆ-ին շատ ավելի ինտեգրված Վրաստանում իրենց ապրանքանիշերը վրացերեն գրանցել և օգտագործում են բազմաթիվ արտասահմանյան ընկերություններ (Կոկա-Կոլա, Ֆանտա, Բի Լայն և այլն), որոնք Հայաստանում նույնը միայն անգլերեն են գրում, նույնիսկ եթե ունեն հայերեն գրանցած տարբերակ (Կոկա-Կոլա): Էլ չենք խոսում վրացական ընկերությունների ու ձեռնարկությունների մասին, որոնք իրենց երկրի սահմաններում՝ արտաքին գովազդում, սովորաբար ներկայանում են միայն վրացերենով: Ուրեմն արժե ուսումնասիրել և ընդօրինակել Վրաստանի օրենսդրությունը:

Եվ ընդհանրապես մեր սեփական և միջազգային փորձը ցույց է տալիս, որ մենք կարիք ունենք լեզվական օրենսդրության զարգացման, խորացման ու արմատականացման՝ ազգային շահերի գերակայության նկատառումով: Հակառակ դեպքում Հայաստանի լեզվավիճակի կանխատեսումները խիստ բացասական են: Դա վերաբերում է ոչ միայն կրթության, տեղեկատվության, հեռահաղորդակցության, զանգվածային լրատվության, գովազդի, այլև գիտության, արվեստի, առողջապահության, քաղաքականության ու դիվանագիտության ոլորտներին:

Օրենսդրական փոփոխություններով անհրաժեշտ է ստեղծել վարչական, քրեական և հարկային լծակներ, որոնցով կիրականացվեն առնվազն հետևյալ պահանջները:

1. Կրթության ոլորտում հայալեզու դարձնել բոլոր մակարդակի ուսումնադաստիարակչական հաստատությունները՝ սկսած նախակրթարանից մինչև հետբուհական կրթություն: Փոքրամասնություններին թույլատրել իրենց ազգային լեզվի, մշակույթի, պատմության ուսումնասիրում՝ որպես հավելում ընդհանուր միասնական ծրագրին: Նկատի ունենալով որ բարձրագույն կրթության հատկապես որոշ տեսակներ (օտար լեզուների, երաժշտական, բժշկական և այլն) արտագաղթին նպաստող գործոններ են դարձել, արտասահման մեկնողներից բարձրագույն կրթության ծախսի՝ եվրոպական չափանիշերով փոխհատուցում հաշվարկել և դա որպես գրավ վերցնել մինչև մեկնողի վերադարձը: Փախչողների դեմ քրեական գործ հարուցել, ինչպես դասալիքների դեպքում:

2. Չանգվածային լրատվամիջոցներին թույլատրել ոչ հայերեն հրապարակումներ, հաղորդումներ ու ֆիլմեր միայն ուսումնական նպատակներով, ազգային փոքրամասնությունների համայնքների, արտերկրի համար և հատուկ սահմանաչափերով: Խիստ սահմանափակել նաև օտարալեզու երաժշտական ստեղծագործությունների հեռարձակումը և հրապարակային հնչեցումը:

3. Հայաստանի տարածքում օտարալեզու հնչող գովազդը արգելել: Օտարալեզու գրավոր գովազդը և ցուցանակները թույլատրել միայն առնվազն կրկնակի մեծ ու ոչ պակաս տեսանելի հայերեն համարժեքի առկայությամբ և դրանից տասնապատիկ բարձր գնով:

4. Հայաստանում թույլ տալ միայն այն ապրանքների վաճառքը, որոնք ունեն բացառապես հայերեն կամ օտարալեզու տարբերակին չափերով ու բովանդակությամբ առնվազն համարժեք հայերեն պիտակ և օգտագործման հրահանգներ:

5. Հայաստանում արտադրվող ու վաճառվող «հայրենական» ապրանքների, Հայաստանում գործող հիմնարկների, ծառայությունների համար գրանցել միայն հայալեզու և հայատառ անվանումներ: Ներմուծված ապրանքի վաճառքը թույլատրել միայն դրա ապրանքանիշը հայատառ գրանցելու և գործածելու պայմանով: Հակառակ

դեպքում ապրանքը տարածող կազմակերպությունը հարկել նրա տարեկան շահույթի 10 %-ի չափով:

6. Առաջնահերթ ստեղծել և ընդունել տեղեկույթի մշակման ու փոխանակման էլեկտրոնային միջավայրում և մասնավորապես Համացանցում հայալեզու բովանդակության արագացված ներդրման հայեցակարգ, օրենք և պետական ծրագիր:

7. Հայաստանում թույլ տալ միայն այնպիսի հեռախոսների և էլեկտրոնային այլ սարքերի վաճառք, որոնք ապահովված են հայալեզու և հայատառ ծրագրային փաթեթով (միջերեսով) ու ստեղծաշարով:

8. Պետական կառույցներում գրավոր կամ էլեկտրոնային միջոցներով գործավարությունը և Հայաստանում գրանցված ցանկացած կազմակերպության ու քաղաքացու հետ բանավոր, գրավոր կամ էլեկտրոնային միջոցներով պաշտոնական հաղորդակցումը բացառապես կատարել հայերենով ու հայատառ:

9. Բոլոր տեսակի ծառայողական մրցույթներում և ատեստավորման քննություններում պարտադիր դարձնել հայերենի ընդհանուր և մասնագիտական իմացության ստուգումը պետականորեն սահմանված մակարդակով:

10. Վարչական և քրեական պատասխանատվություն սահմանել այն անձի համար (անկախ քաղաքացիությունից), ով Հայաստանի տարածքում՝ լեզվագործածության որևէ ոլորտում, սահմանափակում է հայերենի գործածությունը հոգուտ այլ լեզվի:

11. Հայաստանը ներկայացնող պաշտոնյաների, դիվանագետների համար պարտադիր կարգ սահմանել պաշտոնական հանդիպումներում ու ելույթներում բացառապես հայերենի կիրառումը՝ համաձայն վարվելակերպի միջազգային կանոնների:

12. Անվերապահ և պարտադիր կարգ դարձնել հայերեն չիմացող արտասահմանցի գործիչների, մասնագետների հրապարակային ելույթների հայերեն համաժամանակյա թարգմանության ապահովումը:

13. ՀՀ լեզվի պետական տեսչությունը դարձնել ՀՀ նախագահին առընթեր, և ընդլայնել նրա իրավասություններն ու գործառույթները: Նրա վերահսկողությամբ վերաբացել հայերեն չիմացող կամ անբավարար իմացող քաղաքացիների համար հայերենի անվճար և պարտադիր դասընթացները:

14. Պատժամիջոցներ սահմանել ՀՀ լեզվական օրենսդրության բոլոր դրույթների խախտումների համար, առնվազն եռապատկել ՀՀ «Լեզվի մասին» օրանքի խախտումների համար սահմանված տուգանքների ներկայիս չափերը:

ԼՈՒՍԻՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ստեփանակերտի «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի
հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԱՐԴԻ ԼԵԶՎԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԼԵԶՎԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՈՒՄ

ԼՂՀ <<Լեզվի մասին>> օրենքով սահմանվում են ԼՂՀ լեզվական քաղաքականության հիմնադրությունները, կարգավորվում են լեզվավիճակն ու պետական լեզվի գործառույթներով պայմանավորված՝ լեզվի գործածության ձևերը՝ լեզվահարաբերությունները: Արցախում արդի հայերենի լեզվավիճակը՝ լեզվական իրողությունների դրսևորումն ու նրանց զարգացման միտումները գնահատելիս առանձնանշվում է լեզվական երկու միջավայրերի՝ գրական-պաշտոնականի և բարբառային-խոսակցականի ներդաշնակ իրացումը: Այդ երկու միջավայրերը, չունենալով խիստ մերձակցություն, ունեն գործառույթան հստակ տարբերակված ոլորտներ: Եթե Արարատյան բարբառի խիստ մերձակցությունը վտանգ է պարունակում՝ սահմանափակելու գրական արևելահայերենի գործառույթան շրջանակները անաղարտության ապահովման առումով, ապա Արցախի բարբառի և գրական լեզվի գործառական սահմանները զատորոշված են, ու, անշուշտ, բարբառը չի վտանգում կամ սահմանափակում գրական հայերենի գործառական տարածքը: Գրական լեզվի վրա բարբառի ազդեցությունը սահմանափակվում է միայն բառային շեշտի՝ վերջնավանկայինից վերջընթերվանկայինի փոփոխությամբ. երևույթը նկատելի է նաև մասնագետների խոսքում: Իսկ գրական լեզվի ազդեցությունը բարբառի վրա ակնհայտորեն մեծացել է՝ պայմանավորված հասարակատնտեսական պայմաններով. գրական լեզուն իր ազդեցությամբ աստիճանաբար սահմանափակում է բարբառի զարգացման հնարավորությունները և նպաստում նրա գրականացման գործընթացին:

Արցախյան լեզվական իրականությունը գնահատելով՝ պիտի փաստել, որ այսօր գրական հայերենի դիրքը որոշակիորեն կայունացել է Արցախի հանրային կյանքում: Հատկանշական է, որ Արցախում ունենք գրական հայերենի անաղարտության ապահովմանը հետամուտ հանրային հեռուստառադիո, հանրային կյանքի մի շարք ոլորտներում գրական հայերենն իր իրավունքներն է վերահաստատել,

մասնավորապես՝ մաքուր է գիտության, կրթության, լրատվամիջոցների՝ լրագրերի, պաշտոնական գրագրությունների լեզուն, քաղաքացիների պաշտոնական խոսքում ապահովվում է լեզվի անաղարտությունը: Այդ բնագավառներում լեզվավիճակը վերահսկելի է, և կա գիտակցված ընկալում իրականացվող լեզվական քաղաքականության նկատմամբ:

Հակառակ երևույթը՝ լեզվական անկարգապահությունն է ակտիվ <<կենցաղավարում>> Արցախի մայրաքաղաքի փողոցներում: Լեզվական անկարգապահ վարք դրսևորողները ծառայություններ և սպասարկում իրականացնող հաստատություններն են, որոնք շարունակում են լինել <<օրինազանց>> կամ էլ, լավագույն դեպքում, անմեկնելի են մնացել նրանց համար օրենքի հողվածի համապատասխան դրույթները՝ <<ցուցանակները, ձևաթղթերը, դրոշմանիշները, նամականիշները, կնիքները, միջազգային փոստային ծրարները, գովազդի բոլոր միջոցները ձևավորել հայերեն՝ անհրաժեշտության դեպքում զուգակցելով այլ լեզուներով>>¹: Ձևավորել հայերեն՝ չի նշանակում՝ հայատառ: Ավելին՝ առանձին դրույթով հստակեցվում է. <<ԼՂՀ տարածքում ծառայություններ և սպասարկում իրականացնող կազմակերպությունների, կենտրոնների, սրահների, առևտրական կետերի, կրպակների հրապարակային գրվածքը (գովազդ, ազդ, ազդագիր, ցուցապաստառ, պիտակ), բացի անձնանուն նշանակող բառից, չպետք է պարունակի օտարալեզու բառեր ու արտահայտություններ>>²... Մինչդեռ մայրաքաղաքի կենտրոնական փողոցներով անցնելով՝ լեզվական իրական խառնաշփոթության ենք ականատես. գրեթե բոլոր ցուցանակները (անձնանուն նշանակող բառերը, ապրանքանշային անվանումներով գովազդները չենք հաշվառել) օտար բառերով ու արտահայտություններով են հայատառված: Այսպես՝ <<Կապրիզ>>, <<Գրացիա>>, <<Բեստ մեն>>, <<Ֆո յու>>, <<Թոյս լենդ>>, <<Էտուալ>>, <<Իմ սթայլ>>, <<Շիկ>>, <<Շարմ>>, <<Թյու լիփս>., <<Ֆո մեն>>, <<Լայնս>>, <<Նյուվ քլաբ>>, <<Ստեփ սիթի>>, <<Ասորտի>>, <<Բուտիկ>>, <<Ռիելթի>>, <<Այնես>>, <<Լեդի գլամուր>>, <<Բոմոնդ>> և այլն: Այդ տրամաբանությամբ բնավ չի բացառվում, որ վաղը մեր կենտրոնական փողոցներում հայերեն տառերով թուրքական որևէ ապրանքանիշի անվան կամ այլ հայատառված բառերով ու արտահայտություններով նոր հաստատություն կամ կրպակ չենք ունենա: Սա այլ որակում չունի, քան սեփական արժանապատվության անարժևորում ու լեզվաքաղաքականության անփութություն, որի արդյունքում խոտորում է առաջանում մարդկանց մտածողության ու դիրքորոշումների մեջ: Հանրային

¹ ԼՂՀ <<Լեզվի մասին>> օրենք, հոդված 4, բ կետ /1996թ. մարտի 20/:

² ԼՂՀ <<Լեզվի մասին>> օրենք, հոդված 4, գ կետ /1996թ. մարտի 20/

գիտակցության վրա հակահայերենացման այս ցույցն ավելի ներգործուն է, ու ազդեցության շրջանակներն էլ առավել ընդլայնված են, ընկալունակությամբ էլ՝ ավելի մատչելի: Երևույթի վտանգն ավելի խորն է, քան տեսանելի է առաջին հայացքից: Անհարկի լեզվական երկփեղկվածություն է առաջանում: Նախ՝ խորանում է այն մտայնությունը, որ գրական հայերենով հաղորդակցումն ու հայերենապահպանությունը հասարակության լայն շրջանների խնդիրը չէ, այլ որոշ կառույցների ու ոլորտների. նվազ պահանջկոտություն է դրսևորվում <<փողոցները մաքրելու>> հարցում՝ թե՛ հասարակության, թե՛ պետական լեզվաքաղաքականությունն իրականացնող համապատասխան մարմինների կողմից: Բացի այդ, այն փաստը, որ բոլորի աչքի առաջ աղավաղվում կամ յուրովի է հասկացվում օրենքը, այսպես ասած՝ օգտապաշտությունից դրդված, ու դա թույլատրելի է, դեռ ավելին՝ կրկնվում է, արդեն իսկ մեր գիտակցության մեջ ձևավորում է անհարգալից ու անլուրջ վերաբերմունք օրենքի նկատմամբ: Մարդ չի կարող օրինապահ լինել մի դեպքում, օրինախախտ՝ մեկ այլ դեպքում: Մեր փողոցներում այսօր այդ ցուցանակներով անպատվվում են և՛ հայերենը, և՛ օրենքը: Օրենքը կատարյալ է, եթե այն օրինապահ ու օրինապահանջ հասարակական առողջ գիտակցություն է ձևավորում ու լիարժեք կենսագործվում: Արցախում այս կարևոր ոլորտում դեռ խնդիրն առկա է, այդ հարթությունում բացակայում է համակարգված փոխգործակցությունը, հասարակության շրջանում չկա պատասխանատվության գիտակցում, տարերայնորեն է իրականացվում լեզվաքաղաքականությունը, թեպետ օրենսդրական դաշտը թվում է կարգավորված, և օրենքը հնարավորություն է տալիս հայերենապահպան լեզվաքաղաքականություն իրականացնել:

Թե՛ ՀՀ-ում, թե՛ ԼՂՀ-ում հայերենը պաշտպանվում է <<Լեզվի մասին>> օրենքով: Վերջինս ընդունվել էր 1996թ., իսկ բոլորովին վերջերս նոր նախագիծ է ներկայացվել խորհրդարան: ՀՀ նույնանուն օրենքից այն տարբերվում է մասնակի խմբագրությամբ՝

- դեռևս 1996-ին ավելացվել էր դրույթ արցախյան բարբառի գործածության և գիտական ուսումնասիրման, բարբառով ազգագրական ժողովածուների հրատարակումը խրախուսելու վերաբերյալ³, նոր նախագծում մնում է անփոփոխ.
- հանվել էր այն դրույթը, թե քաղաքացիները պարտավոր են պաշտոնական խոսքում ապահովել լեզվի անաղարտությունը. այս դրույթը վերականգնվում է.
- ավելացվել էր դրույթ ռուսաց լեզվի՝ որպես ազգամիջյան հաղորդակցման լեզվի զարգացմանը նպաստելու վերաբերյալ⁴, որը հանվում է:

Այդ դրույթներին անդրադառնալով՝ պիտի նշենք, որ առաջինն անհրաժեշտ հավելում էր: Ու բնավ չի սահմանափակում գրական հայերենի գործառույթյան

³ ԼՂՀ Լեզվի մասին օրենք, հոդված 1 /1996թ. մարտի 20/:

⁴ Տե՛ս նույնը:

շրջանակները կամ նսեմացնում հայերենի այլ բարբառները՝ արցախյանը առանձնանշելով (այդպիսի տեսակետ հնչել է մամուլում): Անշուշտ, գրական հայերենը ընդհանուր ու միասնական լեզուն է հայ հանրության հաղորդակցման համար ու, բնականաբար, հայ ժողովրդի գիտամշակութային կյանքի զարգացման ամենախոշոր փաստն է: Բայց այսօր, երբ փաստացի անկախ ու տարածքային առանձին միավորում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, երբ այդ վարչատարածքային միավորը դեռևս <<աշխարհի>> կողմից ճանաչված չէ, և նույնիսկ հանդգնում են տեղի բնակչության ծագումնաբանական պատկանելության և բնիկության հարցը վիճարկել, բարբառի ծագումնաբանական պատկանելության և բնիկության հարցը վիճարկել, բարբառի գիտական ուսումնասիրության, նրա գործածության շրջանակների ընդլայնման, և կարծում ենք նաև՝ տեղի ուսումնական հաստատություններում նրա ուսումնասիրության պահանջը դառնում է օրախնդիր (սա մեր պայմաններում պարզապես կենսական ռազմավարական խնդիր է, ազգային նկարագրի պահպանման խնդիր ու արտաքին աշխարհում ինքնաներկայացման կարևոր գեղք): Այսօր բարբառը, տվյալ դեպքում՝ Արցախյան բարբառը, պատմական այն կարևորագույն հուշարձանն է, որ հավաստում է Արցախի՝ դեռևս վաղնջական շրջանից հայաբնակ տարածք լինելու փաստարկը, վկայում արցախցու՝ հայալեզու էթնիկ խմբի հնագույն արմատների մասին, փաստում մշակութային ու հոգևոր հարուստ ժառանգություն ունեցող հնագույն ժողովրդի լինելիությունը: Մյուս կողմից՝ ակնհայտ մեծացել է գրական լեզվի ազդեցությունը բարբառի վրա: Անշուշտ, այդ ազդեցության շրջանակների ընդգրկուն կամ սահմանափակ լինելը սոցիալ-պատմական պայմաններով է թելադրվում: Այդ գործընթացին նպաստում են ամենից առաջ պատմահասարակական պայմանները, հասարակության պետական ու տնտեսական միասնությունը: Այսօր այդ գործընթացն առավել քան ակնառու է: Գրական իրողությունների ներհուսը բարբառ ակնհայտորեն աճել է վերջին տասնամյակներում: Գրական լեզուն թափանցում է բարբառի բառապաշարի շերտը, ընդգրկվում լեզվական մակարդակներում, մասնավոր դեպքերից վերածվում գործող օրինաչափության ու հիմք տալիս բարբառալուծման գործընթացին: Իսկ երբ բարբառը գրականացվում է, լեզուն գրկվում է այն հիմք աղբյուրից, որն արժեքավոր ու հավաստի տեղեկություններ կարող է տալ տվյալ ժողովրդի պատմության, նրա անցած ճանապարհի մասին, և որը կարող էր հիմք հանդիսանալ լեզվական շատ իրողությունների բացահայտման համար: Օրենքի այդ դրույթի հավելումը, կարծում ենք, նաև պատմական պահանջ է:

Պաշտոնական խոսքում լեզվի անաղարտությունն ապահովելու մասին դրույթը վերականգնվել է՝ նոր նախագծի համաձայն:

Ռուսաց լեզվի զարգացումը խթանելու մասին դրույթը, թվում էր, ժամանակի պահանջ էր՝ հանրության ինտերցիայով թելադրված, թեպետ լեզվաբանական առումով հիմնավորված չէր և իրականում հակասում էր իր իսկ լեզվի զարգացման

տրամաբանությանը. լեզուն ապրում ու զարգանում է լեզվակիր հանրության մեջ: Այսօր առաջարկվող <<Լեզվի մասին>> օրենքի նոր նախագծում վերոնշյալ դրույթը հանված է: Գաղտնիք չէ, որ ստեփանակերտաբնականների մի մասը ռուսալեզու կրթություն ուներ, մայրենիին չէր տիրապետում կամ լավագույն դեպքում՝ տիրապետում էր բարբառով հաղորդակցվելու մակարդակով: <<Լեզվի մասին>> օրենքի ընդունումը (թեպետ յուրաքանչյուրը գիտակցում էր դրա կարևորությունը) ընդվզում ու ճեղք առաջացրեց, որն աստիճանաբար հաղթահարվեց այս քսան տարիների ընթացքում: Այսօր մեղմվել է այն հոգեբանական խզվածքը, որն առկա էր հասարակության օտարալեզու և մայրենի կրթությամբ դաստիարակված անդամների միջև, որը նախ և առաջ հասարակատնտեսական ու պատմական պայմաններով է թելադրվում:

Պատմաքաղաքական զարգացումներով պայմանավորված՝ Արցախում ռուսաց լեզվի իմացության մակարդակի բարձրացման խթանումը նաև պետական ծրագրով է խրախուսվում: ԼՂՀ-ում բնակվող <<ազգային փոքրամասնությունների, օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող և արտերկրից ժամանած ընտանիքների երեխաների ուսուցումը ռուսերենով իրականացնելու գործընթացի արդյունավետության ապահովման նպատակով>> ԼՂՀ Կառավարության որոշմամբ⁵ Ստեփանակերտ քաղաքի Ռիչարդ Թյուֆենկյանի անվան (ներկայումս՝ Ալ. Գրիբոյեդովի անվան) թիվ 3 դպրոցում առաջին դասարանցիների ընդունելությունն իրականացվում է միայն ռուսերեն թեքումով ուսուցմամբ դասարաններում՝ համաձայն <<ԼՂՀ հանրակրթական և հատուկ ուսումնական հաստատությունների սովորողների ընդունելության կարգի>>՝ մշտական գործող հատուկ հանձնաժողովի համապատասխան որոշմամբ: Երևույթի քաղաքական բովանդակությունն ընկալելով՝ մեր համոզումն է, որ այդօրինակ կրթությունը կենսական հիմք չունի, լեզվի զարգացման տրամաբանությամբ ու պատմությամբ արդարացված չէ:

Խոսելով Արցախում իրականացվող լեզվաքաղաքականության մասին, գնահատելով լեզվավիճակը՝ հնարավոր չէ երևույթը քննել հայկական ընդհանուր միջավայրից դուրս: Օրենսդրական նույն դաշտը ենթադրում է նույն խնդիրների առկայություն, նույն սխալների ընդօրինակում: Արցախում իրականացվող լեզվաքաղաքականությունն այդ առումով նաև կրավորական է: Լեզվաքաղաքականությունն ազգային անվտանգության խնդիր է: Այն պետք է պետականորեն առաջնահերթվի, իրականացվող աշխատանքները լինեն միասնականացված ու համակարգված՝ թե՛ օրենսդրական, թե՛ հասարակական դաշտում:

⁵ ԼՂՀ Կառավարության որոշում, 2008, հունիսի 20, N 457:

Անշուշտ, բազմալեզվությունը հնարավորություն է տալիս ճանաչելու և յուրացնելու համամշակութային արժեհամակարգը: Սա նաև ժամանակի մարտահրավերն է: Ու մենք բնավ էլ <<ազգային կճեպի>> մեջ տապակվելու կողմնակիցը չենք, այլ սեփական արժանապատվությունն անեղծ պահելու, ազգի ամենամեծ ժառանգության նկատմամբ պատշաճ վերաբերմունք ու հարգանք դրսևորելու օրինական պահանջատեր ենք:

ՍՈՒՐԵՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀՊՄՀ, «Սփիւռք» գիտաուսումնական կենտրոնի տնօրեն
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԱՐԵՎՍՏԱՀԱՅ ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ

«Սփիւռք» Գիտաուսումնական Կենտրոնը միշտ կարելու է մայրենի լեզուի հիմնախնդիրների շուրջ նման գիտաժողովները, առաւել եւս այսօր, երբ մենք կանգնած ենք մեծ ճամբարաժնի առջեւ: Հայոց լեզուն, ե՛ւ արեւելահայ, ե՛ւ արեւմտահայ հատուածներով գահավեժ, սրընթաց անկում է ապրում, եւ մայրենիի միջազգային տօնը մենք աւելի ընկալում ենք իբրեւ ահազանգ հնչեցնելու հնարաւորութիւն: Ոչ թէ ուրախանում ենք, այլ պարզապէս առիթ է, որ երեսն հանենք մեր տազնապները: Այստեղ շատ խօսուեց արեւելահայերէնի տխուր վիճակների մասին:

Ես կ'ուզենայի ծանրանալ արեւմտահայերէնի կացութեան առթած մտահոգութիւնների վրայ: Աշխարհում այսօր վեց հազար լեզուների մէջ 3.000ը, ուղիղ կէտը, եթէ ոչ աւելին, կանգնած են կորսուելու վտանգի առջեւ, նշում է ամերիկեան մերօրեայ նշանաւոր լեզուաբան Դեյվիդ Հերիսոնը: Բարւօք չէ նաեւ, այսպէս ասենք, «ամուր ողնաշար» ունեցող լեզուների վիճակը. դժգոհում են գերմանացիները, ռուսները, ֆրանսիացիները: Մի լեզուի մենաշնորհ դիրքը սասանում է միւսների բնականոն զարգացումը՝ տարբեր ազդակների տակ: Խօսքը վերաբերում է արեւմտահայերէնին, որը, ինչպէս դիպուկ նշում է պոլսահայ արձակագիր, «Մարմարա» օրաթերթի խմբագիր Ռոպեր Հատտեճեանը, այսօր մահաքունի մէջ է: Այսինքն՝ մեր աչքի առջեւ մեռնում է երբեմնի շքեղ, հզօր լեզուն: Մեզ թւում է, որ հարցի արձանագրումը բաւարար չէ: Ելքեր են անհրաժեշտ, եւ «Սփիւռք» Գիտաուսումնական Կենտրոնը Կրթութեան եւ Սփիւռքի նախարարութիւնների առջեւ բերում է փրկարար ճանապարհների լուծման իր տեսլականը:

Նախ, ողջունելի է Սփիւռքի Նախարարութեան նախաձեռնութեամբ եւ ԳԱԱ որոշումներով Լեզուի Ինստիտուտում արեւմտահայերէնի բաժին բացելու գաղափարը: Ինքներդ տեսէք, մենք ունենք Սփիւռքում շուրջ 200 ամէնօրեայ դպրոցներ՝ արեւմտահայ յենքով, բայց չունենք համալսարանական մասնագիտացումը պայմանաւորող կրթական համակարգ: Ով ասես կարող է մտնել թէ՛ տարրական, թէ՛ միջին օղակի եւ թէ՛ երկրորդական վարժարաններ, չկան միասնական ծրագրեր, ուսուցիչը մեծ մասամբ մասնագէտ չէ: Եւ մենք առաջարկում ենք հենց Հայաստանում, իսկ մենք պարտաւոր ենք տէր կանգնելու նաեւ արեւմտահայ լեզուին պետական

յատակուած վերաբերմունքով, բացել համալսարանական կրթութիւն, վերապատրաստութիւնից անցնել պատրաստութեան:

Այս առթիւ երբեմն բախուել ենք յատկապէս ԿԳՆ-ում, անհանդուրժողութեան, ընկալչութեան պակասի: Մինչդեռ Սփիւռքի Նախարարութիւնը իր մշտական մտահոգութիւններով կարծես համակիր է վիրահատական միջամտութիւնների: Տեղաշարժերն առկայ են նաեւ ԿԳՆ-ում, ինչը ողջունելի է: Այս տարուանից, եթէ չեն սխալում, Երեւանի Պետական Համալսարանում գործելու է արեւմտահայ մասնագիտացումով մագիստրատուրա՝ մէկ տարով:

Հրաշալի է, ողջունելի է, սակայն վստահ եմ, բոլորդ էլ այն կարծիքին էք, որ Խ. Աբովեանի անուան Հայկական Պետական Մանկավարժական Համալսարանը 90-ամեայ իր կենսափորձով, մանկավարժական-հոգեբանական իր ենթակառուցումաճքներով, ինչու չէ, «Սփիւռք» Կենտրոնի 15-ամեայ արդիւնաւոր աշխատանքով կարող է յաւակնել սփիւռքահայ ուսուցիչների պատրաստութեան: Սա ասում եմ ներքին վստահութեամբ, որովհետեւ 2000 թ. ի վեր մեր ուսերին է եղել սփիւռքահայ ուսուցիչների վերապատրաստութիւնը ԿԳՆ պատուերով: Մենք ձեռնամուխ ենք եղել հայրենի ուսուցիչների արեւմտահայ գրամշակութային լեզուական արժէքների տեւական եւ տարաբնոյթ դասընթացների, մեր մանկավարժները լայնքով ու խորքով քննութեան են առել արեւմտահայ մանկավարժութեան գիտական հանգրուանները: Վստահ եմ, որ մանկավարժական համալսարանը արդէն «Սփիւռք» Կենտրոնի փոփոխուած բազային յենքով ի վիճակի կը լինի կատարելու արեւմտահայ ուսուցչի պատրաստութեան երկու մակարդակների ուսուցումը՝ բակալարիատ եւ մագիստրատուրա, եւ հենց այս տարուանից: Մենք պատրաստել ենք մասնագէտներ, մենք ունենք կադրային հրաշալի բանկ ե՛ւ Հայաստանի ակադեմիական, համալսարանական համակարգից, ե՛ւ առաջին հերթին՝ Սփիւռքից: Սա է մեր ծրագիրը. համեստ է թէ յաւակնոտ, միակն է թէ լուծումներից մէկը, ցոյց կը տայ ժամանակը:

ՅՈՒՐԻ ԴԱՎԹՅԱՆ

ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի դեկան,
բանասիրական գիտությունների դոկտոր

ԱՐԴԻ ԼԵԶՎԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Ճշմարիտ է, որ Աստված այս լեռնաշխարհում ապրող հային ո՛չ նավթ է տվել, ո՛չ գազ: Սակայն տվել է մի լեզու, որի նմանը շատ ու շատ ժողովուրդներ կերպգեին ունենալ: Սա է, որ հային պահել է հայ, ապահովել այս աշխարհում հայի տեսակի գոյությունը: Եվ չկա Աստծո ստեղծած այս աշխարհում մի ոլորտ՝ գիտություն, արվեստ, առհասարակ մարդկային հարաբերությունների մի բնագավառ, որտեղ հայերենը չփայլի իր կատարելությամբ, որով հնարավոր չլինի արտահայտել որևէ միտք, ինչը հնարավոր է ցանկացած օտար լեզվով: **Ոչ միայն հացիվ, այլև բանիվ** աստվածաշնչյան սկզբունքը պատմության ընթացքում սկզբունք դարձրած հայը այդ **բանիվը** անցկացրել է իր աստվածային լեզվի պրիզմայով:

Բազում են երևելի այն անհատները, որոնք իրենց հայերեն լեզվամտածողության շնորհիվ աշխարհում հայտնի են դարձել: Համաշխարհային ճանաչում ունեցած և ունեցող բոլոր լեզվաբաններն իրենց պարտքն են համարել անպայման անդրադառնալ հայերենին և հիանալ նրա կատարելությամբ, ճոխությամբ, ճկունությամբ: Սակայն արձանագրել սա և այսքանով հանգստանալ այսօր պարզապես չի կարելի:

Արդ, չեմ կարող չանդրադառնալ բոլորիս անհանգստացնող մի քանի հարցի:

1. Կրթական բոլոր ծրագրերում հայերենի ուսուցման չափորոշիչները լուրջ վերանայման կարիք ունեն: Դրանցից չի երևում, թե մայրենի լեզվից նվազագույնը ի՞նչ պիտի իմանա նախադպրոցական տարիքի երեխան, ի՞նչ՝ տարրական, ի՞նչ՝ միջին և ի՞նչ՝ ավագ դպրոցում: Ուստի զարմանալի չէ, որ մեկը մյուսից անկախ են և տարբեր դաշտերում են գտնվում չափորոշիչները, դպրոցական դասագրքերը և բուհ ընդունվելու շտեմարանները: Այս երեքին թեկուզ թռուցիկ ծանոթությունից հետո հանգում ես այն մտքին, որ կազմողները դրանցում զետեղել են այն առավելագույնը, որ ձեռք են բերել իրենց տասնամյակի փորձառությունից: Եթե սրան գումարենք այն խառնաշփոթը, որ ստեղծվել է՝ ա/ հիմնական և ավագ դպրոցների ձևավորմամբ, այն է՝ 12-ամյա կրթության ներմուծմամբ, բ/ 30-40 հոգանոց աշակերտական խմբերով ուսուցմամբ, գ/ այն կատաղի պայքարով, որ մղվում է թեստագիրների և դասագրքաստեղծների միջև, ապա պատկերը ամբողջական ու պարզ կլինի: Մեր ուսուցիչները մոլորված են այս խառնաշփոթից. ի՞նչ անեն, ինչո՞վ սովորեցնեն՝ դասագրքերո՞վ, թե՞ դրանց հետ կապ չունեցող շտեմարաններով: Ուստի չեմ կարող չհամաձայնվել այն կարծիքին, որ կամա թե ակամա

ամեն ինչ արվում է, որ մայրենին վանի աշակերտին, մինչդեռ ամեն ինչ պիտի անենք, որ աշակերտի համար ամենացանկալի և ամենասիրելի առարկաները լինեն հայոց լեզուն և գրականությունը, ինչպես եղել է անցյալում: Այս ամենը կշարունակվի այնքան, քանի դեռ չեն վերացրել ընդունելության քննություն կոչվող այլանդակությունները:

2. Ամեն օր զանգվածային լրատվամիջոցներով, հիմնականում հեռուստատեսությամբ լեզվական աղբ է թափվում, ինչն անմիջապես վերցնում է հայ դեռահասն ու պատանին: Ցինիզմ, գոեհկաբանություն, հետնախորշերի լեզու: Այսպիսին է որոշ հեռուստահաղորդումների լեզուն: Եվ եթե նախկինում աշխատում էին խուսափել այդպիսի լեզվով խոսելուց, ապա այժմ դա արվում է բացահայտ, առանց քողարկելու: Մա մարտահրավեր է՝ ուղղված հասարակությանը: Հեռուստաթերից թափվող լեզուն ապականում է ոչ միայն երիտասարդությանը, այլև բոլորին, ապադաստիարակում մարդկանց, ստիպում դառնալ այդ լեզվամտածողության կրողները: Ցինիկ լեզուն ցինիկ հոգեբանության արտահայտություն է: Կիսագողական լեզվով առողջ հասարակություն չես ձևավորի: Մի՞թե սա էինք երագում: Մա պետք է մտահոգի հայոց լեզվով բոլոր զբաղվողներին:

3. Մեր նախորդ երկիրն ատողները աղաղակում էին, թե բոլշևիկները ուզում էին վերացնել մեսրոպյան տառերը, մտցնել լատինականը, և որ այդ նպատակն էր հետապնդում Մանուկ Աբեղյանը՝ իր բարեփոխումների միջոցով: Մինչդեռ բոլորս տեսանք, որ խորհրդային 70 տարիներին զարգացան և կատարելագործվեցին հայոց լեզուն և գրականությունը: Սակայն այսօր անկախ Հայաստանում համացանցում իշխում է լատինատառ հայերենը, և Պողոս Մակինցյանին ու Մանուկ Աբեղյանին հայհոյողներից ոչ մեկը սրան չի ընդդիմանում: Մենք պիտի հենց այսօր բարձրաձայնենք՝ ոչ լատինատառ հայերենին:

4. Փոխառությունների նկատմամբ պետք է զգույշ լինել: Որոշ փոխառությունների արհեստական թարգմանությունները ասես ծաղր լինեն: Բոլոր զարգացած լեզուներն էլ ունեն փոխառություններ. դա չի կարող արտառոց համարվել: Արտառոցը դրանք ամեն գնով թարգմանելն է: Օրինակ՝ փրփրափքաբլիթ, գրգռաճեղք, օրիորդապանդիչ և նման բառերը ձեռ առնելու նման են հնչում:

5. Կար ժամանակ, որ հատկապես կուսակցական ֆունկցիոներները ի նշան բավարարվածության ասում էին **խառաշո**: Հիմա մոդան **օքեյն** է: Ժամանակակից հայ քաղքենին ռուսերենը փոխարինել է անգլերենով: Անցեք Երևանի կենտրոնով՝ հայերեն ցուցանակի գրեթե չեք հանդիպի: Անգամ գյուղական խանութներին անգլերեն ցուցատախտակներ են փակցված: Վերջապես չեմ կարող չասել, որ հայ մեծահարուստները իրենց ֆիրմաների անուններով ամեննին չեն նպաստում հայերենի հեղինակության բարձրացմանը: Ուշադրություն դարձրեք՝ «Միկա լիմիթիդ», «Մուլտի գրուպ», «Ալեքս գրուպ», «Վիլլա վայն», «Գրանդ տաբակո», «Մեմուր ընդ քո», «Լիա կերամիքս», «Տաշիր գրուպ», «Դալմա գարդեն մոլ» և այլն:

Ինչևէ, տա Աստված, որ հավերժ լինի հայերենի ճամփան:

ՄԱՐԻ ԶԱՔԱՐՅԱՆ

ՀՊՏՀ հայոց և ռուսաց լեզուների ամբիոնի վարիչ
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԼԵԶՈՒՆ ՀԱՅ ԷԹՆԻԿ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆ

Լեզուն դարերի հոլովություն ձևավորված, տարբեր արժեքներ ամբարած համակարգ է, որը կրողին (դիցուք՝ ազգին) հնարավորություն է տալիս անվտանգ կեցություն ապահովել՝ արդիականացնելով սեփական «ես»-ը: Հայտնի է, որ ինքնությունը արդիականանում է լեզվի միջոցով, այսինքն՝ լեզուն այն ազգաշինարար, ազգապահպան, ազգակերտիչ կառույցն է, որը հնարավորություն է ընձեռում ժամանակի մար-տահրավերներին համահունչ բնականոն ճանապարհով արդիականանալ: Լեզվական բարեփոխումների ու նոր արժեքների որդեգրման գործընթացը մարտահրավեր է հայոց լեզվի արդիականացմանը, իսկ այդ գործընթացը դարեր ի վեր իր հիմքում ունեցել է հոգևոր Հայաստանի գաղափարախոսությունը՝ իբրև բազմաչափ. բազմաշերտ և բազմամակարդակ երևույթ: Մաշտոցից ծայր առած և 20-րդ դարում արդեն Վ.Տերյանի, Պ.Սևակի կողմից համակարգված հոգևոր Հայաստանի ծրագիրն իր հիմքում ունի նաև լեզվի արդիականացման, ազգաշինության միտում: Ժամանակակից հայերենը հայ մարդու համար կարևորվում է որպես մրցունակ, ճկուն, արդի մարտահրավերներին պատասխանելու ունակ լեզու: Այս առումով անհրաժեշտ է պատմության հոլովություն ձևավորված ազգային լավագույն ավանդույթները զուգամիտել ժամանակի առաջադեմ գիտակրթական նորարարություններին, որոնք, արդիականացնելով ազգային ինքնությունը, նրան կշահադրդեն կրթական նոր մեթոդների հետ համագործակցության: Մեր ժամանակներում կրթությունը դարձել է համագործակցության և ինքնաիրացման այնպիսի ցանց, որը լեզվի արդիականացման նկատառումներով ներառում է հիմնախնդրի շարունակական և ազատ քննարկումներ: Գործառնող արդի ցանցերի պայմաններում հայ ազգային ինքնության արդիականացումը պայմանավորված է այդ գործընթացներում նրա մասնակցության աստիճանով՝ ազգային լեզվի ուժացմանն ուղղված արտաձին և աններդաշնակ սպառնալիքները նվազեցնելու միտումով: Փաստ է, որ ժամանակի գիտատեխնիկական հեղափոխությունը գիտության նոր ճյուղերի հսկայածավալ տեղեկատվություն է կուտակել, որի շրջանակներում երիտասարդությանը մրցունակ կրթություն տալն այսօր ունի ազգապահպան նշանակություն: Այն, բնականաբար, ենթադրում է առաջին հերթին հայերենի լավ

ինացություն, միաժամանակ արդիական՝ ներառելով 21-րդ դարի մտածողության և մշակութային հասկացություններ՝ միջազգային միօրինակությանը (ստանդարտներին) համապատասխան: Հայ իրականության մեջ այն ենթադրում է ոչ միայն նոր եզրերի ստեղծում, այլև նորագույն հասկացությունների փոխանցում հայերենի տարբեր բառաշերտերի (գրաբարյան, միջինհայերենյան...) բառերի խելացի և տեղին գործածության միջոցով՝ բառիմաստի ընդլայնմամբ, բնեռացմամբ, բառիմաստի նորացմամբ կամ շրջմամբ պայմանավորված:

Հայերենը իր բազմաշերտությամբ համալիր ամբողջացում է հայի ինքնությունը, ազգային հոգեկերտվածքը (մենթալիտետը), մշակույթը: Լեզվի օգտագործման նշված գործընթացներում այդ բնագավառներից յուրաքանչյուրն ունի և՛ զարգացման, և՛ արդիականացման անհրաժեշտություն՝ պայմանավորված ինչպես համընդհանրացման (գլոբալացման) մարտահրավերներով, այնպես էլ քաղաքակրթական հրամայականով: Փաստ է, որ համընդհանրացման գործընթացում կրթական համակարգի արդիականացումը առաջին հերթին ենթադրում է ոչ միայն նոր տեխնոլոգիաների ներդրում և բազմակողմանի մասնագիտական պատրաստվածություն, այլև ազգային լեզվի նվիրյալ և արարող ուսուցիչ, որը գիտակցում և բացահայտում է արդիականացման անհրաժեշտությունը՝ պայմանավորված ինչպես դրա մարտահրավերներով, այնպես էլ քաղաքակրթական հրամայականով:

Համաձայնելով լեզվի կառուցվածքաբանական մոտեցման կողմնակիցների հետ՝ նշենք, որ ցանկացած մշակութային քաղաքականություն ունի լեզվի արդիականացման խնդիրներ, իսկ էթնիկ «ես»-ի արդիականացման ջատագովները մտավոր աշխատանքով զբաղվող մարդիկ են, որոնք... որպես գիտամշակութային ընտրանի արդիականացնելով լեզվի գործառույթները՝ կանխում են հասարակական քառսը¹: Ցանկացած հասարակական ճգնաժամ լեզվի ժամանակավրեպության արդյունք է, այսինքն՝ լեզուն ճիշտ ժամանակին չի գտնում կամ էլ չի արդիականացնում այն անհրաժեշտ բառերը, որոնք բացակայում են լեզվից, և որոնց օգնությամբ ապահովվում են ինքնուրույն արդիականացման խնդիրները՝ պայքարելով սոցիո և էթնոմշակութային սահմանայնության (մարզինալության) դեմ: Ինչպես հավաստում է մշակութաբան, սոցիոլոգ Պ. Մ.Ֆուկոն, «... սահմանային արժեք ունեցող էթնիկ խմբերը հայտնվում են անցած, չմերժված և ներկայում չհաստատված արժեքային համակարգում»²: Ինքնության արդիականացումը փոխում է գիտատեխնիկական գրականության, մշակույթի լեզուն և հնարավորություն տալիս հաղթահարելու ժամանակի բոլոր ճգնաժամերը: Հանրահայտ ճշմարտություն է, որ լեզուն ազգի գոյության նախապայմանն է, և այս առումով

¹ М.Фуко, Слова и вещи, Археология гуманитарных наук, пер. с франц., часть 1 Мишель Визгина В.П., СПб, А-сэд, 1994, с.115.

² Նույն տեղում, էջ116;

ուշագրավ է մարդաբան, մշակութաբան Կլիֆորդ Գիրցի մոտեցումը³: Նա աֆրիկյան երկրների աղքատությունը և քաղաքական տևական ճգնաժամը բացատրում էր բնակիչների լեզվամտածողությամբ, բառապաշարի աղքատությամբ, օտար բառերի գործածությամբ (այդ երկրները Ֆրանսիայի և Անգլիայի նախկին գաղութներն էին): Որպես մշակութային ամբողջություն՝ լեզուները քիչ հիշողություն են իրենցում պարունակում, չեն կարողանում պատասխանել իրենց մշակույթին առաջադրված մարտահրավերներին, քանի որ բազմաշերտ չեն: Համաձայնելով Գիրցի հետ՝ նշենք նաև, որ լեզուն ազգային ինքնության արդիականացումը տվյալ ազգի կողմից մշակութային արժեքներ ստեղծելու կուտակած փորձի մեջ է: Փափոք Աստծո, հայ ժողովուրդը պատմության քառուղիներում իր բազմադարյան հարուստ մշակույթով պատասխանել է ժամանակի տարաբնույթ մարտահրավերներին և հասնելով 21-րդ դար՝ պահպանել իր ազգային ինքնությունը: Այս առումով էլ հստակեցնենք հետևյալ ելակետային դրույթը. ազգային ինքնությունը անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն համապատասխան սոցիալական կազմակերպման, այլև մշակույթի արդիականացման համատեքստում: Լեզվի միջոցով ազգային նույնականացման հարցը փոխկապակցման մեջ է ազգային ինքնորոշմանն ու ինքնագիտակցությանը, և այս առումով լեզուն է այն գերակա արժեքը, որի արդիականացման միջոցով ազգը ազգային գիտակցության շնորհիվ ձեռք է բերում ինստիտուցիոնալ բնույթ: Ազգային ինքնության արդիականացման գործընթացը լեզվի միջոցով է հստակեցնում մշակութային զարգացման ուղենիշերը՝ զձեռքով այն սահմանները, որոնց տիրույթներում ազգը հարաբերվում է այլոց հետ՝ պահպանելով իր անվտանգությունը:

Ազգային լեզվի արդիականացումը, մեր համոզմամբ, ենթադրում է հետևյալ նկատառումներով. ՀՀ ազգային լեզուն պետք է կարողանա ներառել գիտության, տեխնիկայի, գրականության և մշակույթի նորագույն եզրերի արդի հրամայականները՝ հարուստ բառապաշար, ոճաբանություն, միօրինակացված քերականական կառուցվածք ունեցող, քաղաքակիրթ մարդու վերացական մտածողության պահանջները առավելագույնս բավարարող ձևերում լեզու: Այս ձևով արդիականացումը դյուրին կկատարվի նաև Միյուոքում, ԼՂՀ-ում, քանի որ ինքնության արդիականացման հիմնախնդիրը լեզվի միջոցով դիտարկելը ունի նաև ազգապահպանման նշանակություն: Այս պատճառով էլ հարկ է լուրջ ուշադրությունն դարձնել ՀՀ-ում, ինչպես նաև Միյուոքում հայագիտական ամբիոնների պահպանմանը և զարգացմանը: Հայագետ հին սերունդը ծերացել է, իսկ նորերը չեն սիրում հայագիտությամբ զբաղվել, քանի որ մեր հանրապետությունում այն եկամտաբեր չէ. մինչդեռ հայագիտությանը անհրաժեշտ են նոր ամբիոններ և կենտրոններ, որոնք պետք է նպաստեն հայերենի տարածական քաղաքականության արդիականացմանը: Վերջիններս պետք է դառնան

³ Гирц Клифорд, Интерпретация культур, пер. с англ., М., Российская политическая энциклопедия (РОССПЭН) 2004, стр. 271

իմացաբանական, գիտահետազոտական կենտրոններ, որոնց միջոցով ոչ միայն կամբողջացվեն հայագիտական հետազոտությունների արդյունքները, այլև համայն մարդկությանը կներկայացվի հայերենի լեզվական արժեքը, հայ բազմաշերտ և բազմամակարդակ մշակույթը: Այս առումով մասնավորապես կարևորում ենք Մատենադարանի նոր և Էջմիածնի մատենադարանի շենքերի կառուցումը, որոնց հիմքի վրա ստեղծվել են հայագիտական կենտրոններ Եվրոպայում և լեզվի դասավանդման օնլայն գործընթացներ:

Լեզվի արդիականացման խնդիրը երկու սայր ունի, դրսևորման երկու չափումներով է ներկայանում. լեզվի արդիականացման միտումը նկատելի է մշակույթում, գիտակրթական համակարգում, այն զարգացնող ռազմավարական մտածողության տեր մարդկանց մոտ, սակայն լեզվի տերը ժողովուրդն է, և նա է արդիականացնում այն իր գործածությամբ: Անցյալ դարի 90-ական թվականներից սկսած՝ նորագույն գրականության պակասը, գուցե ոչ թե պակասը, այլ ընթերցանության պակասը, ինչպես նաև 2000թ. հետո հրատարակված գրքերի թանկությունն ու անորակությունը իջեցրել են ժողովրդի կրթության մակարդակը, և հանրային գիտակցության մեջ ունենք ոչ միայն ռաբիս երա-ժշտություն, այլև ռաբիս լեզու՝ ապ, ապե, քել :

Հայտնի է, որ ազգը պատասխանում է ժամանակի մարտահրավերներին, եթե կարողանում է սերունդներին մայրենի լեզվով մրցունակ կրթություն տալ՝ իրականացնելով ինչպես բարձրորակ թարգմանություններ, այնպես էլ տալով որակյալ դասագրքեր մայրենիով՝ ընդարձակելով գիտատեխնիկական և գեղարվեստական մտածողության տիրույթները. չէ՞ որ գրականությունը ազգային ինքնաճանաչման գեղարվեստական վավերագիրն է: Լեզվի զարգացումը տեղի է ունենում այս ոլորտներով, և այս մտայնությունը մեզ ծանոթ է դեռևս 5-րդ դարից, երբ Մաշտոցի՝ առաջնակարգ կրթություն ստացած աշակերտները Աստվածաշնչի, «Վարք սրբոցի», «Ճառընտիրի», «Հայսմավուրքի» հետ միաժամանակ թարգմանում էին Դիոնիսիոս Թրակացու (ն.թ. 170-90) «Արվեստ քերականին», Տիմոթեոս Կուզի «Հակաճառություն»-ը, Խիկար Իմաստունի իմաստասիրությունները՝ հարստացնելով հայերենի բառապաշարը անհրաժեշտ բառերով, տերմիններով, բառակազմական կաղապարներով, հատկապես՝ բառապատճենումներով: Հունաբան դպրոցի կողմից ստեղծված նախաձևացները զգալի չափով ընդլայնեցին հայերենի բառակազմական ոլորտը: Լեզուն դրսևորեց զարգացման նոր որակներ և հարատևեց մինչ մեր օրերը:

Այսօրվա հրամայականի տիրույթներում արդեն, երբ գործ ունենք համացանցի հնարավոր (վիրտուալ) իրականության, գովազդային տեխնոլոգիաների զարգացման հետ, բացառիկ նշանակություն է ձեռք բերել նաև ցուցափեղկերի, պաստառների, գովազդների՝ հանրության հետ կապերի միջոցով լեզվի արդիականացման խնդիրը: Այս առումով մտաբերենք, թե դեռևս ժամանակի մամուլում Ռ.Իշխանյանը Խորհրդային

Միության փլուզման տարիներին ինչ անզիջող պայքար էր մղում ռուսական կրթության և ռուսերենի գործածության դեմ: Այժմյան սերունդը ռուսերեն չգիտի կամ էլ վատ գիտի, և մենք կորցնում ենք այդ մշակութային շերտը, իսկ անզլերենի իմացությունը երիտասարդության շրջանում հիմնականում կենցաղային աստիճանի է, և այն մասնագիտան տեքստերի իմացության մակարդակ չի ապահովում: Այժմ նույն մտահոգությունն է հայ մարդու հոգում. այն ժամանակ ռուսերենն էր, այժմ՝ անզլերենը:

Լեզվի ինքնության և արդիականացման հարցերին կրքոտ կերպով անդրադարձել են դեռևս ժամանակի մեր մեծերը: Վ.Տերյանը իր «Հոգևոր Հայաստան», Դ.Դեմիրճյանը «Հայր» հոդվածում, այնուհետև՝ Պ.Սևակը: Նրանք ազգապահպան հարցերի քննությանն անդրադառնում են համամարդկային արժեքային համակարգի հետ համահունչ քայլելու պահանջով. «...սուրբ Մեսրոպի կամքով թե մեղքով, մեզ մնում է մե՛կ ճանապարհ՝ աշխարհի առաջադեմ երկրներից ետ չմնալու, նրանց հետ համաքայլելու ուղին...երեկվա իսկապես անզիր ու անզիրք ազգերը մեր աչքի առջև ստեղծում են այնպիսի գրական երկեր, որ ունենում են համամիութենական (ու համաշխարհային) հնչեղություն և ստիպում մեզ՝ թարգմանել դրանք»⁴: 1914թ. կարդացած զեկուցման մեջ Վ.Տերյանը, անդրադառնալով լեզվին՝ որպես ազգակերտման և պետականաշինման գործոնի, միաժամանակ անդրադառնում էր նաև կատարվելիք աշխատանքի դժվարություններին. «Այդ հոգևոր Հայաստանի կառուցումը ծանր ու տևական աշխատություն է պահանջում, անթիվ կյանքերի տոկոսն հավատ և գիտակցություն, անարյուն, բայց ազնիվ, գուցե ավելի դժվար, ավելի անհավոր զոհաբերում, քան արյունի զոհաբերումը:...Մի Բաֆֆի, մի Արծրունի, մի Նալբանդյան, մի Դուրյան նույնպես ասպետներ են, գուցե ավելի մեծ հերոսներ են, քան նրանք, որ կովի դաշտում են զոհաբերում իրենց կյանքը»⁵:

Լեզուն ազգի գոյության հիմնական նախապայմանն է, հետևաբար ազգի ինքնության արդիականացումը հնարավորություն կտա նրան՝ ազգին՝ լեզվի միջոցով պատասխանելու ժամանակի նետած բոլոր կարգի մարտահրավերներին: Մեր պարագայում՝ հայոց իրականության մեջ հայոց լեզվի պետական կիրառելիությունը համապատասխանում է մեր սահմաններին, և այն նաև բազմամիլիոն Սփյուռքի գոյապահպանման, ազգանպաստ քաղաքականության հիմքն է: Այս առումով հատկապես ուշագրավ են ՀՀ Սփյուռքի նախարարության կողմից իրականացված բազմաթիվ ծրագրերը, մասնավորապես ՀՀ-ում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (ՄԱԶՕ) կողմից նախաձեռնած «Գիտելիքների փոխանցում Սփյուռքի հայրենակիցների միջոցով» (TOKTEN) ծրագիրը: Նշենք նաև, որ այսօր ՀՀ-ում հայոց լեզուն ազգային ինքնության արդիականացման գործոնի պատասխանատուն է, քանի որ միայն

⁴ Պ.Սևակ, Երկեր 3 հատորով, հ. 3, Եր., 1983, էջ 32:

⁵ Վ.Տերյան, Երկերի ժող. 3 հատորով, հ. 3, Եր., 1975, էջ 79:

պետության ինստիտուտն է, որ հասարակական կյանքի կազմակերպման և կարգավորման իրավաքաղաքական նորմերի շրջանակներում իրականացնում է նպաստավոր լեզվական արդիականացման քաղաքականություն:

Ընտրված թեմայի հրատապությունը փորձենք հիմնավորել նաև Եվրոպայում առկա պետություն-ազգ-մշակույթ չափորոշիչների արդիականացման համատեքստում: Այս իմաստով ուշագրավ է մշակութաբան, քաղաքագետ Ուրես Ալտերմատի⁶ մոտեցումը, որը արևմտյան և արևելաեվրոպական հասարակությունների զարգացման գործընթացներում առաջարկում է միմյանցից տարբերակել իրար փոխլրացնող երկու հասկացություններ՝ պետական-քաղաքագիտական և մշակութային-ազգային: «Արևմտաեվրոպական ազգային պետություններում գերիշխող ժողովուրդները իրականացնում են պետության կառավարումը իրենց արժեշահային պատկերացումների համաձայն՝ միաժամանակ ինքնադրսևորման և ինքնաիրացման միջոցով ներկայացնելով իրենց սեփական մշակույթը»⁷, - գրում է նա: Եթե առաջինում գերակա է հավասարության և քաղաքական հասարակության (հանրույթի) սկզբունքը, որի համաձայն՝ առանձին անհատ քաղաքացին ինքն է որոշում այս կամ այն քաղաքական միավորին պատկանելու խնդիրը, ապա մշակութային ազգերի հասարակություններում շեշտվում է ազգի՝ որպես ընդհանուր ծագում և լեզու ունեցող էթնիկական հանրույթի գաղափարը; Ու.Ալտերմատի հետ անհնար է չհամաձայնել. առանց լեզվի, մշակույթի պետություն չի կայանում: Այս համատեքստում ուշագրավ է արդիական և ավանդական արժեքների համադրումը որպես լեզվի արդիականացման միջոց: Ինչպես հավաստում է Պ.Սևակը՝ դեռևս Մաշտոցը «...Մեր լեզուն հանեց այն աննախանձելի վիճակից, ինչ ունենում է աղքատ ազգականը իր մեծատուն բարեկամի տանը..., այն... պիտի միանգամից հասներ գահերեցության իր այն օրինական բարձին, որն այլևս չպիտի կարողանային խլել նրա արիական գոռոզ ազգակիցները...»⁸:

Արդի տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կտրուկ աճով պայմանավորված՝ խիստ մեծացել է լեզվի միջոցով ազգային ինքնության արդիականացման դերը: Այս գործընթացը հայ հասարակայնության ինքնության բնականոն արդիականացման գերակա հրամայականն է, քանի որ հնարավորություն է տալիս պատասխանելու ազգային ինքնությանն ուղղված մարտահրավերներին, ուստի լեզուն նաև ազգի անվտանգ գոյության հիմնական արժեքն ու գրավականն է:

⁶ Альтерман У. Этнонационализм в Европе, М., ПГУ, 2000 стр. 37-40.

⁷ Նույն տեղում, էջ 19:

⁸ Պ.Սևակ, Երկեր 3 հատորով, հ. 3., Եր., 1983, էջ 32:

ԼԱԼԻԿ ԽԱԶԱՏՐՅԱԼ

ՀՊՄՀ հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Հումանիտար և բնական գիտությունների աննախընթաց զարգացման պայմաններում XX դարի կեսերին ի հայտ եկան լեզվական համակարգի հետազոտման նորանոր բնագավառներ, որոնցից յուրաքանչյուրը լեզուն ուսումնասիրում է որպես հաղորդակցման կարևորագույն և հիմնական միջոց, որպես ճանաչողական հիմնական գործառույթ կատարող, որպես հոգևոր-նյութական մշակույթի բաղադրիչ և մշակութային գործիք, որպես համացանցի աշխատանքային գործիք և հեռահար ուսուցման միջոց, որպես տեքստային հաղորդակցության գործիք և միջտեքստային հարաբերությունների բացահայտման միջոց, որպես քաղաքական խոսույթի կազմակերպման միջոց և այլն:

Ահա հենց այդ առանձնահատուկ լեզվաբանության դրսևորումներն էլ կազմում են ժամանակակից լեզվաբանական նոր ուղղությունների բովանդակությունը: Դրանք են՝ հաղորդակցական լեզվաբանություն, ճանաչողական լեզվաբանություն, մշակութային լեզվաբանություն, համակարգչային լեզվաբանություն, տեքստի լեզվաբանություն, քաղաքական լեզվաբանություն և այլն:

Սույն հոդվածի շրջանակներում մենք կանդրադառնանք համակարգչային լեզվաբանության խնդիրներին, որ XX դ. 60-ական թվականներին անկախացավ որպես առանձնահատուկ լեզվաբանական ուղղություն¹: Քաղաքակրթության զարգացման՝ համացանցի դարաշրջանում առաջին պլան մղվեց համակարգիչը՝ որպես հաղորդակցության և տեղեկատվության նոր միջոց: Դա համակարգչային ծրագրերի, համակարգչային տեխնոլոգիաների կազմակերպման ընդարձակ դաշտ է, որտեղ համակարգչային տվյալները ծառայում են գործառական կադապարներ ստեղծելուն²: Ըստ այդմ, լեզվի համակարգչային կադապարավորումը դիտարկվում է որպես լեզվաբանության մեջ ծրագրավորման տեսության ներդրման գործընթաց: Համակարգչային քաղաքակրթության մեջ կարևոր տեղ է գրավում լեզվաբանությունը, որ զբաղվում է համակարգչային գործիքների կիրառման և նրան առնչվող գիտակարգերի հարցերով.

¹ Городецкий Б.Ю., Компьютерная лингвистика: моделирование языкового общения. –Вып. XXIV. - Компьютерная лингвистика. – М., 1989.

² Зубов А.В., Зубова И.И., Информационные технологии в лингвистике. – М., 2004.

- ա) հաղորդակցության կադապարավորում, մարդու և ԷՀՄ-ի փոխհամագործակցության ապահովում,
- բ) բնական լեզվի վերամշակման յուրահատուկ համակարգի ստեղծում,
- գ) տեղեկույթների որոնման և հիպերտեքստային համակարգի ստեղծում,
- դ) Internet համակարգչային ցանցի շահագործում և զարգացում,
- ե) մեքենական թարգմանության կազմակերպում,
- զ) տեքստի համակարգչային դիզայնի և նրա բաղադրիչների ստեղծում,
- է) համակարգչային ալգորիթմի մշակում,
- ը) մեքենական տարատեսակ բառարանների ստեղծում,
- թ) գիտատեխնիկական տեղեկույթի համակարգի լեզվաբանական ապահովում և այլն¹⁹:

Ստորև առաջին հերթին մենք կփորձենք ներկայացնել **համակարգչային ԼԲ-ի** ոլորտի հիմնական հասկացություններն ու տալ նրանց բովանդակային բնութագրերը: Ընդ որում, այդ հասկացությունները հիմնականում նորակազմություններ կամ նոր բառակապակցություններ են, որոնք կարիք են զգում ճշգրտման ու լրացման և, որ ամենակարևորն է, գիտական վերահսկողության: Մանավանդ որ վերոնշյալ գիտակարգերի ներսում ստեղծվել են մի շարք լեզվաբանական եզրույթներ, որոնց մի զգալի մասը կա՞մ անթարգմանելի է, կա՞մ անհիմաստ է դրանք թարգմանելը, ինչպես՝ **культурема, мифологема, кросскультура, պարագրաֆեմա, հիպերտեքստ** և այլն:

3Ժամանակակից համակարգչային լեզվաբանության բնագավառում ձևավորվել են մի շարք հիմնական հասկացություններ ու տերմիններ, որոնք ներկայացնում են այդ ոլորտի գործնական ուղղությունները, ինչպես՝ լեզվաբանական հաղորդակցական տեխնոլոգիաներ, լեզվաբանական ինֆորմատիկա, լեզվաբանական ալգորիթմ, կառավարման համակարգ, կիրառական ծրագրեր, ծրագրավորման լեզու, տվյալների բազա, տեքստերի ավտոմատ ճանաչման համակարգ, տեքստի ավտոմատ սեղմում, լեզվաբանական տեղեկատվական ռեսուրսներ, միջազգային ցանց, համակարգչային լեզվաբանության մեթոդներ, մեքենական թարգմանություն, հաղորդակցման կադապարավորում, համակարգչային բառարանագրություն, հեռավար ուսուցում, տեքստի ներկայացման հիպերտեքստային տեխնոլոգիաներ և այլն:

Այս հասկացություններից յուրաքանչյուրն ունի իր նպատակներն ու խնդիրները: Համակարգչային ԼԲ-ի բնագավառի առանցքային հասկացությունները հիմնականում տերմինակապակցություններ են:

³ Маслова В. А., Նշվ. աշխ., էջ 191-192:

Լեզվաբանական հաղորդակցական տեխնոլոգիաներ. դրանք կազմում են լեզվի մասին ինֆորմացիայի վերաձևավորման, դրանց պահպանման և տարածման միջոցների, օրենքների և մեթոդների ամբողջությունը, որոնք ներառում են դրանց կիրառման կանոնները:

Լեզվաբանական ինֆորմատիկա. գիտաճյուղ, որն ուսումնասիրում է լեզվաբանական տեղեկատվության վերամշակման և կազմակերպման օրենքներն ու սկզբունքները:

Լեզվաբանական ալգորիթմ. լեզվաբանական խնդիրների լուծման գործողությունների հաջորդականություն:

Համակարգչային ծրագրերի ապահովում. համակարգչային ծրագրերի ամբողջություն:

Կառավարման համակարգ. ծրագրային բաղադրատարր համակարգիչը ղեկավարելու համար:

Կիրառական ծրագրեր. ներառում են տեքստային գործընթացները (որոնք հնարավորություն են տալիս խմբագրելու և ձևաչափելու տեքստերը, ներառելու աղյուսակներ և գծապատկերներ), ինչպես նաև մեքենական թարգմանության տեքստի ավտոմատ սեղմման համակարգեր, ուսուցողական ծրագրեր (օրինակ՝ որևէ լեզվի ուղղագրությունն ուսուցանելու համար):

Ծրագրավորման լեզու. արհեստական լեզու, որ օգտագործվում է համակարգչով աշխատելու ժամանակ:

Տվյալների բազա. համակարգված տեղեկությունների, փաստերի, իրադարձությունների ամբողջություն:

Տեքստերի ավտոմատ ճանաչման համակարգ. համակարգչային ծրագիր, որը տեքստի թղթային տարբերակը վերածում է էլեկտրոնային տարբերակի:

Տեքստի ավտոմատ սեղմում. համակարգչի օգնությամբ տեքստի սեղմագիր տարբերակի ձևավորում:

Լեզվաբանական տեղեկատվական ռեսուրսներ. լեզվի մասին համակարգված տվյալների բազմություն, որ տեղակայված է համակարգչի հիշողության մեջ (միալեզվյան և բազմալեզվյան բառարաններ, տերմինաբանական բազային տվյալներ, տեքստային գրավոր զանգվածներ և այլն):

Միջազգային ցանց. միավորում է տեղային ցանցերը և առանձին համակարգիչներ, որի ընթացքում գործնականում ապահովվում է անսահմանափակ մուտք հաղորդակցական ռեսուրսների ոլորտ:

Համակարգչային լեզվաբանության մեթոդներ. դրանք ծրագրավորման տեսության և գիտելիքների ներկայացման մեթոդներն են:

Այժմ հանգամանորեն անդրադառնանք համակարգչային լեզվաբանության բնագավառի կարևորագույն ուղղություններին, որոնք առաջնահերթ նշանակություն ունեն այդ ոլորտում:

1. Մեքենական թարգմանությունը համակարգչի միջոցով լեզվական որևէ նյութի թարգմանությունն է մեկ այլ լեզվի: Մեքենական թարգմանությունը ենթադրում է հինգ հիմնական մակարդակների ապահովում՝ լեզվաբանական, ալգորիթմա-մաթեմատիկական, ծրագրային, տեղեկության և տրամաբանական:

ա) **Լեզվաբանական մակարդակը** ներառում է էլքի և մուտքի լեզուների քերականությունները և երկլեզվյան բառարաններ՝ մեծ ծավալի իմաստաբանական, ձևաբանական և շարահյուսական տվյալներով:

բ) **Ալգորիթմա-մաթեմատիկական մակարդակը** լեզվական փաստերի (տվյալների) ներկայացման ձևական մոդել է և այդ տվյալները մշակելու ալգորիթմը:

գ) **Ծրագրային մակարդակը** բաղկացած է մեծաքանակ տարատեսակ ծրագրերից, որոնք իրացվում են թարգմանության ալգորիթմի մեջ և սպասարկում են այդ ծրագրերին:

դ) **Տեղեկության մակարդակը** ներառում է այն առարկայական բնագավառի գիտելիքները, որին վերաբերում են թարգմանության ենթակա տեքստերը:

ե) **Տրամաբանական մակարդակը** ներառում է տրամաբանական եզրահանգումների կանոնները, որոնք թույլ են տալիս օգտագործել առարկայական բնագավառի վերաբերյալ գիտելիքներ տեքստի վերլուծության և համադրության ընթացքում⁴:

Մեքենական թարգմանության որակը մեծապես կախված է բառարանի և բառային միավորների մասին տեղեկության ծավալից, վերլուծության, համադրության աշխատանքների ալգորիթմների ստեղծման և ստուգման լրջությունից, ծրագրերի ապահովման արդյունավետությունից և այլն:

Ժամանակակից մեքենական թարգմանությունները իրականացվում են մասնագետների անմիջական մասնակցությամբ և նրանց ղեկավարությամբ՝ նախախմբագիր (նախապես վերամշակում է թարգմանության ենթակա տեքստը), միջխմբագիր (անմիջականորեն մասնակցում է թարգմանության ընթացքին), հետխմբագիր (ուղղում է մեքենական թարգմանության տեքստում հանդիպող սխալներն ու վրիպումները):

⁴ Стариченок В.Д., Большой лингвистический словарь. – Ростов на Дону, 2008.

2. **Համակարգչային բառարանափութային** շրջանակներում կարելի է դիտարկել երկու ասպեկտ՝

ա) նախապես հրատարակված բառարանների մեքենական թարգմանություն,

բ) նոր համակարգչային բառարանների ստեղծում:

Առաջին ուղղության բառարանները սովորական բառարանների պարզ թարգմանություն չեն համակարգչային ձևաչափով. այդ գործընթացը պահանջում է հին բառարանների մի շարք թերությունների հաղթահարում: Հայտնի է, որ բառարաններում ինչքան շատ են տրված լեզվական իմաստները, այնքան դժվար է դրանք (բառարանները) օգտագործել, դրա համար էլ աշխատում են հրատարակել համեմատաբար պարզ ուսումնական բառարաններ: Հին բառարանների մյուս խնդիրն էլ այն է, որ շուտ են հնանում: Համակարգչային բառարանները համեմատաբար գործնական պահանջարկ ունեցող հրատապ բառարաններ են:

Ռուսաստանում 1983թ. ԷՀՄ-ի օգնությամբ կազմվել է «Ռուսերենի իմաստաբանական բառարանը» (կազմողներ՝ Յու. Ն. Կարաուլով, Վ. Ի. Մուլչանով և ուրիշներ): Այն ներառում է 1600 թեմատիկ հասկացություններ և ընդգրկում է կյանքի բոլոր բնագավառները: Բառահոդվածում բառերը խմբավորվում են մի քանի իմաստների (գաղափարների) կամ դեակրիպտորի շուրջը (տեղեկության որոնման լեզվի բառական միավոր), որի իմաստը նրանք բացահայտում են: Այդ բառարանը պարունակում է լրացուցիչ տեղեկություններ բառական իմաստաբանության մասին, այդ թվում նաև տեղեկություն է հաղորդում բառական միավորների իմաստաբանական բազմապատկիչի և նրանց քանակի վերաբերյալ⁵ :

Համակարգում եղած բազային տվյալները միաժամանակ հնարավորություն են տալիս տեղեկություն ստանալ բառային ցանկացած միավորի բառական շրջապատի վերաբերյալ: Այդպիսի բառարանով ծնունդ է առնում բառարանների համակարգչային նոր տեսակը:

Համակարգչային բառարանագրական ծրագրերի իրականացումը հնարավոր եղավ միայն համակարգչային ծրագրերի և տվյալների էլեկտրոնային բազայի օգտագործման հետևանքով: Այսպես, ժամանակակից բառանագրությունը առավելապես օգտագործում է էլեկտրոնային տվյալների բազան, մասնավորապես՝ մեծ տեքստերի կորպուսները, որոնց ներսում համակարգիչը, ըստ հարցման, գտնում է պահանջվող բառը՝ իմաստային հնարավոր բոլոր վկայություններով: Այդ ճանապարհով էլ ձևավորվում է լեզվաբանական մի նոր ուղղություն՝ **կորպուսային լեզվաբանությունը**:

3. **Հեռավար ուսուցումը** գիտելիքներ ձեռք բերելու հնարավորություն է ընձեռում սովորողներին՝ տարածությամբ և ժամանակով հեռու գտնվելով ուսումնական

⁵ Маслова В. А., Նշվ. աշխ., էջ 195-196:

հաստատությունից. ուսուցման նոր ձև է, որի դեպքում գործում է հիմնականում ինֆորմացիայի փոխանցման հեռահաղորդակցության սկզբունքը:

Այդպիսի ուսուցումը հնարավոր է միայն ուսումնական հաստատությունները ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներով ապահովելով: Մասնագետի հետ անմիջական կապի բացակայությունը նոր մոտեցումներ է թելադրում ուսումնական գործընթացի կազմակերպման հարցում: Առաջինը՝ փոխվում է դասավանդողի դերը. նա այլևս չի դառնում նոր տեղեկույթի աղբյուր, այլ հանդես է գալիս ուղեկցորդի (գիդի) դերում, որպես միջնորդ: Նա պետք է միայն ուղղորդի սովորողներին, թույլ չտա մոլորվել նոր տեղեկություն յուրացնելիս կամ կորցնել հետաքրքրությունը ուսման նկատմամբ: Երկրորդ՝ կրթության գործընթացի կենտրոնում հայտնվում է սովորող անհատը, որ ուղեկցորդի օգնությամբ կազմակերպում է սեփական ուսումնառության գործընթացը՝ ինքնուրույնաբար ձեռք բերելով պահանջվող տեղեկություններ:

Հեռավար ուսուցմամբ կարելի է յուրացնել ցանկացած առարկա, այդ թվում նաև՝ օտար լեզուներ: Համակարգչային լեզվաբանության բարդ խնդիրներից մեկն է լեզուների ուսուցումը: Դա ուսուցման առանձին բնագավառ է՝ իր ուրույն մեթոդիկայով, նպատակով ու խնդիրներով: Այդ դեպքում <<լեզու>> եզրույթով հասկացվում են ոչ միայն քերականական կանոնների համակարգը կամ հաղորդակցության գործառական միջոցները, այլևս հասարակական և մշակութային մի շարք երևույթներ:

Հաղորդակցական նոր միջոցները ներառում են համակարգչային բազմապլան ծրագրեր, համացանց և այլն:

Համակարգչային ծրագրերի օգտագործումը պայմանավորված է հոգեբանական գործոններով. ուսուցման ինտերակտիվ միջոցները ապահովում են հետաքրքրությունը լեզվի ուսուցման նկատմամբ, օգնում են հաղթահարել թերահավատությունը, ինքնուրույնաբար կազմակերպել ուսուցումը, կրկնել վարժությունները, ստանալ անհրաժեշտ բացատրություններ և այլն: Այդպիսի ուսուցման գործընթացում ձևավորվում է **լեզվական անհատը**:

Օտար լեզուների հեռավար ուսուցման դասընթացների ծրագիր մշակողները աշխատում են ապահովվել լեզվական առարկայական հաղորդակցում սովորողների և ուղեկցորդի միջև, այլապես առանց այդ կապի օտար լեզվի ուսուցումն անիմաստ է դառնում: Չնայած առայժմ այդ խնդիրը վերջնականապես վճռված չէ, այնուամենայնիվ բազմաչափ տեխնոլոգիաների, տեսա-լսողական սարքավորումների օգտագործումը կարելի է դիտել որպես զգալի առաջընթաց այդ բնագավառում:

4. Հաղորդակցության կադապարավորում

Լեզվաբանական կադապարի հասկացությունը առաջացել է կառուցվածքային լեզվաբանության մեջ (Կ. Բյուլեր, Չ. Հարիս, Չ. Հոկկետ), սակայն գիտական

կիրառություն է ստացել XX դ. 60-70-ական թվականներին մաթեմատիկական լեզվաբանության բնագավառում և լեզվաբանության ոլորտ կիրեննետիկայի գաղափարների ու մեթոդների ներթափանցմամբ: Լեզվաբանության մեջ կաղապարը դիտվում է լեզվի կառուցվածքային միավոր՝ տիպ, բաղադրիչ (կազմիչ) տարրերի հետևողական (ընդհանրական) շարք՝ դրանց կանոնավորված փոխկապակցվածությամբ (փոխհարաբերությամբ): Կաղապարավորումը լեզվի կառուցվածքային միավորների բացահայտումն է ու դրանց ձևակերպումը որոշակի բանաձևերով: Լեզվի կառուցվածքային տարրերի ձևայնացումը հարաբերականորեն պարզունակ կաղապարներից առավել բովանդակալից կաղապարների փոխադրելու և դրանով հանդերձ լեզվի էությունն ամբողջովին բացահայտելու միջոց է: Հետևաբար լեզվական կաղապարները բաղադրիչ տարրերի հետևողական շարքեր են՝ դրանց կանոնավորված փոխկապակցությամբ (փոխհարաբերությամբ), որոնք միմյանցից տարբերվում են այդ կարգերի քանակով, դիրքով և պարտադրականությամբ⁶:

Կաղապարը պետք է կանխագուշակի և բացահայտի կաղապարվող առարկայի վարքագիծը: Տեսական լեզվաբանության մեջ օգտագործվում են կաղապարների հետևյալ տեսակները՝

- ա) համակարգչային կաղապարներ կամ կառուցվածքային կաղապարներ (ինչից է բաղկացած X – ը),
- բ) կանխագուշակող կաղապարներ (կոսիեղ X-ի վարքագիծը այս կամ այն հանգամանքներում),
- գ) նմանակող կաղապարներ (արտաքուստ նմանվել X-ին),
- դ) տարժամանակյա կաղապարներ (ինչպես և ինչու է փոխվում X-ը ժամանակի ընթացքում)⁷ :

Կաղապարների այս կարգի խմբավորման առանձնահատկությունն այն է, որ դրանք նմանակում են մարդու խոսողական գործունեությունը: Լեզվի համակարգչային ուսուցման ընթացքում հրատապ են այն ծրագրերը, որոնք կոչվում են <<երկխոսությունը նմանակող կաղապարներ>>: Դա սովորողների ընդգրկումն է հաղորդակցության գործընթացում. համակարգիչն այդ դեպքում ստեղծում է երևակայական գրուցակցի կաղապարը, որի հետ երկխոսության մեջ է մտնում լեզվական անհատը:

5. Հիպերտեքստային տեխնոլոգիաներ

⁶ Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ 11: Լ.Մ.Խաչատրյան, Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում, Ե., 2011, էջ 3-10:

⁷ Апресян Ю. Д., Интегральное описание языка и системная лексикография, Избранные труды, т. 2, М., 1995.

Դրանք մեծածավալ տեքստերի բազմություններ են, որոնք միավորված են իրենց հարաբերություններով (համակարգչային մոտեցումներով), այլ կերպ ասած՝ դրանք տեքստային զանգվածներ են՝ գծային կառուցվածքով: Հիպերտեքստի ստեղծումը նոր տեղեկատվական դարաշրջանի սկիզբն է, որ հակադրվում է գրատպության շրջանին: Հիպերտեքստային տեխնոլոգիաները թույլ են տալիս հեշտությամբ կապակցել տեղեկության տարբեր տեսակներ՝ սովորական տեքստ, նկար, գծանկար, աղյուսակ, գծապատկեր, տեսահոլովակ և այլն:

Հիպերտեքստի տարածքում տեղեկույթի ամբողջ ծավալը անկախ է փոխկախվածությունից (հիերարխիայից), ունի հավասարաթեք նշանակություն, և ապահովված է նրա հավասար հասանելիությունն օգտագործողների համար⁸: Հիպերտեքստի օրինակ են մասնագիտական տերմինաբանական բառարանները, համաբարբառները և այլն: Տերմինաբանական բառարանում, օրինակ, հոդվածներն ունեն հղումներ այդ բառարանի այլ հոդվածների, իսկ համաբարբառում գլխաբառի բոլոր շարահյուսական կիրառությունները, որոնք սփռված են բնագրի տարբեր տարածություններում, հավաքված են մի տեղ՝ միննույն գլխաբառի ներքո: Համաբարբառը, հաճախականության բառարանի հետ համեմատած, թույլ է տալիս բացահայտել բանալի բառերը և հասկանալ հեղինակի աշխարհայացքն ու աշխարհընկալումը:

Հիպերտեքստն ըստ էության ինքնակազմավորված տեքստ է. այդ տերմինը այժմ առավել հաճախ փոխարինում է համակարգչային տեքստին: Համակարգչային ծրագրերը, որոնք ապահովված են հիպերտեքստով, թույլ են տալիս՝

- 1) ապահովել տեղեկույթի արագ դիտարկում,
- 2) վերամշակել մեջբերման կամ առաքման հարաբերությունները,
- 3) հարստացնել առկա տեքստը նոր տեղեկույթներով,
- 4) անցում կատարել մեկ էլեմենտից մյուսին,
- 5) ճանապարհորդել հիպերտեքստում՝ բացահայտելով նոր տեղեկույթներ⁹:

Ըստ այդմ, հիպերտեքստը տեղեկույթի շարադրման, պահպանման և ներկայացման յուրահատուկ միջոց է, այն տեքստ չի համարվում բառի ուղղակի իմաստով, այլ հանդես է գալիս որպես այդ տեքստի կադապար: Դա թույլ է տալիս ընթերցողին (փնտրողին) ընտրել տեղեկույթի ընկալման հաջորդականությունը, քանի որ հիպերտեքստը չունի ոչ սկիզբ և ոչ էլ վերջ:

⁸ Караулов Ю.Н., Новый взгляд на возможности писательской лексикографии // Ломоносовские чтения 1994. – М., 1994.

⁹ Маслова В. А., Եզվ. աշխ., էջ 201:

Հիպերտեքստը հաղորդակցման ավտոմատ համակարգին մոտենալու (մուտքի) թույլտվություն է ընձեռում, որի ընթացքում տարբեր տեքստերի միջև հաստատվում են (վերականգնվում) որոշակի կապեր՝ ինչպես տվյալ կայքի այլ բաժիններ, այնպես էլ այլ կայքերի հղում կատարելու միջոցով:

Չնայած այն բանին, որ հիպերտեքստային տեխնոլոգիաները լայն կիրառություն ունեն համակարգչային լեզվաբանության բնագավառում, այնուամենայնիվ հիպերտեքստի կազմման լեզվաբանական սկզբունքները և դրանց համարժեք լեզվաբանական բնութագրերը դեռևս ամբողջապես մշակված չեն:

Համակարգչային լեզվաբանությունը ժամանակակից լեզվաբանական ուղղությունների համատեքստում կարևոր տեղ է զբաղեցնում, քանի որ այն զբաղվում է ինչպես բարձր տեխնոլոգիաների ներդրման միջոցով լեզվական հաղորդակցում ապահովելու, այնպես էլ լեզվական տեղեկատվություն որոնելու, այն մատուցելու և հարակից այլ խնդիրներով: Մյուս կողմից՝ համակարգչային լեզվաբանության տեսական ու գործնական ոլորտների հասկացությունները, որպես նորաբանություններ և նորակազմություններ, հարստացնում են լեզվի բառային կազմը: Իսկ այս հարցում պետք է ուշադիր և հետևողական լինել, որպեսզի լեզվում տեղ չգտնեն անհարկի բառերն ու բառագործածությունները:

ՅՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի վարիչ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԼԵԶՎԱԿԱՆ ԿԱՆՈՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Զեկուցման վերնագիրը ենթադրում է, որ խոսքս վերաբերելու է արդի հայերենի **տեղաշարժերին**: Բայց պատեհ առիթը ունենալով՝ ձեր ուշադրությունը պետք է հրավիրեմ նաև մեր օրերում իրականացվող լեզվաքաղաքականության մի քանի այլ կողմերի վրա: Դրանք են՝ **գրական և խոսակցական լեզուների փոխհարաբերության հարցը, փոխառություններ և տերմինաշինություն, կրթական ծրագրեր և դասագրքեր, արևելահայերենի և արևմտահայերենի առնչություններ**:

Նախ՝ առաջինի մասին. տեղաշարժեր:

Լեզվի զարգացման ընթացքում ժամանակ առ ժամանակ անհրաժեշտություն է առաջանում կատարված փոփոխությունների ընտրության, մշակման և քերականության դասագրքերում դրանց ամրագրման: Դա անխուսափելի գործընթաց է, որի չիրականացման դեպքում ստեղծվում է անջրպետ նույն լեզվի գրական և խոսակցական տարբերակների միջև: Մեր լեզվի այդ տարբերակները զգալիորեն հեռացած են իրարից: Այդ տարանջատումը առկա է եղել ի սկզբանե՝ ձևավորման շրջանից սկսած: Գնալով այն ավելի է խորացել:

Վերջին տասնամյակներին էական տեղաշարժեր են արձանագրվել հայերենի բոլոր մակարդակներում՝ սկսած արտասանությունից, բառապաշարից մինչև շարահյուսական համակարգ: Մինչդեռ գործող դասագրքերում և բառարաններում ամրագրված է դրանց մի աննշան մասը միայն: Կարծիքներն ու տեսակետները փոխանցվում են դասագրքից դասագիրք, բառարանից բառարան՝ երբեմն առանց դույզն փոփոխության:

Օրինակ, անվերապահորեն կարող ենք պնդել, որ այսօր արևելահայ գրական լեզվի ձայնեղ պայթականների արտասանության մեջ իշխող միտումը խուլ-ձայնեղ տեղաշարժն է. ոչ թե՛ **զարքացում, մերցավոր, հաշմանթամ, նվաքել, արքելք**, ինչպես թույլատրում է գրական հայերենի արտասանական նորմը, այլ՝ **զարգացում, մերձավոր, հաշմանդամ, նվազել, արգելք**, ինչպես հնչում է կենդանի լեզվում: Կամ՝ **կ և չ**

քերականական մասնիկներից հետո հիմնականում արտասանվում է **վօ** կամ **յէ**. այսինքն՝ արդի արտասանությունն է ոչ թե՝ **կօրոշեն, կենթադրեն, չօրոնեն, չօղջունեն, այլ՝ կըվօրոշեն, կըյենթադրեն, չըվօրոնեն, չըվօղջունեն**: Կամ՝ առնվազն տարակուսելի է **իա, եա, իու** և նման ձայնավորական գուգորդումներում պահանջել **յ** ձայնակապի անպայման հստակ արտասանություն՝ **էական, հիյանալի, միյանալ**, կամ՝ դրանց՝ **յա**-ով արտասանությունը, օրինակ՝ **Անդրյասյան, քրիստոնյական**, որը թելադրվում է արդի լեզվական կանոնով ու դասագրքերով, բայց որը ակնհայտ հակասության մեջ է իրական արտասանության հետ:

Բայի խոնարհման համակարգում հնացած ու գործածությունից դուրս եկած շատ կազմություններ դասագրքերում ու նույնիսկ բուհական ձեռնարկներում շարունակում են հիշատակվել ոչ միայն որպես գործածվող, այլև նախընտրելի ձևեր, ինչպես՝ **մի՛ մտնիր (մի՛ մտիր), մի՛ մոտեցնիր (մի՛ մոտեցրու), մի՛ կարդաք (մի՛ կարդացեք), մի՛ մոտենաք (մի՛ մոտեցեք)** և այլն:

Վերջին երկու տասնամյակում հայերենը հարստացել է մի քանի տասնյակ հազար **նոր բառերով** ու **բառիմաստներով**: Եղած բացատրական բառարանները իրենց հիմնական դերը կատարել են: ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնը ձեռնարկեց բացատրական նոր բառարանի հրատարակություն, բայց գործընթացը արդեն տասնամյակի պատմություն ունի:

Մի իսկական խառնաշփոթ է տիրում մեծատառերի ուղղագրության մեջ: Մի քանի տարի առաջ Հովհաննես Բարսեղյանի կատարած հապճեպ փոփոխությունները ավելի ծանրացրին իրավիճակը: Անհրաժեշտ են բացատրական, ուղղագրական-ուղղախոսական նոր բառարաններ:

Արդի լեզվավիճակում բազմաթիվ են այս կարգի իրողությունները: Դրանք պետք է քննարկվեն, փոփոխությունները պետք է մշակվեն և ամրագրվեն նորմատիվ քերականության դասագրքերում: Դա պետք է կատարվի մասնագետների ձեռքով, խստորեն ընտրողաբար՝ իրականացնելով հավասարակշռված ու նպատակային քաղաքականություն:

2. Փոխառություններ և տերմինաշինություն: Հայտնի արտահայտություն կա լեզվաքաղաքականության մեջ մաքրամոլությունը նույնքան վնասակար է, որքան օտարամոլությունը: Փոխառություններից խուսափելը և օտար բառերի անպայման հայացումը այսօր չունեն արդարացում: Չկա ուժացման վտանգ, և փոխառությունները չէ, որ պիտի խաթարեն մեր լեզվի կամ հայի ազգային որակներն ու հայեցի նկարագիրը:

Բառագործածության մեջ հայերեն հաջող համարժեքը, անշուշտ, նախընտրելի է, ինչպես՝ **ինտերնետ-համացանց, կրեդիտ-արժենիշ, ամնիստիա-համաներում**: Բայց եթե հայերեն համարժեքը ճշգրտորեն չի արտահայտում հասկացության բովանդակությունը, կարճ ու բարեհունչ չէ, տերմինային համակարգում չունի գործառական

հնարավորություններ, ուրեմն պետք է հրաժարվել դրանից. օրինակ՝ **բանկ, կոնսերվատորիա, տանկ, ֆինանսական** բառերի հայերեն տարբերակները՝ **դրամատուն, երաժշտանոց, հրասայլ, էլեմտային**, վերը նշված հասկանիշներով էապես զիջում են օտարալեզու տարբերակներին: Էլ չեմ խոսում ժամանակ առ ժամանակ չգիտես ում ձեռքով հրապարակ նետված անհեթեթ նորակազմությունների ու տերմինների մասին:

Խնդիրը դժվարին է և լուծման համար պահանջում է լեզվաբանների և այլ բնագավառի մասնագետների համատեղ ու հետևողական աշխատանք:

Մեր լեզուն հարուստ է: Նաև ճկուն է ու գեղեցիկ: Բայց այդ որակները հայերենը ցավոք պահպանել է գործածության միայն որոշակի ոլորտներում՝ գեղարվեստական գրականություն, պարբերական մամուլ, առօրյա-խոսակցական լեզու: Պատկերը բոլորովին այլ է պաշտոնական գրագրություններում, գիտական գրականության մեջ: Տեխնիկական գիտությունների լեզվում հայերենի տերմինաբանությունը էապես կաղում է: Պետք է լրջորեն զբաղվել հայերեն համարժեքների ստեղծմամբ՝ բնավ չխորշելով փոխառություններից: Ժամանակին այս հարցերով զբաղվում էին լեզվի պետական տեսչությանը կից տերմինաբանական կոմիտեն, լեզվի բարձրագույն խորհուրդը: Այսօր մեղմ ասած բարձիթողի վիճակ է: Լեզվի բարձրագույն խորհրդի վերջին նիստը, եթե չեմ սխալվում, գումարվել է հինգ տարի առաջ:

Փոխառությունները հայերենի հարստացման կարևորագույն աղբյուր են և չեն սպառնում նրա ինքնությանը: Սպառնացող ավելի մեծ վտանգ կա այլ ոլորտներում՝ օտարալեզու դպրոցներ, քաղաքի փողոցները ողողած այլալեզու գովազդներ, էլեկտրոնային ցանցերում և բջջային կապի մեջ իշխող լեզվավիճակ, զանգվածային լրատվամիջոցների լեզուն, մասնավորապես հեռուստալեզուն. վերջինս լեզվադաստիարակության գործում ձեռք է բերել ազդեցության անմրցելի հնարավորություններ և լեզվական անճիշտ ու անվերահսկելի իր քաղաքականությամբ մի իսկական աղետ կարող է դառնալ հեռուստալսարանի, մանավանդ երիտասարդ սերնդի համար: Փողոցի լեզուն չպետք է ներխուժի հեռուստատեսություն կամ մամուլ: Անհրաժեշտ են լեզվական օրենսդրության խստացումներ և վերահսկողություն: Հակառակ դեպքում մենք անվերադարձ կկորցնենք մեր ազգային լեզվի շատ որակներ:

3. Կրթական ծրագրեր և դասագրքեր: Հայեցի կրթության հիմքը դպրոցն է: Դպրոցական դասագրքերի դերը այս գործում բացառիկ է: Դրանք ուղենիշ են և անվերապահ չափանիշ: Փորձը ցույց է տալիս, սակայն, որ այս ոլորտում կան էական բացթողումներ՝ սկսած ծրագրերի մշակումից, դասագրքերի ընտրությունից, մինչև ավագ դպրոցում կրթական գործընթացի ճիշտ կազմակերպում և ընդունելության քննություններ: Հանրակրթական դպրոցի ծրագրերը կազմվում են հապճեպ, առանց հիմնավոր փորձաքննության ու մշակման, դասագրքերի ճակատագիրը հաճախ կանխորոշվում է ի վերուստ, դասագրքերի մրցութային հանձնաժողովի անդամները ընտրվում են ետնաբեմերում: Ընդ որում, հանձնաժողովը ընտրում է դասագիրքը՝

ծանոթ լինելով դրա բովանդակության մի մասին: Մեզանում չի գործում նաև այլընտրանքային դասագրքերի համակարգը, մի բան, որ ընդունված է Ռուսաստանում և եվրոպական երկրներում: Զգալի անհամապատասխանություն կա կրթական ծրագրերում ամրա-գրված նյութի և դասագրքերի ու շտեմարանների բովանդակության միջև: Կրթության մասին օրենքում հստակ ասվում է, որ դպրոցական դասագրքերի բովանդակությունը և քննական նյութը խստորեն պետք է համապատասխանեն գործող ծրագրերին: Մինչդեռ իրականությունը բոլորովին այլ է: Ընդունելության քննությունների համար հրամցվող առաջադրանքների մի զգալի քանակ դուրս է դպրոցական ծրագրի շրջանակներից (օրինակ՝ **հնացած կամ բարբառային բառապաշար, խոսքիմասային փոխանցումներ, կրկնաստեղծություն, բազմաբարդ նախադասություններ, հայ գրականությունից ծրագրից դուրս անգիր հանձնարարվող նյութեր** և այլն):

Չեն պահպանվում օրենքով սահմանված նաև այլ նորմեր, այսպես՝ ըստ կանոնադրության՝ հնարավոր սկզբունքային սխալներից ու անճշտություններից խուսափելու համար քննական նյութերը պետք է ընտրվեն այն ձեռնարկներից, դասագրքերից ու ժողովածուներից, որոնք անցել են գործածության մեկ տարվա փորձաշրջան և փորձաքննության են ենթարկվել Կրթության ազգային ինստիտուտում: Հայոց լեզվի վերջերս հրատարակված քննական շտեմարանից կարճ ժամանակում խոտանվեց կամ սրբագրվեց մոտ հարյուր առաջադրանք. հարյուրից ավելին էլ դեռ վերանայման կարիք ունի: Եվ պատճառը բնավ էլ միայն գործի նկատմամբ անփույթ ու թափփված վերաբերմունքը չէ:

Բոլոր դեպքերում, այսպիսի մոտեցումը լեզվի հանդեպ ստեղծում է կանխակալ վերաբերմունք, ընկնում է մայրենի լեզվի հեղինակությունը:

Այս ոլորտում քննարկման առարկա կարող է դառնալ նաև մեկ այլ հարց. որքանով է նպատակահարմար շտեմարան կոչվածի գոյությունը: Շտեմարանը վնասում է կրթական գործընթացին. ընկնում է դպրոցական կրթության հարգը, երկրորդ պլան են մղվում դասագրքերը, լայն դուռ է բացվում կրկնուսուցման համար, բթանում է ստեղծագործական միտքը՝ ի շահ սերտողաբար յուրացման: Պատահական չէ, որ շատ երկրներում հրաժարվել են այդ փորձից:

Հատուկ ուշադրության է արժանի բուհերի ոչ մասնագիտական ֆակուլտետներում հայերենի դասավանդման խնդիրը: Այդ ֆակուլտետներում հայերենը ուսուցանվում է մեկ տարով՝ շաբաթական 2 դասաժամով: Նախկինում 2 տարով էր և 4 դասաժամով: Առարկան էլ այժմ կոչվում է հայոց լեզու և գրականություն: Սա անընդունելի մոտեցում է. նախ՝ լեզուն և գրականությունը տարբեր առարկաներ են և չեն կարող մատուցվել և ուսուցանվել միասնաբար, և երկրորդ՝ անհնար է այդ առարկաների ուսուցումը այդչափ ժամաքանակով: Առարկան պետք է կոչվի <<Հայոց լեզու և խոսքի մշակույթ>> և դասավանդվի նպատակային կերպով՝ ծառայելով տվյալ մասնագիտության պահանջներին:

4. Եվ վերջին հարցը, որի մասին կուզեի խոսել՝ **արևելահայերենի և արևմտահայերենի առնչություններ**: Այս հարցում մշակվող արդի լեզվաբաղադրականությունը, կարծում եմ, պետք է ունենա երկու հիմնական ուղղվածություն. 1. պահպանել, մշակել և զարգացնել արևմտահայերենը, 2. սկզբունքներ մշակել երկու գրականները հնարավորինս մերձեցնելու համար:

Արևմտահայերենով հաղորդակցության մեջ են տարբեր հաշվարկներով 1.5-2 մլն մարդ: Այդ թիվը օրեցօր նվազում է: Մեկ կենտրոնից ղեկավարվելու չգոյությունը, գերիշխող լեզուների ազդեցությունը, հայերենով կրթություն ստանալու անհեռանկարը և էլի բազմաթիվ գործոններ Սփյուռքում ծանր պայմաններ են ստեղծում արևմտահայերենի պահպանման համար: Այս պայմաններում արևմտահայերենը կենդանի պահելու հիմնական կենտրոնը մնում է Հայրենիքը:

Վերջին երկու տասնամյակում Հայաստանում մեծ աշխատանք է կատարվել այդ ուղղությամբ. ստեղծվել են արևմտահայերենի դասարքեր և ձեռնարկներ, հրատարակվել է արևմտահայերենի նոր բառարան, արևմտահայերենից պաշտպանվել են մեկ տասնյակից ավելի ատենախոսություններ, մի շարք բուհերում բացվել են արևմտահայերենի ուսուցման ընդհանուր և հատուկ դասընթացներ, ընթացքի մեջ է սփյուռքի համար արևմտահայերենի միասնական դասագրքի ստեղծումը, որ նախաձեռնել էր Սփյուռքի նախարարությունը, նոր ուսումնական տարում ԵՊՀ-ում կգործի արևմտահայերենի երկամյա մագիստրոսական ծրագիր: Բայց անելու դեռ շատ բան կա: Թույլ է, օրինակ, համագործակցությունը սփյուռքի հայերենագիտական կենտրոնների հետ, քիչ են փոխայցելությունները, լուծման դժվարություններ ունի ուսանողների փոխանակման խնդիրը, Հայաստանի հանրակրթական դպրոցներում համապատասխան և բավարար չափով չի ուսուցանվում արևմտահայերենը:

Անհերքելի ճշմարտություն է, որ արևմտահայերենը պետք է պահպանել և զարգացնել ոչ միայն որպես գուտ լեզվական հարստություն, այլև որպես ազգային ինքնության պահպանման կարևորագույն գործիք Սփյուռքում և Հայաստանում:

Արևելահայերենի և արևմտահայերենի **մերձեցման խնդիրը** քննության առարկա է դարձել դեռևս 19-րդ դարի կեսերից՝ գրական լեզուների ձևավորման շրջանից սկսած: Ակտիվ քննարկումներ ծավալվեցին նաև 20-րդ դարասկզբին: Այսօր հարցը վերստին ասպարեզի վրա է, որովհետև նշմարվում են դրա լուծման նոր հնարավորություններ ու նոր գործոններ, ինչպիսիք են՝ Սփյուռքի նախարարության և սփյուռքին առնչվող գիտակրթական նոր կառույցների հիմնարկումը, Հայրենիք-Սփյուռք տնտեսական, մշակութային ակտիվ առնչությունները, փոխադարձ շփումներն ու այցելությունները, հարցի նկատմամբ ազգային-հասարակական աննախադեպ հետաքրքրությունը:

Մերձեցման հնարավորություններ առկա են լեզվական բոլոր մակարդակներում, հատկապես բառապաշարում: Երկու-երեք տասնամյակում արևմտահայերենից

արևելահայերենին են անցել հազարից ավելի նոր բառեր ու բառիմաստներ: Մերձեցման բոլոր հնարավորությունները կարող են լինել քննարկումների առարկա:

Վերջին շրջանում <<մեկ ազգ, մեկ լեզու>> կարգախոսով մերձեցման գլխավոր պայման ու գործոն է հռչակվում **մեսրոպյան ուղղագրության վերականգնումը**. ակնհայտ է սակայն, որ արևելահայերեն-արևմտահայերեն առնչություններում ուղղագրության տարբերությունը առկա տարբերությունների մի հատվածն է միայն և բնավ էլ ոչ հիմնական: Առավել մեծ տարբերություններ կան մեր լեզվի երկու ճյուղերի արտասանական համակարգերում ու քերականության մեջ: Այլ խնդիր է, որ հարցի ինչ-ինչ առումներ ու կողմեր կարող են քննարկվել՝ ի շահ երկու գրականների մերձեցման: Ընդ որում, այս կարգի բոլոր քննարկումները հենց սկզբից պետք է ընթանան մի կարևոր վերապահումով. ուղղագրության հարցը մասնագետների գործն է, և քաղաքական գործիչներն ու դիլետանտները հեռու պիտի մնան հարցը շահարկելու գայթակղություններից:

Ավարտելով խոսքս՝ ուզում եմ շեշտել հետևյալ միտքը. արդի լեզվաքաղաքականությունը իրականացնող կամ դրան մասնակից բոլոր օղակները՝ դպրոց թե լեզվի տեսչություն, բուհական ամբիոն թե գիտական կամ ուսումնական կենտրոն, անհատ թե կազմակերպություն, պետք է գործեն նպատակադիր ու հետևողական՝ համախմբված մի կենտրոնի շուրջ: Կառավարման առումով այդպիսի կենտրոն կարող է լինել նախագահին կամ կառավարությանը առընթեր լեզվի բարձրագույն խորհուրդը: Յուրաքանչյուր օղակ պետք է ունենա գործի ու պատասխանատվության իր բաժինը և առաջնորդվի լեզվի գերակա շահով ու մեկ հիմնական սկզբունքով. այն է՝ լեզուն բացարձակ արժեք է, և նրան վերաբերող խնդիրները պետք է քննարկվեն ու լուծվեն ա՛յդ տեսանկյունից և ա՛յդ չափանիշներով:

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ գրականության

և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ,

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՒՄ

Գրականության դերն անփոխարինելի է որևէ լեզվի ուսուցման խնդիրներում. սա աքսիոմատիկ ճշմարտություն է, և ով շեղվում է այդ ճշմարտությունից, հայտնի է, որ սովյալ լեզվի շահերի պաշտպանը չէ:

Հայ գրականությունը հատուկ տեղ ու դեր ունի հայոց լեզվի ուսուցման խնդրում. այս նուրբ իրողությունը մեծապես կապվում է մեր ազգի պատմական ճակատագրի հետ: XVIII դարում Եվրոպայում մեծանում է հետաքրքրությունը դեպի Արևելքն ու արևելյան երկրները, այդ երևույթն առավել ծավալուն ձևով դրսևորվում է XIX դարում: Ստեփանոս Նազարյանը Ֆիրդուսու «Շահ Նամեին» նվիրված հետազոտության ներածության մեջ ուրախությամբ նշում է Եվրոպական գիտության հայացքի փոփոխությունը դեպի Արևելքի երկրները, որոնց ժողովուրդներին այլևս չէին համարում ուշադրության ոչ արժանի էակներ՝ «մարդկության կորած զավակներ»¹: Այս դիտարկումը նա կատարում է՝ ելնելով այն պատմական փաստից, որ Եվրոպայի երկրներում՝ Ֆրանսիայում, Գերմանիայում, Անգլիայում, Բելգիայում և Իտալիայում սկսում է զարգանալ հայագիտությունը: Այդ երկրների մեջ առաջին տեղում Ֆրանսիան էր և ֆրանսիական հայագիտության հիմնադիրը՝ Ժան, Անտուան Սեն–Մարտենը: Ոմանց կարող է թվալ, թե շեղվում եմ լեզվի և գրականության կապի առաջադիր խնդիրներից, բնավ՝ ոչ:

Երբ Սեն–Մարտենը 1818 թվականին, ընդամենը 27 տարեկանում, Փարիզում հրատարակեց իր գլուխգործոցը՝ «Հիշատակարաններ Հայաստանի պատմության և աշխարհագրության» երկհատոր աշխատությունը, և առաջին անգամ եվրոպական գիտությանն ու կրթված եվրոպացուն ներկայացրեց աշխարհի հին քաղաքակրթությունն ունեցող երկրներից մեկի աշխարհագրությունը, պատմությունը և գրականությունը, սա դիտվեց որպես գյուտ: Նրա այս աշխատությունը եվրոպական գիտությունն ընդունեց որպես հայտնագործություն. գտնված էր մինչ այդ անհայտ շատ հարուստ քաղաքակրթություն, որը նպաստելու էր եվրոպական գիտության զարգացմանը: Սեն–Մարտենը բացատրում է, թե ինչու իրենց գիտական, կրթական, մշակութային մեծ

¹ Ստեփանոս Նազարյան, Երկերի ժողովածու, Երևան, 1996, էջ 106:

պոտենցիայով հայերն անհայտ էին Եվրոպային, մինչդեռ նույն ժամանակ հայտնի էին չինացիները, պարսիկները, արաբները: Պատճառը մեկն էր. երկար դարեր հայերը կորցրել էին իրենց պետականությունը, նրանց մի մասը ապրում էր պատմական Հայաստանում՝ մահմեդական լծի տակ, իսկ մյուս մասը ցրված էր հին ու նոր աշխարհների ամենատարբեր երկրներում²: Այս հանգամանքը սակայն չէր խանգարել, որպեսզի նրանք շարունակեին իրենց գրականությունը՝ այն էլ ամենատարբեր ժանրերով, հիմնեին տպարաններ աշխարհի ամենատարբեր երկրներում, ձգտում ունենային առաջ մղելու իրենց գիտականորեն շատ հարուստ, վաղուց բացառիկ կրթված ու հարուստ լեզուն:

Այժմ վերադառնանք մեր օրերը. չէ՞ որ այսօր Հայաստանն ունի պետականություն և այդ պետականության շնորհիվ առավել մեծ հնարավորություններ ու պարտավորություններ ունի իր լեզվի և գրականության նկատմամբ: Խոստովանենք՝ կա մի շատ նուրբ խնդիր, որը չունեն ո՛չ չինացին, ո՛չ հնդիկը, ո՛չ թուրքը, ո՛չ անգլիացին, ո՛չ իսպանացին ու էլի շատ այլ ժողովուրդներ: Հայաստանը Ասորիքի տարիքին է, սակայն Ասորիքը աշխարհի նշանավոր թանգարաններում է հիմա՝ Բրիտանական թանգարան, Փարիզի Լուվր, Բեռլինի Պերգամոն և այլն: Իսկ Հայաստանը ապրող երկիր է, և նրա սիրտը լեզուն ու գրականությունն է, որոնք բազմաթիվ սերունդների ջանքերով հասել են մինչև XXI դար: Մենք պարտավոր ենք պահպանել ավանդաբար ստացածը և չլինել ապերախտ զավակներ, նման նրանց, ովքեր անտարբեր վատնում են հայրական ու պապենական ժառանգությունը:

Հայոց լեզուն իր պատվավոր տեղն ու դերը պետք է ունենա և՛ հայկական դպրոցներում, և՛ բոլոր հայկական բուհերում: Սա բնավ չի նշանակում, թե մենք պետք է լինենք սահմանափակ՝ չսովորենք այլ լեզուները, չկարդանք այլ գրականությունների գլուխգործոցները, անհաղորդ մնանք այլ մշակույթներին, բնավ՝ ո՛չ: Հիշենք՝ մեր լեզվի և գրականության առաջմղողները պոլիգլոտներ էին՝ սկսած Մեսրոպ Մաշտոցից, Մովսես Խորենացուց, Գրիգոր Մագիստրոսից, Ներսես Շնորհալուց, Խաչատուր Աբովյանից, Միքայել Նալբանդյանից, Ավետիք Իսահակյանից, Հրաչյա Աճառյանից, Մանուկ Աբեղյանից: Այս թվարկումը երկար կարելի է շարունակել:

Հայ ուսուցչի և դասախոսի առաջ եղել ու մնում է մի գերխնդիր. հայոց լեզու սովորեցնել հայ գրողների երկերն ընթերցել տալով, միայն այս ճանապարհով աշակերտը, ուսանողը կունենան հարուստ բառապաշար, կլիսեն գրագետ, գեղեցիկ, սեղմ ու ճշգրիտ. դա կարտահայտվի նաև նրանց գրավոր խոսքում:

Հայրենասիրական քնարերգությամբ հայտնի Ռաֆայել Պատկանյանը մի առանձին խանդավառությամբ հուշեր է գրել Մոսկվայի Լազարյան ճեմարանում իրեն

² M. J. Saint–Martin, „Mémoires historiques et géographiques sur l’Arménie”, t. I, Paris, 1818, p. 16.

երկար տարիներ հայոց լեզու և հայ գրականություն ավանդած մեծ հայագետ Մկրտիչ Էմինի մասին, որը գրականության դասին հայ գրողների երկերից ընտրում և արտահայտիչ ու համակող ձևով կարդում էր այնպիսի հասվածներ, որոնք իրենք ոչ թե լսում էին, այլ կլանում էին՝ երևակայությամբ տեսնելով այն, ինչը կարդում էր ուսուցիչը. «Պ. Էմինը նայում էր մեր վրա և գուցե մտքի մեջ ասում էր. «Ես իմ սուրբ պարտքը կատարեցի և իմ սիրելի Հայաստանը կործանողներին վրեժխնդիրներ պատրաստեցի»»³:

Եվ պատրաստել է. ապացույցը այն հայրենավառ գործերն են, որոնք հետո պիտի գրեր Պատկանյանը, ի դեպ նրա գրածները գաղափարական առումով արտահայտել են բոլոր հայրենասեր հայերի երազանքները: Մի՞թե այսօր էլ նվիրական չեն բանաստեղծի հետևյալ տողերը.

Երնե՛կ, թե այս Նոր տարին
Ազատ շընչեր Հայաստան,
Եվ շուրջ Մասիս մեր սարին
Փայլեին արտ-անդաստան:⁴

Ազային գրականությունը ամեն լեզվի միակ և հուսալի պաշտպանն է: Երբ 1915 թվականի՝ երիտթուրքերի կողմից կազմակերպված հայոց ցեղասպանությանն ի պատասխան Վահանն Տերյանը Մաքսիմ Գորկու հետ պատրաստում էր հայ գրականության անթուղզիան, տեսնելով Տերյանի ռուսերենի կատարելությունը, Գորկին նրան առաջարկում է բանաստեղծությունները գրել ռուսերեն, Տերյանը պատասխանում է, թե ինքը հայ բանաստեղծ է և պարտավոր է գրել հայերեն:

Դեռևս անտիկ աշխարհում մարդու մեծագույն առաքինությունը համարում էին հայրենասիրությունը: Հին աշխարհի եզակի մտածողներից մեկը՝ Արիստոտելը, ամենից շատ սիրում էր Հոմերոսի «Իլիականն» ու «Ոդիսականը»։ Նա հատուկ նպատակով շտկում, ուղղում, ավելորդություններից մաքրում է այդ հավերժական ճշմարտություններ պարունակող գլուխգործոցը. «Ապա յետոյ զկնի բազում արք աւագք, ընդ որս և Արիստոտել հանճարն չնաշխարհիկ, աշխատ եղեն յընտրել սրբել եւ յարդարել զնոսա, մանաւանդ գրաւորական մասին»⁵, - գրում է «Իլիականի» առաջին թարգմանիչը՝ հայր Արսեն Բագրատունին:

Իր «Բարոյագիտության» մեջ Արիստոտելն այսպես է գնահատում հայրենասիրության զգացմունքն ըստ Հոմերոսի. «Вот почему самыми мужественными считаются такие [граждане], у которых трусов бесчестят, а мужественных почитают. И Гомер изображает такими, например, Диодема и Гектора:

Стыд мне, когда я, как робкий, в ворота и стены укроюсь!

ս:

³ Ռ. Պատկանյան, Երկեր, Երևան, 1980, էջ 612:

⁴ Նույն տեղում, էջ 94:

⁵ Հոմերոս, Իլիական, Վենետիկ, 186, «Հոմերոս», նախաբան, էջ 2:

Вождь Дуодем от меня к короблям убежал устрашенный,-
Скажем хвалясь, и тогда расступися, земля, подо мною!⁶

Խիստ ցանկալի է ու գուցե պարտադիր, որ հայոց լեզու ուսուցանողները սովորողների մեջ պատվաստեն հպարտության զգացում մեր <<արքայական>> լեզվի նկատմամբ: Չմոռանանք, որ նախկին Խորհրդային Միության հանրապետությունների մեջ միայն հայերն ու վրացիներն էին, որ չէին գրում սլավոնական կիրիլիցայով կամ լատինական տառերով, հիշենք, որ հայասեր ու հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդին մեծ հիացմունքով էր խոսում Մաշտոցյան այբուբենի մասին, որը հազար հինգ հարյուր տարուց ավելի հոյակապորեն ծառայում է հայերին՝ նպաստելով նվազագույն ջանքերով յուրացնել այդ հարուստ լեզուն:⁷ Չմոռանանք նաև, որ վաղուց աշխարհի գիտական լեզվաբանությունն ապացուցել է հայերենի առանձին ճյուղ լինելը հնդեվրոպական լեզվաընտանիքում:

Եվրոպացի հայագետները, երբ իրենց աշակերտներին հայերեն էին սովորեցնում, դիմում էին հայ մատենագիրների և գրողների գործերին՝ մի էջում դնելով հայերեն բնագիրը, մյուսում՝ ֆրանսերեն թարգմանությունը:

Հենց հայերենը ուսուցանելու նպատակով 1825-ին Սեն-Մարտենը Փարիզում հրատարակում է <<Հատընտիր առակաց Վարդանայ Վարդապետի>> գիրքը հայերեն և ֆրանսերեն:⁸

Ներկա Հայաստանում անհնար է գտնել որևէ մարդու, որը խոսի հստակ ու հարուստ լեզվապաշարով, եթե նա չի կարդացել ոչ միայն հայ դասական գրողներին, այլև մեր օրերի, մեր կողքին ստեղծագործող անվանի գրողների երկերը:

Առաջնակարգ գրողները շարունակ մշակում են հայերենը, հարստացնում նոր բառերով, որովհետև լեզուն շարունակ փոփոխվում է, և նրա աճին պետք է հետևեն թե՛ գիտնական լեզվաբանները և թե՛ գրողները:

Հայոց լեզվի և հայ գրականության կապով ազգային լեզվի ուսուցումը օրակարգի մշտական հարց պետք է լինի: Լեզուն և գրականությունն ուսուցանող հայ ուսուցչի և հայ դասախոսի համար հայոց լեզուն և հայ գրականությունը պետք է դառնան ազգային էություն, որը նրանք սրբազան ձևով պետք է փոխանցեն իրենց սաներին:

⁶ Аристотель, Сочинения в четырех томах, т. 4, Москва, 1984, с. 111.

⁷ F. Feydit, Considerations sur l'alphabet de Saint Mesrop et recherches sur la phonétique de l'Arménien, Wien, 1982, p. 216.

⁸ Choix de Fables de Vartan, En Arménien et en Français, Paris, 1825.

ԱՇՈՏ ԳԱԼՍՅԱԼ

ՀՊՄՀ մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՏԱՐԲԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ՝ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ԴԱՐՔՆՈՑ

Մայրենի լեզուն դպրոցական կրթության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում. այն միաժամանակ և՛ ուսումնասիրության առարկա է, և՛ մյուս առարկաների յուրացման միջոց: Մայրենի լեզվի՝ որպես դասավանդման առարկայի մյուս յուրահատկությունն էլ այն է, որ ներառում է երկու կողմ՝ բուն լեզվի իմացություն, այսինքն՝ այդ լեզվով հաղորդակցվելու, գրավոր ու բանավոր շարադրանք ստեղծելու կարողություն և լեզվի քերականական կառուցվածքի իմացություն, որը ենթադրում է լեզվաբանական տեսական գիտելիքներ: Հանրակրթության պետական չափորոշիչով նախատեսված է 12-ամյա դպրոցի տարրական դասարաններում և հիմնական դպրոցի 5-6-րդ դասարաններում հայոց լեզվի և գրականության միասնացված ուսուցում «Մայրենի» առարկայի շրջանակներում. այն սովորողների առաջ բացում է գիտելիքների և հմտությունների ձեռքբերման ու դրանց գործնական կիրառման նոր հնարավորություններ, մյուս կողմից մանկավարժությանը և մասնավորապես՝ մայրենի լեզվի ու գրականության դասավանդմանը առաջադրում է նոր խնդիրներ և դրանց լուծման նոր մոտեցումների մշակման անհրաժեշտություն:

Տարրական դպրոցն իրապես կանոք խնդիր է լուծում՝ յուրաքանչյուր սովորողի լեզվական կարողությունների և անձի ձևավորման համար ապահովելով բարենպաստ միջավայր: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մայրենի լեզվի զարգացումը որոշիչ դեր ունի երեխայի մտավոր զարգացման և մշակութային ինքնության պահպանման գործում: Լավ իմանալով և արժևորելով սեփական ժողովրդի լեզվի, գրականության և մշակութային այլ արժեքները՝ երեխաները լայն հնարավորություն են ունենում նաև միջմշակութային արժեքների ճանաչման և ըմբռնման առումով. մայրենին ապահով երաշխիք է նրանց ուսումնական հաջողությունների համար: Մայրենի լեզվի լավ իմացությունը նպաստում է այլ լեզուների հաջող յուրացմանը, դրանց բառապաշարային ու կառուցվածքային ընդհանրությունների ու տարբերությունների ընկալմանը:

Մյուս կողմից՝ լեզուն չի գործում մեկուսացած. այն մարդկային գործունեության և հաղորդակցության անբաժանելի մաս է: Լեզուն արտացոլում է այն աշխարհը, որում

ապրում է երեխան. որքան մեծ է երեխայի սոցիալական շփումն ու հաղորդակցումը, այնքան հարուստ ու զարգացած է նրա լեզուն:

Տարրական դպրոցում երեխաները մայրենի լեզվին անդրադառնում են երեք տեսանկյունից՝ սովորում են լեզու, սովորում են լեզվի միջոցով, սովորում են լեզվի մասին, և այդ ամենն իրականացնում են գործնականորեն և հետազոտական ճանապարհով: Ճանաչողության գործընթացը միաժամանակ նաև լեզվի ուսուցման գործընթաց է, քանի որ լեզվի կիրառման միջոցով են երեխաները հաղորդակցվում մարդկանց հետ, լսում, մտածում, քննարկում, արտահայտում իրենց մտքերն ու զգացումները, զուգահեռ յուրացնում են լեզվական գիտելիքները և հասկանում, թե ինչպես է այն կիրառվում տարբեր իրավիճակներում:

Լեզուն միջառարկայական թեմաների և վերառարկայական կարողությունների յուրացման հիմնական միջոցն է: Օրինակ՝ ընթերցանության բաղադրիչն առկա է տարրական դպրոցում իրականացվող բոլոր աշխատանքներում և բոլոր առարկաներում, հետևաբար ընթերցողական կարողությունների զարգացման ուղղությամբ իրականացվում են շարունակական աշխատանքներ: Ուսումնական գործունեության ընթացքի և արդյունքների վերլուծությունն ու ամփոփումն իրականացվում է բանավոր և գրավոր կապակցված խոսքի միջոցով, որի զարգացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները շարունակվում են նաև դպրոցի մյուս աստիճաններում: Ինչպես տեսնում ենք, մայրենիի՝ առարկայական չափորոշիչով և ուսումնական ծրագրով նախատեսված կարողությունները առաջնային են և հիմք են հանդիսանում կրտսեր դպրոցականների արդյունավետ ուսումնառության համար:

Այդ է պատճառը, որ այսօր մայրենիի դասագործընթացում հաշվի է առնվում ուսուցման բազմազան միջոցների և գործընթացի կազմակերպման տարբեր մեթոդների ու հնարների կիրառումը՝ անհատական և խմբային աշխատանքներ, տարբեր աղբյուրների օգտագործում, տարբերակված ընթերցանություն, ձայնագրությունների ունկնդրում և ստեղծում, գրաֆիկների, աղյուսակների կազմում, ՏՀՏ միջոցների օգտագործում և այլն: Բացի այդ, մեծ ուշադրություն է դարձվում սովորողների լեզվական կարողությունների ու հմտությունների զարգացման ընթացքի գնահատմանը բառային բնութագրիչներով, թվանշաններով և թղթապանակների միջոցով՝ ուսուցիչների, ընկերների գրավոր և բանավոր հետադարձ կապի, ինչպես նաև իրականացրած լեզվական գործունեության, ձեռքբերումների, անելիքների վերաբերյալ ինքնագնահատման ճանապարհով:

Այսպիսով, եթե տարրական դպրոցում լեզվի ուսուցումը լինի ներգրավող, հետաքրքրական ու բազմազան՝ արտացոլելով յուրաքանչյուր սովորողի կենսափորձն ու զգայական ընկալումները, ապա երեխայի մեջ կարմատավորվի ճանաչողական գործունեություն իրականացնելու հիմնավոր կարողություն և պատրաստակամություն ողջ կյանքի ընթացքում:

Տարրական դպրոցի յուրաքանչյուր ուսուցիչ, անկախ դասավանդած առարկայից, նախևառաջ լեզվի ուսուցիչ է և պատասխանատվություն է կրում երեխաների լեզվական կարողությունների ու լեզվի նկատմամբ վերաբերմունքի ձևավորման, մտածողության և արդյունավետ հաղորդակցվելու կարողությունների զարգացման համար: Մակայն պետք է նշել, որ **տարրական դպրոցը մեկ ուսուցչի դպրոց է**: Սա ամբողջ աշխարհում ընդունված փաստ է, որ ապացուցված է տարբեր գիտությունների և հատկապես հոգեբանության կողմից: Ինչպես այգեպանն է վերաբերվում իր նորատունկ այգու յուրաքանչյուր ծառին՝ սիրով և ուշադրությամբ հետևելով նրա աճին ու զարգացմանը, ըստ անհրաժեշտության իրականացնելով նախատեսված աշխատանքներ, այդպես էլ տարրական դասարանների ուսուցիչը համակարգված ու նպատակային աշխատանք է իրականացնում յուրաքանչյուր սովորողի անձի ձևավորման և նրա մեջ միջառարկայական ու վերառարկայական հմտությունների ձևավորման ուղղությամբ: Այս գործընթացում առաջնային է նվիրումը աշխատանքին ու պատասխանատվությունը սովորողների խմբի և նրանցից յուրաքանչյուրի ձեռքբերումների համար:

Կրտսեր դպրոցականն աշխարհն ընկալում է ամբողջության մեջ՝ աստիճանաբար բացահայտելով նրա բաղադրիչներն ու դրանց միջև առկա անխզելի կապերը: Ուստի տարրական դպրոցի ուսումնական ծրագիրը որքան շատ է մասնատվում ուսումնական առարկաների միջև, որոնք դասավանդվում են տարբեր մասնագետների կողմից, այնքան կտրատված ու անհամակարգ է դառնում երեխայի ընկալումն աշխարհի մասին: Այնինչ, տարրական դպրոցի նպատակը ոչ թե (և ոչ այնքան) կրտսեր դպրոցականներին այս կամ այն առարկայի շրջանակներում սուկ գիտելիքներ հաղորդելն է, այլ, ինչպես ամրագրված է Հանրակրթության պետական չափորոշիչում, սովորողի մտավոր, հոգևոր և ֆիզիկական կարողությունների զարգացումը, լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության աշխարհայացքային պատկերացումների հիմքերի ստեղծումը, աշխատանքային նախնական հմտությունների, բարեկիրթ վարքի և կայուն արժեհամակարգի հիմքերի ձևավորումը, բարոյահոգեբանական, հայրենասիրական, գեղագիտական, էկոլոգիական և ֆիզիկական դաստիարակությունը և առողջ ապրելակերպի հիմքերի արմատավորումը, միջին դպրոցում ուսումը շարունակելու համար պահանջվող կրթամակարդակի ապահովումը: Ինչպես տեսնում ենք, 21-րդ դարի տարրական դպրոցի հիմնանպատակը անձի ընդհանուր զարգացումը, նրա մեջ հոգեկան գործընթացների, անձնային կարևորագույն որակների, մտածողության մեթոդների, հաղորդակցական և համագործակցային կարողությունների ձևավորումն ու զարգացումն է:

ՀԵՆՐԻԵՏԱ ՍՈՒՔԻԱՍՅԱԼ

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի հայոց լեզվի և բժշկական տերմինաբանության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԲՈՒՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Մայրենի լեզվի ավելի խոր ու հիմնավոր իմացության կենսական պահանջի իրագործմանն է միտված հայոց լեզվի ուսուցումը ոչ մասնագիտական բուհերում և ֆակուլտետներում:

<<Լեզվի մասին>> պետական օրենքով Հայաստանի Հանրապետության բուհերում հայոց լեզվի ուսուցումը պարտադիր է:

Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի հայոց լեզվի ամբիոնը հիմնադրվել է 1992թ.: Նախքան ամբիոնի հիմնադրումը հայոց լեզու և գրականություն է դասավանդվել բժշկական ինստիտուտի նախապատրաստական բաժնում: Սկզբնական շրջանում դասընթացը նախատեսված էր միայն ռուսական կրթություն ունեցող ուսանողների համար: Հետագայում, նկատի ունենալով փախստականների, ԱՊՀ երկրներից և սփյուռքից սովորելու եկածների հոսքի մեծացումը, հարկ եղավ կատարել ուսուցման տարբերակում՝ հաշվի առնելով ուսանողների լեզվական իմացության մակարդակը: Ըստ <<Լեզվի մասին>> օրենքի՝ վերանայվեց ամբիոնի ուսումնական ծրագիրը:

Նպատակահարմար ենք գտնում որոշ խնդիրների անդրադառնալ առաջարկություններով:

Հայոց լեզվի ամբիոնի նպատակն է ուսանողներին զինել մայրենիի կայուն գիտելիքներով, որի շնորհիվ սովորողները պետք է ձեռք բերեն՝

- մտքերը տարբեր ոճերով շարադրելու հմտություններ,
- խոսքի բարձր մշակույթ,
- գրագետ խոսք կառուցելու ունակություն,
- լեզվի անաղարտության պահպանում:

Կարևորվում են նաև բժշկագիտական լեզվի և ոճի առանձնահատկությունների ուսուցումը, բժշկության մեջ ընդունված և տարածված օտար տերմինների հայերեն համարժեքների յուրացումը: Այս նպատակի իրագործմանը խոչընդոտում են ուսանողների ոչ բավարար գիտելիքները մայրենի լեզվից: Նախկինում հայերենից ընդունելության քննությունը (թեկուզ ստուգաբքի կարգավիճակով) ապահովում էր դիմորդների գիտելիքների որոշակի մակարդակ: Ներկայումս շրջանավարտներն առանց հայոց լեզվից ընդունելության քննություն հանձնելու ընդունվում են բժշկական

համալսարան: Առաջարկում ենք մեր բուհում վերականգնել հայերենի ընդունելության քննությունը:

Ծրագրի իրականացման հաջորդ խոչընդոտը դասընթացի տևողությունն է. այն օրենքով նախատեսվածից կիսով չափ քիչ է (հիշենք, որ կրթության և գիտության նախարարության որոշմամբ ոչ մասնագիտական բուհերում ընդունվեց հայերենի երկամյա պարտադիր ուսուցում): Մինչդեռ հայերենը մեր բուհում տեղացի ուսանողներին այժմ դասավանդվում է շաբաթը երկուական ժամով, մեկ տարի: Կարծում ենք, որ անհրաժեշտ է լրացուցիչ դասընթաց առնվազն մեկ տարի՝ 150 ժամաքանակով:

Նպատակահարմար ենք գտնում լրացուցիչ դասընթացը՝ բժշկագիտական խոսքի ուսուցումը, ներգրավել մագիստրատուրայի կամ օրդինատուրայի ծրագրում, քանի որ ցածր կուրսերում ուսանողները դեռևս ծանոթ չեն կլինիկական մասնագիտական առարկաներին:

Ամբիոնը հայոց լեզու է ուսուցանում նաև օտարերկրյա ուսանողներին (հնդիկ, պարսիկ, արաբ, սփյուռքահայ և ԱՊՀ երկրներից եկած ուսանողներ): Անհրաժեշտություն կա ստեղծելու ընդհանրական պետական ծրագրեր օտարազգի, սփյուռքահայ և ԱՊՀ-ից եկած ուսանողների համար: Այս առումով ակնկալում ենք ՀՀ կրթության և գիտության նախարարության աջակցությունը, ինչպես նաև ՀՀ սփյուռքի նախարարության հետ համագործակցությունը ոչ միայն ուսուցման, այլև դաստիարակչական աշխատանքների բնագավառում:

Ուսումնական գործընթացի կարևորագույն հարցերից մեկը գիտելիքների ստուգումն է. թեստային եղանակը ամբողջովին չի արտացոլում հայոց լեզվի առանձնահատկությունները (խոսքի կառուցման և հաղորդակցման հմտություն): Առաջարկում ենք թեստային գրավորին զուգահեռ անցկացնել բանավոր հարցում և՛ տեղացի, և՛ արտասահմանցի ուսանողների համար:

Անհրաժեշտ է նաև ավանդույթ դարձնել լեզուների ամբիոնների համատեղ գիտաժողովների կազմակերպումը:

Ամբիոնի գիտական ուղղվածությունը առողջապահության լեզվի և բժշկագիտական տերմինաբանության կանոնարկումն է: Հայոց լեզվի ամբիոնը, բացի ուսումնական գործընթացից, շուրջ 2 տասնամյակ է, ինչ զբաղվում է նաև բժշկագիտական լեզվի կանոնակարգման խնդիրներով:

Կարևորում ենք առողջապահության ոլորտի լեզվաքաղաքականության մշակումը, այդ թվում՝ առողջապահական հիմնարկներում (հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ, ուսումնական հաստատություններ) հայերենի ճիշտ և տեղին գործածության հարցերը:

Անհրաժեշտ է լեզվական ծառայություններ մատուցել ԵՊՀՆ ռեկտորատին, մասնագիտական ամբիոններին, խմբագրել բժշկագիտական դասագրքեր,

մենագրություններ, ուսումնամեթոդական ձեռնարկներ, հոդվածներ, փաստաթղթեր և այլ գրություններ, օգնել խորհրդատվությամբ և այլն:

Ամբիոնը ստեղծել է համալիր ծրագիր, որի իրականացման համար առաջարկում ենք ամբիոնին կից ստեղծել Առողջապահության լեզվի կանոնարկման կենտրոն: Հայցում ենք ԵՊԲՀ ղեկավարության և ՀՀ առողջապահության նախարարության աջակցությունը:

Օտար տերմինների հայացման գործընթացում անհրաժեշտ է հետևողականորեն կիրառել տերմինաբանության կանոնարկման այն սկզբունքները, որոնք հաստատված են տերմինաբանական հանձնաժողովի որոշումներով և այժմ գործածվում են այլ ոլորտներում (տնտեսագիտություն, ռազմագիտություն, բնապահպանություն և այլն):

Այս առումով հրատապ է տերմինաբանական կոմիտեի վերստեղծումը և աշխատանքների վերականգնումը:

Բժշկագիտական բնագավառում անհրաժեշտ ենք համարում բժիշկ մասնագետների և լեզվաբանների համագործակցությունը:

ՍՈՒՍԱՆՆԱՏԻՈՅԱՆ

ԵՊԼՀ հայագիտության ամբիոնի դասախոս,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՄԻՐԻԱՀԱՅ ՆԵՐԳԱՂԹՅԱԼՆԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Խոսքս խիստ առարկայական է և վերաբերում է մեր սիրիահայ հայրենակիցների՝ հայտնի դեպքերի պատճառով Հայրենիք ժամանած արևմտահայերի՝ արևելահայերենի հետ շփվելու ընթացքում ծագած լեզվական հիմնահարցերին:

Բոլոր ներգաղթների պարագայում էլ (իսկ այդպիսիք մեր ազգի պատմության ընթացքում շարունակաբար եղել են) լեզվական խնդիրներ ծագել են, սակայն դրանք խիստ տարբեր են և անխտիր սերտաճած են սոցիալ-քաղաքական պայմանների հետ:

1924 թվականին առաջին քարավանով Արևմտյան Հայաստանից մազապուրծ եղածների և տարբեր երկրներից ներգաղթածների գերագույն նպատակը Հայրենիքում հիմնավորվելն էր, և լեզվական խնդիրները առաջնահերթ նպատակների շարքում չէին, իսկ երկու լեզվավիճակների տարբերությունները նրանց համար առանձնակի խոչընդոտներ չէին. սրանք հիմնականում արհեստավորներ էին՝ դերձակներ, կոշկակարներ, վարսավիրներ, պատշարներ, զբաղվում էին իրենց հանապազօրյա գործով և, կարելի է ասել, լեզվական խնդիրներ էլ չունեին. նրանց զավակներն էլ ծնվեցին ու մեծացան հայաստանյան իրականության մեջ, հաճախեցին դպրոցներ, անգամ ուսական՝ ակնհայտ առաջադիմություն ցուցաբերելով:

Մյուս՝ 1946-1948թթ. հայրենադարձությունը և նրա հիմնախնդիրները, ի տարբերություն նախորդի, ամենայն մանրամասնությամբ ու բազմակողմանիորեն՝ վիճակագրական, պատմական, լեզվական, ազգագրական, քաղաքական, սոցիալ-տնտեսական և այլ հայեցակետերով, վերլուծված և ուսումնասիրված են¹ :

Դրանից հետո պարբերաբար Հայրենիք՝ Խորհրդային Հայաստան են հայրենադարձվել բազմաթիվ հայ ընտանիքներ Հունաստանից, Ֆրանսիայից, Բուլղարիայից, Բելրուսից, Իրաքից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից:

Սրան հաջորդեցին սումգայիթյան (1988թ.) և Բաքվի (1990թ.) ողբերգությունները, և Հայաստանն այս անգամ ընդունեց **փախստականների**. վերջիններս գլխավորապես

¹ Տե՛ս <<1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. Հայրենադարձության հիմնախնդիրն այսօր>>, զեկուցումների ժողովածու, Եր., Լիմուշ, 2009:

մտավորականներ էին՝ բժիշկներ, ուսուցիչներ, ինժեներներ, որոնք առհասարակ չէին տիրապետում հայերենին. նրանց մայրենին ռուսերենն էր, գիտեին նաև ադրբեջաներեն: ԳԱԱ լեզվի ինստիտուտում նրանց համար շատ արագ կազմակերպվեցին հայերենի դասընթացներ, որոնք վարում էին աշխատակիցներից շատերը (հասարակական կարգով), ամառային դպրոց՝ Հրազդանում, Քասախում և այլուր: Միրով հաճախում էին, սակայն ոչ բոլորը կարողացան սեղմ ժամկետներում տիրապետել լեզվին, և քանի որ առանց հայերենին տիրապետելու նրանց աշխատանքի չէին ընդունում, ուստի արտագաղթեցին Ռուսաստան՝ ինչպես Մոսկվա, այնպես էլ տարբեր քաղաքներ:

Սակայն այսօր Միրիայից ներգաղթած մեր հայրենակիցները հայտնվել են այլ, անհամեմատ բարվոք պայմաններում. նրանց հանդեպ հանդես է բերվում պետական բացառիկ հոգատարություն, իսկ Մփյուռքի նախարարությունն իր ամենօրյա ուշադրության կենտրոնում է պահում նրանց: Այսպիսով, ամեն անգամ մենք հայտնվում ենք այլ իրավիճակում, բախվում նոր տեսակի և այլ որակի հետ, քանի որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում որոշակի դեր են կատարում գաղթօջախի գերակշիռ լեզվի ազդեցությունը, խոսողի բարբառային պատկանելությունը, անհատական բնույթի այլևայլ հատկանիշներ²:

Դպրոցահասակների համար Նար-Դոսի դպրոցում կազմակերպվեց Կիլիկյան վարժարանը, որտեղ ուսուցումը կատարվում է սեփական ծրագրերով. այստեղ սովորում են կրտսեր տարիքի երեխաները՝ առաջինից իններորդ դասարաններում (7-13 տարեկան 270 աշակերտ). դասավանդում են հենց իրենց հետ եկած ուսուցիչները, այսինքն՝ այստեղ լեզվական խնդիրներ չկան, ավագ դպրոցի հասակ ունեցողները բաշխվել են տարբեր ավագ դպրոցների վրա՝ ըստ բնակության վայրի, իսկ բուհերում սովորողները՝ պետհամալսարան, բժշկական համալսարան, Բյուսուվի անվան ՊԼՀ և այլն, տեղավորվել են կա'մ թույլերի, կա'մ զրո/նախապատրաստական խմբերում: Մինչդեռ բարձրագույն կրթություն ունեցողները լեզվական իմաստով մնացել են ուշադրությունից դուրս. նրանց նկատմամբ կիրառում են <<ինտեգրման>> քաղաքականություն՝ ռուսերեն սովորելու ճանապարհով:

Ահա նշված երեք խմբերի համար՝ ավագ դպրոց, բուհ և մասնագետներ, մեր խորը համոզմամբ, լեզվական սխալ մոտեցում է ցուցաբերվում:

Կարծում ենք, որ նրանց ոչ թե պետք է դասավանդել արևելահայերենը՝ ուղղագրություն, կետադրություն, հնչյունաբանություն և այլն՝ մեզանում ընդունված ավանդական-քերականական ծրագրերով, այլ գրական հայերենի երկու տարբերակների՝ արևելահայերենի և արևմտահայերենի տարբերությունների (հնչյունական, բառապաշարային, քերականական և այլն), և սովորողների կրթական

² Ռ. Մաքապետոյան, Արևմտահայերենի դասագիրք, Եր., ԵՀՀրատ., 2006թ., էջ 10:

մակարդակի հաշվառմամբ կազմված դասընթացով: Ընդ որում՝ ասածս իրականացնելու համար մենք ունենք արևմտահայերենին առնչվող հարուստ, բազմաբնույթ գիտական, ուսումնական, մեթոդական, գուգադրական ուսումնասիրություններ:

Այսպես, տարիներ շարունակ աշխատելով Կիպրոսի Մելգոնյան կրթօջախում, գերազանց տիրապետելով արևմտահայերենի նրբություններին՝ Ա. Սարգսյանը գրեց <<Արևմտահայ և արևելահայ գրական լեզուներ>>, <<Արևմտահայերենի հնչաբանություն>> և <<Արևմտահայերենի բառարան>> մեծարժեք աշխատությունները:

Վերջին գրքի առաջաբանում նա գրում է. <<Բառարանն ընդգրկում է շուրջ չորս հազար բառ և իմաստ, որն ինքնին գաղափար է տալիս մեր երկու ճյուղերի մերձակցության մասին. փաստորեն արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային տարբերությունները, ճշգրիտ տվյալներով, **կրեք սոկոսից** չեն անցնում³, իսկ դա մեր ազգային լեզվի երկու տարբերակների ընդհանրության բարձր աստիճանի խոստում ապացույցն է... Մի խոսքով,- գրում է հեղինակը,- սույն բառարանն ամփոփում է արդի հայերենի երկու ճյուղերի բառապաշարի միայն **տարբերությունները**>>⁴:

Շարունակելով այս ոլորտում կատարված աշխատանքներն ու հաշվի նստելով ստեղծված ավանդույթների հետ՝ Ռ. Սաքապետոյանն իր ուրույն ներդրումը կատարեց արևմտահայերենի ուսուցման ոլորտում. ստեղծեց <<Արևմտահայերենի դասագիրք>> աշխատությունը, որը ներառում է նաև իր իսկ կողմից ստեղծված <<Արևելահայերեն-արևմտահայերեն ուղղախոսական-բացատրական բառարանի>> համառոտված տարբերակը: Նրա նպատակը չի եղել դասագրքում <<ընդգրկել արևմտահայերենի լեզվական երևույթների ամբողջական և հետևողական նկարագրությունը, քանի որ դասագիրքը նախատեսված է արևելահայերենի լեզվական իրողություններին ծանոթ ուսանողության, ինչպես նաև՝ ուսուցչության համար: Ընտրված ու մեկնաբանված են այն լեզվական երևույթները, որոնք **արևմտահայերենում ունեն արևելահայերենից տարբեր դրսևորումներ** (ընդգծումը մերն է՝ Ս.Տ.): Այն, ինչ ընդհանուր է մեր լեզվի երկու տարբերակներում, շրջանցված է, կամ սուսկ նշվում է դրանց ընդհանուր բնույթը>>⁵: Նրա գրչին է պատկանում նաև <<Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները>> հիմնարար աշխատությունը:

Յու. Ավետիսյանը նույնպես գիտական լուրջ աշխատություններ է նվիրել մեր գրական երկու լեզուների համեմատական-գուգադրական ուսումնասիրությանը

³ Ա. Սարգսյան, Արևմտահայերենի բառարան, Եր., <<Արևիկ>>, 1991, էջ 3:

⁴ Ըստ Յու. Ավետիսյանի՝ այդ տարբերությունները նորագույն տվյալների համաձայն մոտ 14-16 տոկոս են. Տե՛ս Յու. Ավետիսյան, <<Արևելահայերենի և արևմտահայերենի գուգադրական հնչյունաբանություն>>, <<Զանգակ-97>>, Եր., 2011, էջ 3:

⁵ Տե՛ս, <<1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. Հայրենադարձության հիմնախնդիրն այսօր>>, գեկուցումների ժողովածու, Եր., Լիմուշ, 2009, էջ 171:

(«Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական հնչյունաբանություն», «Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն»), իսկ իր «Հայրենադարձությունը և արևելահայերենի ու արևմտահայերենի մերձեցման ուղիները» հոդվածում շոշափում է նաև այդ երկու լեզուների տարբերության հարցերը՝ մասնավորապես գրելով «հնչյունական-արտասանական համակարգում արևմտահայ և արևելահայ գրական լեզուների բաղաձայնական համակարգերի էական **տարբերությունների** (ընդգծումը մերն է՝ Ս.Տ.) մասին»³²:

Երևանի Խ.Աբովյանի անվ. ՊՄՇ-ում երկար տարիներ գործում է Ս. Դանիելյանի կողմից հիմնված «Սփյուռք» գիտատեսական կենտրոնը. այն արևմտահայերեն դասավանդող մանկավարժ կադրեր է պատրաստում՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում աշխատելու նպատակով, ինչպես նաև ուղղվածությամբ ու բնույթով արևմտահայերենի տարբեր դասընթացներ, մեթոդական ձեռնարկներ, բառարաններ է ստեղծում:

Ինչպես տեսնում ենք, բոլոր գիտնականներն իրենց աշխատություններում շեշտը դնում, հենվում են հենց տարբերությունների վրա. այլ կերպ լինել չէր էլ կարող (գրական երկու լեզուների ունեցած մեծ ընդհանրությունների առկայության պայմաններում), իսկ դասավանդելիս առավել ևս պետք է կողմնորոշվել դրանցով:

Նման մի ծրագրով 2012 թվականին սիրիահայ երեխաների համար Հայաստանում կազմակերպված «Ամառային դպրոցում» հայերենի դասընթաց վարեց հմուտ մանկավարժ Ս. Աբազյանը՝ ծրագրում ներառելով՝

1. Զրույց-ծանոթություն սովորող-ունկնդիրների հետ,
2. Զրույց հայերենի ծագման, գրական հայերենի երկու՝ արևելահայ և արևմտահայ տարբերակների առանձնացման նախապատմության մասին,
3. Գրական երկու լեզուների քերականական տարբերությունների մասին,
4. Ուղղագրության և ուղղախոսության տարբերությունները և այլն:


Այս ամենն ուղեկցվեցին վարժություններով, թարգմանություններով, անգիրներով, ընթերցանության տեքստերով:

Այսինքն՝ կա դասընթացի մի մանրակերտ՝ երկու գրական տարբերակների տարբերությունների հաշվառմամբ, այլ ոչ թե արևելահայերենն ըստ քերականական բաժինների դասավանդելու մեթոդով. վերջինը անարդյունավետ է նախ այն պատճառով, որ Հայաստան ժամանած մեր արևմտահայ հայրենակիցները մեծ դժվարությամբ ու չկամությամբ են լծվում արևելահայերենը յուրացնելու գործին, քանի որ լսարանում կամ դասարանում սովորում են մի բան, իսկ փողոցում, խանութում, տրանսպորտում և հասարակական այլ վայրերում լսում են միանգամայն ուրիշ լեզու՝ նորմավորված գրական արևելահայերենի խոսակցական տարբերակի այլևայլ աղավաղումներով.

երկրորդ՝ սիրիահայերը դասական արևմտահայերենը կրող, կազմակերպված, օրինակելի և հզոր այն համայնքն են ներկայացնում, որը պահել - պահպանել և սերունդներին է փոխանցել հայոց լեզուն ու պատմությունը, մշակույթն ու ավանդույթները, և մենք իրավունք չունենք մեր ոչ ճիշտ մոտեցմամբ խաթարելու նրանց դասական արևմտահայերենը՝ այն դարձնելով երկրորդ գրաբար:

Որևէ մեկի համար գաղտնիք չէ, որ Հայաստանում մնալով թե Հայաստանից այլ երկիր տեղափոխվելով (իսկ նրանց մի մասն այդ ուղին է բռնել)՝ նրանք շփվելու են լեզվական ուրիշ <<խճանկարի>> հետ. վերջին մի քանի տասնամյակների ընթացքում քաղաքական ամենատարբեր զարգացումների հետևանքով փոխվել է Հայաստանից դուրս ապրող հայերի լեզվահասարակագիտական նկարագիրը:

Ուստի ժամանակն է ստեղծել, այս դեպքում՝ ներգաղթածների նշված խմբի լեզվական պահանջները բավարարող, որոշակի ծրագրով և մեթոդով կազմված հայերենի դասընթաց. այն պետք է սկսել ամենահաճախական, ամենագործածական բառերի ընդգրկմամբ և երկու գրականների տարբերությունների հաշվառմամբ: Դա կարելի է կատարել ինչպես խոսքի մասերի առանձնացման (դերանուն, ածական, գոյական և այլն), բառերի թեմատիկ խմբերի (ողջույնի, դիմելու, շնորհակալության, հրաժեշտի, ծանոթության ձևեր, շաբաթվա օրեր, ամսանուններ, տարվա եղանակներ և այլն) ընդգրկման, այլև ցուցադրական նյութերի, նկարների ներգրավման (նաև համակարգչի օգնությամբ) մեթոդով՝ ամեն անգամ տալով նաև մի քանի բառերի հոգնակիի և թեքված ձևերն ու դրանցով կազմված բառակապակցությունները կամ դարձվածային միավորները: Առաջին ուղիով առաջնորդվելիս, օրինակ, պետք ներկայացնել նախ դերանունները, մի քանի գոյականներ, ածականներ, բայեր.



գոյական

բաժակ - գավաթ
արվեստ - արհեստ
աշխատավարձ - ամսական
դաստակ - թև

ժամանակ, պահ,
միջոց - ատեն
հենակ - անթացուպ
դաշնամուր - դաշնակ

ածականներ

ավ - աղեկ
էժան, ոչ թանկ - աժան
սպիտակ - ճերմակ
վատ, բացասական, տգեղ - գեշ

քիչ, միփոքր-քիչիկ,
սակավ թանկ - սուղ
լավ, ընտիր, գեղեցիկ-աղվոր
ճիշտ, ուղիղ, իսկապես- շիտակ

բայեր

լինել - ըլլալ
կուլ տալ - կլլել
քնել - քնանալ
իմանալ, ճանաչել - գիտնալ

մնալ, կանգնել - կենալ
կծել - խաճնել
գնալ - երթալ
հասկանալ-հասկնալ

բառակապակցություններ

իմ գիրքը, քո պայուսակը, այս լսարանը, այն ուսանողը,
մեր երկիրը, նրանցից մեկը,
ճիշտ պատասխան, այստեղից մինչև Աբովյան փողոց

պարզ նախադասություններ՝ հարց ու պատասխանով

Ի՞նչ է սա - Սա գրատախտակ է:
Նա ո՞վ է - Նա ուսանող է:
Նա ուսանո՞ղ է - Այո՛, նա ուսանող է:
Որտե՞ղ է քո պայուսակը - Իմ պայուսակը աթոռի վրա է:
Ի՞նչ է քո անունը - Իմ անունը Մարալ է:
Այսօր ի՞նչ օր է - Այսօր շաբաթ է:
Դու քանի՞ տարեկան ես - Ես քսան տարեկան եմ:

Ապա կարելի է անգիր սովորեցնել, օրինակ, Հ. Թումանյանի քառյակները՝ սկսելով հետևյալից (պարզեցված խմբագրմամբ)։

Հին աշխարհը ամեն օր,

Հազար մարդ է մտնում նոր,

Հազար տարվա փորձն ու գործ

Ըսկսվում է ամեն օր։

Իսկ եթե ուսուցանելիս թեմատիկ խմբերով ենք առանջնորդվում, ապա պետք է սկսենք նախևառաջ դիմելաձևերից, քանի որ բոլոր սփյուռքահայերի, այլև մասնավորապես սիրիահայերի համար ընդունելի և սովորական **պարոն, տիկին, օրիորդից** բացի, մեզ մոտ հանդիպում են **մորքուր, հոպար, ապեր, ընգեր** և այլ՝ գրական նորմից դուրս ձևերին։ Ուստի նրանց պետք է ներկայացնել նշված երկուսից ընտրված <<միջանկյալ>>՝ մորաքույր (նաև՝ տիկին), հորեղբայր, քեռի և նման ձևերը։ Ապա կարելի է անցնել մյուս թեմատիկ խմբերին, որոնք նմանօրինակ տարբերություններ ու դժվարություն չեն ներկայացնում։

Շատ համառոտ ձևով այս է անհրաժեշտ անել (կոնկրետ այս դեպքում) Հայրենիք ժամանած սիրիահայերի հետ՝ առանց խաթարելու նրանց մայրենի արևմտահայերենը, այլև մերձեցնելով մեր երկու խոսակցականները։

ԳԱՅԱՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Երևանի Վ.Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի
հայագիտության ամբիոնի վարիչ,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՕՏԱՐԱԽՈՍՆԵՐԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի անկախության հռչակումից և Եվրոպայի խորհուրդ մտնելուց հետո ընդլայնվել են մեր երկրի միջազգային կապերը: Փոփոխությունները վերաբերում են ոչ միայն հասարակական-քաղաքական և տնտեսական կարգին, այլև հոգևոր և մշակութային կյանքին: Վերանայվել է նաև պետության լեզվական քաղաքականությունը: Եվրոպայի խորհրդի լեզվաքաղաքականության պահանջներին համապատասխան՝ այդ քաղաքականության հիմքում դրվել են երկլեզվության և բազմալեզվության սկզբունքները: Վերջին ժամանակներս, կապված պատմաքաղաքական, տնտեսական և միջազգային հարաբերությունների ակտիվացման հետ, մեծացել է հետաքրքրությունը Հայաստանի, հայկական մշակույթի և հայերենի նկատմամբ: Պահանջ է առաջացել հայոց լեզուն ուսուցանելու օտարներին (Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա ղեկավարությունների, ներկայացուցչությունների, կազմակերպությունների աշխատակիցներին), սփյուռքահայերին, նախկին ԽՍՀՄ տարբեր տարածաշրջաններից ներգաղթած հայերին: Օտարախոսներին հայերենի ուսուցման դերն ու նշանակությունը կարևորվում են հետևյալ նկատառումներով.

• Որպես ժողովրդի մշակույթի արտահայտություն՝ լեզուն խտացնում է լեզվամտածողության հատկանիշներ: Ցանկացած լեզվի ուսուցում կարևոր նշանակություն ունի անհատի արժեքային համակարգի ձևավորման գործում, ուստի ուսումնական նյութերի հատուկ ընտրությամբ, ինչպես նաև կրթական գործընթացի կազմակերպման եղանակներով հայերենի ուսուցումը պետք է դիտել որպես հայ ազգային մշակույթի արտահայտության և ընկալման ձև: Այն կնպաստի մշակույթների երկխոսությանը, ներանձնային և միջազգային հարաբերությունների խթանմանը, լեզվական ու մշակութային փորձի փոխանակմանն ու ընդլայնմանը: Հայերենը ուսումնասիրող օտարախոսների ուշադրությունը կկենտրոնանա հայ մշակույթի յուրահատկությունների վրա, նրանց հնարավորություն կընձեռնվի զուգահեռներ անցկացնելու սեփական մշակութային փորձի և նոր միջավայրի միջև, գիտակցելու մշակութային բազմազանությունը, համագործակցելու տարբեր լեզվամշակութային ինքնություն ունեցող քաղաքացիների հետ:

• Հայաստանի Հանրապետության ուսումնական համակարգում հայերենը առանձնահատուկ տեղ ունի մի կողմից՝ որպես լեզվամտածողության զարգացման միջոց, մյուս կողմից՝ որպես ուսումնական մնացած բոլոր առարկաների յուրացման, գնահատման և արժևորման նախադրյալ:

Վերը նշվածը վկայում է օտարախոսներին հայերենի ուսուցման անհրաժեշտության մասին, որի նպատակն է՝

- գրական հայերենով հաղորդակցվելու հմտությունների ձևավորումը,
- լեզվական և մշակութային հարուստ փորձի պահպանումն ու ընդլայնումը,
- տեխնիկական և գիտական տեղեկատվության, մշակույթի բնագավառների նվաճումների փոխանակումը:

Օտարախոսներին հայերենի ուսուցման համար առավել բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով անհրաժեշտ է.

• կազմել համապատասխան ծրագրեր, ստեղծել տեսական և գործնական նյութերով հագեցած դասագրքեր.

- մշակել օտարախոսներին հայերենի ուսուցման կրթական չափորոշիչներ՝ սահմանելով հայերենի կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նկարագրիչներ, ուսումնական բեռնվածության ծավալը, սովորողներին ներկայացվող որակական պահանջները՝ ըստ ուսուցման հաջորդական աստիճանների:

Այս ամենի արդյունքում հայերենը ուսումնասիրած օտարախոս անձր կկարողանա՝

- գրական հայերենով խոսք կառուցել,
- տարբեր բնույթի տեքստեր և գրականություն կարդալ, կարդացածը վերաշարադրել և համառոտագրել,
- օգտվել բառարաններից, տեղեկատու գրականությունից, տպագիր և էլեկտրոնային աղբյուրներից,
- գործնական բնույթի զանազան փաստաթղթեր կազմել:

Օտարախոսներին հայերենի դասավանդումը պիտի ապահովի՝

• բառապաշարի հարստացում, որն էլ կնպաստի աշխարհայացքի և ճանաչողության ընդլայնմանը,

• համակարգված գիտելիքներ հայոց լեզվի կառուցվածքի, լեզվական միավորների և նրանց փոխհարաբերությունների մասին,

• լեզվաքերականական գիտելիքների հիման վրա խոսքի և նրա միավորների վերլուծության կարողությունների ձևավորում,

- բանավոր և գրավոր խոսք կառուցելու կարողությունների մշակում,
- խոսքի կառուցման ընթացքում լեզվաքերականական գիտելիքները կիրառելու հմտություն,

- կարդացածը վերարտադրելու, տարբեր թեմաներով զրույցներ անցկացնելու, երկխոսություններ կառուցելու հմտությունների զարգացում:

Հայերենի՝ որպես 2-րդ լեզվի ուսուցման տարրական կրթության ծրագիրը նպատակաուղղված պիտի լինի՝

- սովորողի հաղորդակցվելու և համագործակցելու, հայախոս անձանց հետ շփվելու, լեզվակիր երկրի մշակույթին հաղորդակցվելու հիմքերի ձևավորմանը,

- սովորողի կողմից՝ հայոց լեզվի՝ որպես տեղեկատվություն ստանալու և փոխանցելու դերի ու նշանակության, լեզվակիր ժողովրդի հոգևոր-մշակութային արժեքների վերաբերյալ նախնական պատկերացում ունենալու գործում հայոց լեզվի իմացության դերի գիտակցմանը:

Տարրական կրթության ծրագիրը պետք է ներառի՝

- հաղորդակցման և առօրյա իրադրությունները նկարագրելու համար անհրաժեշտ բառապաշար,

- հայոց լեզվի հնչյունների ու այբուբենի, արտասանության և ուղղագրության, պարզագույն բառակապակցություններ և նախադասություններ կազմելու կանոնների վերաբերյալ նախնական տարրական գիտելիքներ, պատկերացումներ:

Հաջորդ մակարդակում օտարախոսներին հայերենի ուսուցման ծրագիրը նպատակաուղղված է՝

- սովորողի հաղորդակցվելու և համագործակցելու հմտությունների զարգացմանը,

- հայախոս անձանց հետ շփվելու, լեզվակիր երկրի և այլ երկրների ու ժողովուրդների քաղաքակրթությանն ու մշակույթին հաղորդակցվելու, դրանց լավագույն արժեքները յուրացնելու և հայերենով արտահայտելու, ինչպես նաև հայալեզու մշակույթն այլ ժողովուրդներին մատչելի դարձնելու հիմնական կարողությունների և հմտությունների ձևավորմանը,

- սովորողների կողմից հայերենի՝ որպես օտար լեզվի ճանաչողական և հաղորդակցական հնարավորությունների կարևորմանը, այն ներկայացնող ժողովրդի մշակույթի նկատմամբ հարգանքի դրսևորմանը:

Երկրորդ մակարդակի ծրագիրը պետք է ներառի՝

1) սովորողի նախասիրությունների և կենսագործունեության վերաբերյալ նկարագրությունների և հաղորդակցման համար բավարար բառապաշար,

2) հիմնական գիտելիքներ, պատկերացումներ՝

- հայերենի ուղղագրական և ուղղախոսական կանոնների, բառակազմության օրինաչափությունների վերաբերյալ,

- լեզվակիր ժողովրդի կարևորագույն տոների, սովորույթների, հանրահայտ մարդկանց, արվեստի և գրականության նմուշների մասին:

Երրորդ մակարդակում հայերենի ուսուցումը նպատակաուղղված է՝

- սովորողների բանավոր և գրավոր խոսքի միջոցով Հայաստանը, նրա մշակութային արժեքները ներկայացնելուն,

- հայալեզու աղբյուրներից ինքնուրույն օգտվելու, ստացված տեղեկությունը բնութագրելու, վերլուծելու և ընդհանրացնելու, հայերենով հաղորդակցության միջավայրում ինքնուրույն մտածողություն զարգացնելու, թարգմանական գործընթացում ոճական և գեղագիտական որոշ հնարներ կիրառելու համար անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանը,

- օտարախոսների կողմից հայերենի կարևորության և դրա իմացությունը հարստացնելու անհրաժեշտության գիտակցմանը, այն կրող ժողովրդի արժեքների և ավանդույթների գնահատմանը:

Երրորդ մակարդակի ծրագիրը պետք է ներառի՝

1) գիտելիքներ, պատկերացումներ՝

- հայերենի արտասանության և հնչերանգի ոճական տարբերակների, դրանց հաղորդակցական առանձնահատկությունների, բառաստեղծման սկզբունքների, հայերենի խոսքի մասերի, նախադասության անդամների, քերականական կանոնների կիրառության հիմնական օրինաչափությունների վերաբերյալ,

- լեզվակիր ժողովրդի պատմության ուրվագծերի և համամարդկային նշանակություն ունեցող նվաճումների մասին,

2) բնության, հասարակության, մշակութային արժեքների վերաբերյալ կարծիք արտահայտելու և տեղեկություն հաղորդելու համար անհրաժեշտ բառապաշար:

Ծրագրերի, դասագրքերի և մեթոդական ուղեցույցների ստեղծման ժամանակ անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ սկզբունքներով.

- Լեզվական նյութը պետք է ընդգրկել ոչ միայն ըստ լեզվաբանական կարգերի և մակարդակների հաջորդականության, այլև ըստ խոսքում գործածվելու հաճախականության, կապակցված խոսք կառուցելուն նպաստելու դերի՝ ելնելով լեզվի գործնական ուսուցման և հաղորդակցական կարողությունների զարգացման պահանջից:

- Անհրաժեշտ է ապահովել տեքստերի և լեզվական գիտելիքների փոխկապակցվածությունը: Դա հնարավորություն կտա ուսուցանվող քերականական երևույթը բավարար չափով լուսաբանել բնագրային օրինակներով և յուրացնել գործնականորեն:

Լեզվի ուսուցման արդյունավետությունն ապահովելու գրավականը միայն լեզվական իմացությունը չէ: Անհրաժեշտ է ՀՀ-ում շահավետ պայմաններ ստեղծել օտարախոսներին հայերենի ուսուցման գծով կրթությունը շարունակելու մագիստրատուրայում, ասպիրանտուրայում: Առայժմ Վ. Բրյուսովի անվան ԵրՊԼՀ-ն հանրապետությունում միակ ուսումնական հաստատությունն է, որը իրականացնում է

նման ծրագիր և պատրաստում մագիստրոսներ՝ օտարախոսներին հայերենի ուսուցման
մասնագիտացմամբ:

ՆԵԼԼԻ ՄԱՐԳՍՅԱՆ

ՀԱԱՀ հայոց և ռուսաց լեզուների ամբիոնի վարիչ,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՈՉ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԲՈՒՀԵՐՈՒՄ ԵՎ ԲԱԺԻՆՆԵՐՈՒՄ

Լեզուն կուլտուրայի ամենաճշգրիտ ու
անսխալական նշանացույցն է:
Վահան Տերյան

Հայերենի ուսուցումը դպրոցական տարիներից հետո շարունակվում է մասնագիտական և ոչ մասնագիտական բուհերում, և դա ոչ միայն կարևոր է, այլև հրատապ բոլոր ժամանակների համար: Լեզուն մարդու մտքերի արտահայտման ամենակատարյալ միջոցն է, աստվածային գերագույն պարզև, ինչպես գերմանացի լեզվաբան, արևելագետ, բանագետ Մաքս Ֆրիդրիխ Մյուլլերը (1823-1900) բնորոշում է. <<...եթե լեզուն բնության ստեղծագործությունն է, ապա դա բնության ամբողջ ստեղծագործությունը պակաս մի հրաշալիք է, որը պահպանված է եղել մարդու համար, եթե դա մարդկային ստեղծագործության արդյունք է, ապա դա բարձրացնում է ու հասցնում մարդուն աստվածային աստիճանի, եթե Աստծո պարզն է, ապա դա նրա ամենամեծ ու ամենաթանկագին պարզն է...>>¹:

Լեզվի ուսուցման ճիշտ կազմակերպումը կրթության բնագավառի գերխնդիրներից է բոլոր ժամանակներում: Ցանկացած ազգային լեզու մշտապես զարգանում և հարստանում է, եթե այն զարգացում է ապրում մարդկային կյանքի առաջընթացին համընթաց: Ամեն ժողովրդի լեզու զարգացնում է նաև տվյալ լեզուն կրողազգային գրողը, և դա պարտադիր օրինաչափություն է բոլոր լեզուների համար: Այն հայ իրականության մեջ երևան է գալիս դեռևս 5-րդ դարում, որը հայագիտության մեջ որակվում է <<նսկեդար>> պատվավոր եզրույթով կամ տերմինով: Դեռևս 5-րդ դարում պատմահայր, քերթողահայր Մովսես Խորենացին զգուշացնում էր իր հայրենակիցներին կրթության հարցերում հետ չմնալ ուրիշ ազգերից և լինել ուսումնատենչ: Նրա <<Հայոց պատմության>> ավարտը՝ <<Ողբը>>, այսօր էլ իր որոշ դրույթներով չի կորցրել արդիականությունը գիտության ու կրթության բնագավառներում. այն սթափեցնող ու սաստող պատվիրաններ է ուղղում թե՛

¹ Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1961, էջ 281-282:

ուսուցիչներին և թե՛ աշակերտներին. <<Ուսուցիչները՝ տխմար ու ինքնահավան, իրենք իրենցից պատիվ գտած և ոչ Աստծուց կոչված, փողով ընտրված և ոչ սուրբ հոգով. ոսկեսեր, նախանձոտ, թողած հեզությունը, որի մեջ Աստված է բնակվում և գայլ դարձած գիշատում են իրենց հոտերը>>²: <<Աշակերտները՝ սովորելու մեջ ծույլ, սովորեցնելու մեջ՝ փութաջան, որոնք դեռ չսովորած՝ աստվածաբան են>>³: Այսպիսի նկատառումներ կարելի է բերել մինչև Խաչատուր Աբովյանն ընկած ժամանակահատվածի հայոց պատմության տարբեր դարերի մատենագիրների երկերից:

Հայերենը Հայաստանի Հանրապետության պետական լեզուն է և օրինակելի պետք է լինի այդ պետության ցանկացած բարձրագույն ուսումնական հաստատություն ավարտած յուրաքանչյուր մասնագետի համար՝ լինի նա գյուղատնտես, ինժեներ, բժիշկ, կենսաբան, քիմիկոս, մաթեմատիկոս, ֆիզիկոս, աստղագետ, պարուսույց, բեմադրիչ, դերասան և այլն, և այլն: Եթե ուշադիր հետևենք լրատվամիջոցներով և հեռուստատեսությամբ մատուցվող հաղորդումներին ու նրանցում ընդգրկված տարբեր մասնակիցների խոսքին, ապա կտեսնենք տարրական լեզվաիմացության մեղանշումներ, առավել ցավալի է, երբ այդ մեղանշումների հեղինակները երբեմն հեռուստալրագրողներն են, հաճախ հայտնի մարդիկ, որոնց բառապաշարում էկրանից հնչում է՝ համբույրը՝ **համբյուր**, բարյացակամը՝ **բայրացկամ**, վիճելը՝ **վիճվել**, այլքը՝ **այլոք**, տուժելը՝ **տուժվել**, խնդրելը՝ **խնդրվել**, վերջ ի վերջոն՝ **վերջ ի վերջով** և նման շատ սխալներ: Էլ չենք ասում, թե որքան ավելորդ բառեր են կրկնվում նախադասություններում, որոնցից են անհարկի <<հա>>- երն ու <<ուրեմն>>-ները:

Յուրաքանչյուր մասնագետ պարտավոր է գրագետ խոսել, լավ իմանալ մայրենի լեզուն: Հայերի համար մայրենի լեզուն առավել քան կարևոր է. այն ազգապահպանման առաջին նախապայմանն է: Հիանալի է, որ վերջին տարիներին ոչ մասնագիտական բուհերում հայոց լեզուն համակցում են հայ գրականությանը, որովհետև առանց հայ գրողի երկերի լեզվի ուսուցման հնարավոր չէ սովորեցնել ճշգրիտ հայերենը: Նոր կրթակարգի արժեքների համակարգում առաջնային տեղում են հայոց լեզուն և հայ գրականությունը: Առանց գրականագիտական գիտելիքների և գրականության ուսուցման՝ հայոց լեզվի ուսուցումը լիարժեք չէ: <<Հայոց լեզու>> առարկան ոչ մասնագիտական բուհերում վերանվանվել է <<Հայոց լեզու և գրականություն>>: Բնականաբար, փոփոխվել են նաև առարկայական ծրագրերը: Մակայն ցավալի փաստ է, որ այդ առարկային հատկացված ժամաքանակը մնացել է նույնը, չի ավելացել. 68 ժամ ուսումնական տարվա կտրվածքով, այսինքն՝ շաբաթը մեկ հանդիպում (դասաժամ): Այն ուսումնասիրվում է ընդամենը մեկ տարի: Առարկային հատկացված դասաժամերի ավելացման խիստ պահանջ է զգացվում: Անկախ այն բանից, թե ինչ մասնագիտություն

² Մովսես խորենացի, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը և մեկնաբանությունները Ստ. Մալխասյանի, Երևան, 1981, էջ 451:

³ Նույն տեղում, էջ 453:

է ընտրել ուսանողը և որպէս ինչ մասնագետ է կայանալու, նա իր ամբողջ կյանքի ընթացքում պետք է դրսևորի ակնածանք ու սեր ազգային մշակույթի, իր նախնիների ստեղծած արժեքների հանդէպ: Գրողները լեզվի հսկողներն ու պահապաններն են, նրանք են ընտրում ճշգրիտ բառերն ու ոճերը, նրանց գրչի տակ է լեզուն բարձրանում դասականության աստիճանի:

Այսօրվա ոչ մասնագիտական բուհերի հայոց լեզվի դասախոսները ոչ միայն պետք է ուշադրություն դարձնեն կետադրության, ուղղագրության և լեզվական այլ կանոնների ուսուցմանը, այլև հետազոտական և այլ առաջադրանքներ հանձնարարելիս նախապատվությունը տան արդի հայերենի լեզվական պահանջներին:

Վահան Տերյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Եղիշե Չարենցը, Ակսել Բակունցը, Պարույր Սևակը լեզվաշինարարներ ու նորարարներ էին: Դրա հիմքը ոչ միայն նրանց գրելու աստվածատուր տաղանդն ու հանճարն էր, այլև հայերենի, հայ ժողովրդի անցած պատմական ճանապարհի վերաբերյալ ունեցած գիտելիքները:

Հիշենք, թե 1936-ի հոկտեմբերի 14-ին ինչպէս է բնութագրել Եղիշե Չարենցը Ակսել Բակունցի արձակի լեզուն.

.... Եվ բառերի համար քո մարմարյա,
Հնամենի, բուրյան, որպէս մեր հին
Քարաքանդակ անդուռ մատուռների
Անջնջելի գրերն հնադարյան,-
Եվ մյուռոնի նման սրբազնագույն
Քո երկերի մաքուր սկիհներում պահված՝
Խորհուրդների համար մշտահմա,
Որպէս խորհուրդը մեր նախրական ոգու...⁴

Չմոռանանք, որ <<մարմարյա>> բառերով ստեղծագործող Ակսել Բակունցն իր մասին գրում է. <<...20-23 թիվը՝ ուսանող Խարկովի գյուղատնտեսական ինստիտուտի : 1923 թվից հետո՝ ագրոնոմ>>⁵:

Հիշենք նաև, որ <<Ձորի Միրոն>> հրաշալի վեպի հեղինակ Մուշեղ Գալշոյանը ևս ուներ գյուղատնտեսական կրթություն. 1957-ին ավարտել էր Հայաստանի գյուղատնտեսական ինստիտուտի այգեգործական ֆակուլտետը:

Չկա ավելի հաճելի իրողություն, քան այն, երբ որևէ երկրի ցանկացած կրթված քաղաքացի աշխարհին ու օտարներին ներկայանալուց առաջ իր հոգու աշխարհում, իր գիտելիքների գանձարանում փայփայում է իր ազգայինը՝ քաջատեղյակ լինելով նաև համամարդկայինին:

⁴ Եղիշե Չարենց, Վերջին խոսք, Երևան, 2007, էջ 103:

⁵ Ակսել Բակունց, Երկեր, Երևան, 1955, էջ XX:

XIX դարի երկրորդ կեսի բելգիացի նշանավոր հայագետ Ֆելիքս Ներ գրում է. <<Աշխարհում խիստ ցրված հայերը տազնապալից հոգատարությամբ, աշխարհի տարբեր վայրերում բացում են ազգային դպրոցներ իրենց երեխաների համար՝ ազգային լեզուն դիտելով որպես իրենց անկախության երաշխիքը>>: Նա միաժամանակ նշում է. <<նրանք բնածին բազմալեզվագետներ են (polyglotte) և այդ պատճառով ավելի դյուրությամբ են շփվում տարբեր երկրների հետ, քան արևելյան երկրների ուրիշ ժողովուրդներ>>⁶ :

Առավել ևս ցանկալի է, որ իր մայրենին յուրացրած մտավորականը, որին գենետիկորեն տրված է այլ լեզուներ ավելի արագ սովորելու բնատուր հնարավորությունը, այդ առավելությունն օգտագործի նախ գրագետ հայերենով գրելու ու խոսելու համար:

Մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը պատգամում էր իր ազգի նորահաս երիտասարդներին իմանալ տասը լեզու, սակայն իր լեզուն ու հավատը պինդ պահել⁷ :

Հայոց լեզվի և գրականության իմացությունն ամեն հայի համար պարտադիր պայման է դիտում հանճարեղ Հովհաննես Թումանյանը, իսկ ազգային գրականության ուսուցումը համարում է ամեն ազգի հզորության ու անխորտակելիության երաշխիք. <<Դպրոցը գրականության հիմքն է, գրականությունը դպրոցի բովանդակությունը, երկուսը միացած են պայծառ ու լուսավոր ուժով, որով հզոր ու անխորտակելի են դառնում ժողովուրդները ու մտնում են կուլտուրական ազգերի եղբայրության մեջ>>⁸ :_

Այժմ բարձրագույն հաստատություն ընդունվում են՝ սկսած 18 տարեկանից, այսինքն՝ հայ նորացված դպրոցի շրջանավարտը XII դասարանն ավարտելուց հետո գալիս է բուհ՝ իր կրթության առավել հասուն շրջանը սկսելու: Ենթադրվում է, որ նա ընտրում է իր նախասիրած մասնագիտությունը, իսկ անցնելիք առարկաները լիովին տարբեր են ավագ դպրոցի առարկաներից: Նույնը միայն մեկն է՝ հայոց լեզուն, նաև որևէ օտար լեզու, որոնք նա սովորել է նաև դպրոցում: Հայոց լեզվի ուսուցման նպատակն է ոչ մասնագիտական բուհերի ուսանողների մոտ ձևավորել սեփական մտքերը, կարծիքը արտահայտելու, ճիշտ և գրագետ խոսելու կարողություններ: Ուսանողները պետք է կարողանան լսարանի առջև ելույթ ունենալ, ընդարձակ կամ հակիրճ խոսքով գրավել ունկնդիրների ուշադրությունը, մասնագիտական և այլ առարկաներ յուրացնելիս կիրառել իրենց լեզվական հմտությունները:

Բարձրագույն հաստատության հայոց լեզվի առարկայական ծրագրերը, ուսուցման մեթոդներն ու եղանակներն արմատապես պետք է տարբերվեն դպրոցական

⁶ Ա.Դոլուխանյան, Ֆելիքս Ներ և հայ քրիստոնեական գրականությունը, Երևան, 2001, էջ 76:

⁷ <<Ձե՛զ եմ ասում՝ ձե՛զ՝ Հայոց նորահաս երիտասարդք՝ ձեր անունին մեռնիմ, ձեր արևին դուրբան, տասը լեզու սովորեցե՛ք, ձեր լեզուն , ձեր հավատը դայիմ բռնեցե՛ք>> (տե՛ս Խ. Աբովյան, Վերք հայաստանի, Ողբ Հայրենասիրի, Երևան, 2004, էջ 141):

⁸ Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. 7, Երևան, 1995, էջ 51:

ծրագրերից: Չէ՞ որ դասախոսը կրթում և ուսուցանում է արդեն ոչ թե աշակերտի, այլ հասուն մարդու, ուրեմն բուհական ծրագրերը պետք է լինեն հասուն մարդու հետաքրքրությունները բավարարող ծրագրեր և արմատապես տարբեր դպրոցականից: Եվ եթե Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից ավելացվի «Հայոց լեզու և գրականություն» առարկային հատկացված ժամաքանակը ոչ մասնագիտական բուհերում, և երբ այն ուսումնասիրեն ոչ միայն բակալավրիատում այլև մագիստրատուրայում, ապա հայոց լեզվի ուսուցումը կլինի առավել հիմնավոր և արդյունավետ:

Զգալի է այն պակասը, որ կա հայոց լեզվի դասագրքերի խնդրում, ըստ որում՝ ոչ միայն դասագրքերի, այլև օժանդակ ուսումնական ձեռնարկների հեղինակները պետք է բազմագիտակ և հմուտ լինեն ու դրանք կազմելիս ելնեն տվյալ բուհի մասնագիտական առանձնահատկություններից:

Յուրաքանչյուր կրթված մարդ կարիք ունի լսելու գրագետ և հստակ խոսք: Գյուղատնտեսներ, անասնաբույժներ, գյուղատնտեսության գծով տնտեսագետներ, ճարտարագետներ, տեխնոլոգներ և այլ մասնագետներ պատրաստող Հայաստանի ազգային ազրարային համալսարան են ընդունվում ոչ միայն երեկվա դպրոցն ավարտած աշակերտները, այլև համեմատաբար ավելի վաղ շրջանում իրենց միջնակարգ կրթությունը ստացած անձինք, որոնք ինչ-որ չափով հեռացել են ոչ միայն հայոց լեզվից ու գրականությունից, այլև մշակութային խնդիրներից, ուստի հայոց լեզվի ուսուցումը անհրաժեշտ է ուսանողների լեզվական գիտելիքները գործնականորեն կիրառելու, բառապաշարը հարստացնելու, խոսքը գրագետ հայերենով կառուցելու, բանավոր և գրավոր խոսքը ճշգրիտ վերարտադրելու համար: Ազգի ինքնաճանաչման հիմքը դրվում է նախ ընտանիքում, հետո՝ դպրոցում, սակայն այն ավելի է արմատավորվում բուհում: Մարդկային հասարակությունը մեծ կարիք ունի կրթվելու: Կրթված մարդու զարգացած բանականությունը նրան հեռու է պահում հոռի երևույթներից, առողջացնում է հասարակությունը, մարդկային կյանքը դարձնում ավելի լուսավոր: Անհրաժեշտ է ոչ մասնագիտական բուհերի «Հայոց լեզու և գրականություն» առարկայի ծրագրերում հատուկ տեղ հատկացնել հայ հերոսական էպոսին՝ «Մասունցի Դավթին», որի վերժամանակյա գաղափարներն ուղղված են ոչ միայն հայերին, այլև համայն մարդկությանը:

Ոչ մասնագիտական բուհերի «Հայոց լեզու և գրականություն» առարկայի ծրագրերում որոշակի տեղ պետք է հատկացվի հայ ժողովրդի այն բարեկամներին, ովքեր 1915 թվականի հայակործան ցեղասպանության առիթով իրենց բողոքի ձայնը բարձրացրին, ողջ աշխարհի առաջ ներկայացրին հոգևոր Հայաստանի բերած նպաստը համաշխարհային գրականությանն ու արվեստին: Տվյալ առարկայի ժամերին անհրաժեշտ է պահպանել միջառարկայական կապերը: Դասախոսն ընտրում է որևէ գրողի պատմվածք կամ բանաստեղծություն, վերլուծում է, ներկայացնում դրանց նախ

հայերեն բնագիրը, ապա՝ թարգմանությունը: Ռուս նշանավոր քանաստեղծ Վալերի Բրյուսովը 1916-ին Մոսկվայում հրատարակում է „Поэзия Армении“ ժողովածուն՝ ներկայացնելով հայ հանճարի քնարական դրսևորումները Գողթան երգերից մինչև մեր օրերը: Եղիշե Չարենցը 1934 թվականի հոկտեմբերի 17-ին խորիմաստ ու երախտագիտությամբ լի քանաստեղծություն է նվիրում Վալերի Բրյուսովին: Ահա դրանց հայերեն ու ռուսերեն տարբերակները:

Եղիշե Չարենց . <<Վալերի Բրյուսովին>>

Մառն ու հմուտ էիր, խոր ու գիտուն,
Պատմությունն էր անհուն քո Մուսագետը, -
Եվ դու եղար մեզ հետ, երբ ահավոր աղետը
Մոլեգնությամբ իր բիրտ՝ մտավ մեր տուն: -
 Այն օրերում մեր տանը չկար խնդում,
 Կորնչում էր միգում մեր արահետը,-
 Եվ մեր հանճարը հին, կոփված անդուլ
 Սերունդների ջանքով - դեռ անձանթ մի գետ էր:
Դու սուզվեցի՛ր, վարպետ, անեզրական այդ ծովը,
Եվ շլացած անձիր մեր գանձերի փայլից -
Ելար, ինչպես նավագ, որ գյուտերից գինով է...
 Եվ աշխարհի առջև, որ դեռ ահո՛վ էր լի,
 Դու բացեցիր ոգու գանձարանն անհուն -
 Եվ մեզ համար դարձար - անմարելի անուն... ⁹

Егише Чаренц - „Валерию Брюсову“

Был холоден, искусен, многознающ,
Чтил Клио, проницал столетий тьму,
И с нами был ты, был нам как товарищ,
Когда жила беда у нас в дому.
 Был в этом доме сумрак скорбно-давящ,
 Стезя народа таяла в дыму,
 Наш древний гений, выросший средь пожарищ,
 Он был еще неведом никому.
Нырнул ты в наше море, в мир бездонный
И, оглядевшись, выплыл, потрясенный,
Как блеском ослепленный водолаз...
 И в мире страшном, в жизни злой и утлой,
 Сокровищницу нашу распахнул ты,
 И стал нетленным именем для нас.¹⁰

⁹ Եղիշե Չարենց, Վերջին խոսք, էջ 21:

Այս բանաստեղծությանն անդրադարձը կներկայացնի նախ Եղիշե Չարենցի գնահատականները տրված հայ ժողովրդի հոգևոր հարստությանը, միաժամանակ կներկայացնի կատարվածը: Պատմական ճակատագրով ունենք արևելահայ ու արևմտահայ գրական գլուխգործոցներ: Ոչ մասնագիտական բուհերում արևմտահայերենի՝ դպրոցում անցած գիտելիքներն ամրապնդելու համար կարելի է նշանավոր գրողների փոքրածավալ գործեր ընդգրկել ուսումնական ծրագրերում: Օրինակ՝ մի հիանալի բանաստեղծություն Դանիել Վարուժանից կամ Միսաք Մեծարենցից, մի մանրապատում մեծ երգիծաբան Հակոբ Պարոնյանից և մի նովել Գրիգոր Զոհրապից՝ իհարկե դրանց վարպետ մեկնաբանությամբ:

1962թ. մարտի 25-ի «Գրական թերթում» տպարվում է Պարույր Սևակի «Պահպանենք և հարստացնենք մայրենին» հոդվածը, որը մեծ արձագանք է գտնում ոչ միայն Հայաստանում, այլև սփյուռքահայերի մոտ և արտատպվում է Բեյրութի «Արարատ», Ալեքսանդրիայի «Սևան», Նյու Յորքի «Լրաբեր» թերթերում¹¹: Այդ հոդվածում Պ.Սևակը հիշեցնում է, թե ինչպես էր Տուրգենևը պայքարում ռուսերենի մաքրության ու անթերի լինելու համար: Ի դեպ, ռուս դասականի այս մտահոգությունն այսօր էլ իրավամբ օրակարգային է բազմամիլիոնանոց Ռուսաստանի համար: Բավական է բացել „Литературная газета“ - ի վերջին մեկ տարվա մի շարք համարներ, և կգտնենք բազմաթիվ հոդվածներ՝ նվիրված „Великий, могучий русский язык“, բնութագրին: Դրանց դրույթները մեզ համար էլ կարևոր են, որովհետև եթե ռուսերենը, ֆրանսերենը, իսպաներենը, գերմաներենը Միացյալ Ազգերի կազմակերպության լեզուներից են, և այդ լեզուներով խոսող մեծ տերությունները շարունակ գրում են իրենց լեզվի շահերի մասին, ապա հայերն այս դեպքում առավել նուրբ կարգավիճակում են:

Թող մեզ համար որպես հավերժական պատգամ հնչեն Պարույր Սևակի հետևյալ խոսքերը. «Գալով անհիշելի ժամանակներից, անցնելով բազում դարերի միջով, շփվելով բազմաթիվ ազգերի լեզուներին» հայոց լեզուն մի յուրահատուկ հանրագիտարան է անհիշելի ժամանակների, բազում դարերի և բազմաթիվ այլ ազգերի: Այսպես դատելով՝ մեր լեզուն միայն մեզ չի պատկանում, այլև աշխարհին, նա միայն մեր սրբությունը չէ, այլև մասունքը հանուր մարդկության: Այս պատճառով էլ նա ուսումնասիրվում է ոչ միայն մեր պետական համալսարանում, այլև աշխարհի շատ համալսարաններում: Բայց այդ լեզվի խնամքը, նրա անադարտությունը, նրա պահպանությունն ու պաշտպանությունը դրված է մեզ վրա: Օտար համալսարաններն ու ակադեմիաներն ի վիճակի չեն անելու այն, ինչ պարտավոր է անել հայկական համալսարանն ու հայկական ակադեմիան՝ նաև այդ համալսարանների ու ակադեմիաների բարոյական

¹⁰ Егише Чаренц, Поправший смерть, Сотворивший твердь, Стихотворения и поэмы, Перевод с армянского, Москва, 2008, с.25.

¹¹ Տե՛ս Պ.Սևակ, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1974, էջ 411:

պարտադրանքով: Եվ պարտավոր է անել Հայաստան աշխարհը՝ համայն աշխարհի հոգեկան պարտադրանքով>>¹²:

¹² Նույն տեղում, էջ 155:

ՋԵՄՄԱ ԲԱՌՆԱՍՅԱԼ

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող,
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԼԵԶՎԱԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՁ

Եթե մեկ տասնամյակ առաջ մեզ առաջարկվեք կարծիք հայտնել լեզվագործածության խնդիրների մասին, ապա մեր խոսքը, հավանաբար, կսկսեինք այսպես. <<Մեր նորանկախ պետության վարած լեզվաքաղաքականությունը զգուշանալու հիմքեր է տալիս>>: Սակայն քսաներկու տարին քիչ ժամանակահատված չէ, և պետական լեզվի հանդեպ անփույթ վերաբերմունքը բազում խնդիրներ է ծնել՝ լեզվի մաքրության ու պահպանության հարցերին նախանձախնդիր մտավորականների առջև դնելով օրըստօրե անհազնացող հրամայականը՝ լեզվաքաղաքականությունն ընդգրկել ազգային անվտանգության ոլորտում: ՀՀ նորանկախ պետության ստեղծման շրջանում մեր պետական այրերը քաջ գիտակցում էին, որ պետք է ապահովել պետական լեզվի անմրցակից գործառույթ, իսկ դրան հասնելու համար հարկ էր մշակել լեզվաքաղաքականություն: Իբրև կարգախոս ընդունվեց հնուց ի վեր հայտնի ճշմարտությունը՝ պետությունը պահողը զենքն է և լեզուն: Սակայն լեզվաքաղաքականությունը ժամանակ առ ժամանակ պետք է վերանայվի, թարմացվի՝ դիմակայելու համար համաշխարհային գործընթացների թելադրանքին:

Ուղիղ քսան տարի առաջ ՀՀ ԳԽ կողմից ընդունվեց <<Լեզվի մասին ՀՀ օրենքը>>, ստեղծվեց նաև օրենսդրական դաշտը վերահսկելուն և օրենքի կիրառությանը հետամուտ լինելուն ուղղորդված մի մարմին՝ Լեզվի տեսչություն, որն ստանձնեց նաև լուծարված տերմինաբանական խորհրդի լիազորությունները: Իբրև կառավարությանը կից մարմին ունենալով համապատասխան լծակներ՝ սկզբնական շրջանում տեսչությունը գործուն միջամտություն էր ցուցաբերում նորանկախ պետության լեզվաքաղաքականության հարցում, հատկապես՝ լեզվագործածության խնդիրներում: Աստիճանաբար այդ մարմինը կորցրեց իր վարկանիշը՝ դառնալով ԿԳՆ-ին կից անատամ մի կառույց: Իսկ այն խորհրդանշական տուգանքները, որ սահմանված են խախտումների դեպքում, ծիծաղելի են ուղղակի: Սակայն օրենքն օրենք է, և կարգազանցը պետք է պատժվի: Ժամանակին առաջարկություն եղավ այդ հարցը մտցնել աշխատանքային օրենսգիրք՝ լեզվական խաթարումներով պետական լեզվի հանդեպ անհարգալից վերաբերմունք դրսևորող պաշտոնյաների պաշտոնանկության, գործունեությունը դադարեցնելու պահանջով: Թվում է՝ ծայրահեղ մոտեցում է: Սակայն դա կարող է սթափեցնել ինչ-որ անհասկանալի թմբիրի մեջ ընկած մեր

հասարակությանը: Եթե մայրենի լեզվի շահերը ոտնահարվում են ԱԺ պատգամավորների կողմից, հարցը պիտի քննության առնվի ԱԺ էթիկայի հանձնաժողովում, որի դերը միայն անհարգելի բացակայությունների հարցը քննելը չէ: Լեզվի մասին ընդունված օրենքը զանց առնելը նույնպես օրինախախտում է:

Հրապարակախոսությունը լեզվագործածության օրինակ պիտի ծառայի ողջ հանրության համար՝ բացառելով անհարկի օտարաբանությունը, շեղալեզուն (ժարգոնը), բարբառաբանությունը: Գաղտնիք չէ, որ գրական լեզվի կանոնարկմանը խոչընդոտում են նաև հայերենի կենդանի բարբառները, թեև անուրանալի է բարբառների դերը գրական լեզվին կենսատու ավիշ հաղորդելու, դիպուկ ու պատկերավոր բառերով, արտահայտություններով, դարձվածքներով խոսքն առավել ճկուն, կենսունակ դարձնելու հարցում: Նրանցից սնվելով՝ գրական լեզուն խուսափում է արհեստականությունից: Երբ միմյանց հետ հաղորդակցվում են միևնույն տարածքից սերող մարդիկ, բարբառը մտերմություն է հաղորդում նրանց խոսքին: Խելամտորեն օգտվելով բարբառների բառազանձից՝ կունենանք հարուստ ու կենսունակ գրական լեզու:

Մինչդեռ պաշտոնական խոսքում բարբառաբանությունն աններելի է: Նման պաշտոնյան ծաղրուծանակի առարկա է դառնում, նրա ասելիքը պատշաճ ուշադրության չի արժանանում, պակասում է հարգանքը նրա անձի նկատմամբ: Անառարկելի է նաև, որ գրական լեզվին լավ տիրապետելը ավելացնում է խոսողի ազդեցությունը:

Լինելով բարբառագետ՝ մեզ քաջ հայտնի է, թե հաճախ բարբառախոսի համար որքա՞ն դժվար է մայրենի խոսվածքին բնորոշ շեշտադրությունը հաղթահարելը, սակայն է օժանդակ բայի փոխարեն բարբառների Արևելյան խմբակցության խոսվածքներին հատուկ **ա** օժանդակ բայը գործածելը կամայականություն է, շատ դեպքերում՝ գավառամտության արդյունք՝ Երևանի բարբառին հատուկ իրողությունները նմանակելու միտումով: Բանն այնտեղ է հասել, որ Շիրակի տարածքի բնակիչ պատգամավորն անգամ այդպես է վարվում՝ ծիծաղելի դարձնելով իր խոսքը: Իր պետության շահերը հարգող պաշտոնատար անձը իրավունք չունի պաշտոնական հանդիպումների, հավաքների, գիտաժողովների ժամանակ տուրք տալ բարբառին:

Խոսենք լեզվագործածության ամենատեսանելի ոլորտի՝ **բառագործածության խնդիրների** մասին:

Արդեն վաղուց մշտական գործառույթ է ապահովվել այնպիսի բարեհունչ բառերի համար, ինչպես՝ *գիտաժողով, շնորհանդես, ասենախոսություն, սեղմագիր*, հասարակական կյանքում նոր արմատավորվող իրողությունների համար ի հայտ եկան դիպուկ ընտրված բառեր՝ *ընտրազանգված, ընտրատարածք, հոչակագիր, հանրահավաք, քարոզարշավ, վարկանիշ* և այլն:

Ի դեպ, հնաբանությունների նորովի կիրառությունը սկզբում կարող է վիճահարույց լինել, բայց և արագ ընդունվել հանրության կողմից և գործառել, եթե դիպուկ է ընտրված: Շատերս ենք հիշում, թե մեր նորանկախ պետության խորհրդարանում ինչ կրքեր բորբոքեց *դեպուտատ* բառի հայերեն համարժեքը՝ *պատգամավոր*: Նախ առաջարկվեց ընդունել լեզվաշինության հարցում առավել մեծ փորձ ունեցող արևմտահայերենում առկա *երեսփոխան* բառը, որն իրավամբ անբարեհունչ համարվեց արևելահայերենի համար: Սակայն *պատգամավոր* բառը՝ միանգամայն հասկանալի բառիմաստով՝ *ժողովրդի պատգամը ներկայացնող*, արագ արմատավորվեց մեր լեզվում: Ժամանակին նույնպիսի վեճեր հարուցեցին *նախարար*, *վարչապետ*, *մարզպետ*, *թաղապետ* և բազում այլ հայահունչ, հայաշունչ բառեր: Հիմա արդեն հայերենի բառագանձից ընտրված այդ բառերը համագործածական են, ինչպես որ այսօր գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումները հայ մարդուն հասկանալի լեզվով ներկայացնող *համակարգիչ*, *համացանց*, *կայքէջ* և նմանատիպ բարեհունչ բառերը օտար ձևերի փոխարեն լայնորեն գործառում են հայերենում՝ փաստելով մեր լեզվի բառակազմական ճկունությունը:

Սակայն համաշխարհայնացման այս դարում նորանոր եզրեր ստեղծելու անհրաժեշտությունը մեզանում բախվում է մի շատ ցավոտ խնդրի. չի գործում Հայերենի բարձրագույն խորհուրդը, որը հաջողությամբ իրականացնում էր լեզվական խնդիրների կանոնարկման իր առաքելությունը: Ուստի և լայն դուռ է բացվել բառաստեղծման մարմաջով տառապող պարապ կիսագրագետների համար, ովքեր համացանցը ողողում են ինքնահնար բառերով՝ հաճախ գռեհկաբանությունների արժեք ունեցող: Եվ զարմանալի արագությամբ այդ ողորմելի բառերը տարածում են գտնում աճող սերնդի մեջ՝ դրանից սերող բոլոր մերժելի հետևանքներով. մայրենի լեզուն դառնում է ծաղրուծանակի առարկա:

Մայրենի լեզվին նվիրված այս գիտաժողովի առիթով հարկ է դիմել ՀՀ Ազգային ժողովի համապատասխան հանձնաժողովին՝ Հայերենի բարձրագույն խորհրդի անխափան գործունեությունն ապահովելու պահանջով: Չենք ասում՝ վերականգնել խորհրդի գործունեությունը, որովհետև պաշտոնապես այն դադարեցված չէ: Պարզապես պետք է տալ այդ խորհրդին գորեղ լծակներ՝ լեզվապահպան գործունեություն իրականացնելու համար: Դա է նոր ժամանակների հրամայականը՝ պետական լեզուն ամենաթողության հետևանքով վտանգավոր խաթարումներից փրկելու, լեզվագործածության արդի խնդիրները կանոնարկելու, տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաների հրամայականով նորանոր եզրեր ստեղծելու գործը վերահսկելու, անհաջող բառաստեղծումներով լեզվի վարկանիշը գցողների անարգել երթը պատնեշելու և լեզվի բնական զարգացումն ապահովելու նպատակով:

Հանրակրթության խնդիրներ

Պարզ, անկաշկանդ խոսք կառուցելու հմտություններ մշակելուն միտված ամեն աշխատանք դրվատանքի է արժանի: Բոլորիս էլ ցավ է պատճառում, երբ այլազգի երեխաները հանգիստ կարողանում են շարադրել իրենց մտքերը, պատասխանել ամենաանսպասելի հարցերին՝ դրսևորելով տանը և դպրոցում ստացած գիտելիքները: Իսկ հայ երեխան, հայ մարդը, անգամ քաղաքական գործիչը, մտավորականը կաշկանդվում է, շփոթվում, իր միտքն արտահայտելու համար դիմում է անհարկի օտարաբանությունների:

Գեղեցիկ խոսելու արվեստ, ինչպես հայտնի է, ձեռք է բերվում քերականական կանոնների սերտման ճանապարհով, որքան էլ ձանձրալի ու դժվարին լինի այդ ուղին: Սակայն ամեն բան չափի մեջ է գեղեցիկ:

Համատարած ամենաթողության պայմաններում հասարակությունն անգոր է մայրենի լեզվի շահերը պաշտպանելու հարցում: Ո՞ւմ դիմեն: Լեզվական ամենափոքրիկ սխալի համար կարող է պատժվել միայն դպրոցի ավարտական քննություն հանձնող շրջանավարտը, եթե պատշաճ կերպով չի սերտել համապատասխան քերականական կանոնը, ինչն էլ բախտորոշ կարող է լինել բուհ ընդունվելիս: Կրթության և գիտության նախարարությունից անջատ գործող կառույցը՝ ԳԹԿ-ն, վերջին երկու տարում զբաղված է շտեմարանային բիզնեսով՝ մեկը մյուսի հետևից թողարկելով նորանոր շտեմարաններ և դրանք մեր երկրի քաղաքացիների համար բավական անմատչելի գներով վաճառելով շրջանավարտներին, ավելի ճիշտ՝ նրանց ծնողներին: Անցյալ ուսումնական տարում լույսընծայված 4 շտեմարանները բավարար չհամարելով՝ վերջին ամիսների ընթացքում վաճառքի հանեցին ևս երկուսը, որոնցից էլ պիտի ընտրվեն ընթացիկ տարվա պետական ավարտական և միասնական քննությունների թեստային առաջադրանքները:

Դեռ մի կողմ թողնենք ծրագիր-դասագիրք-շտեմարան շղթայի անհամապատասխանությունն ու անհեթեթության հասնող քերականական կանոնների շուրջ ճամարտակությունները՝ քաղված ոչ թե դասագրքերից, այլ լեզվաբանական ուսումնասիրություններից, և անդրադառնանք հանրակրթության մասին հաստատված օրենքի 30-րդ հոդվածի 20-րդ կետի ոտնահարմանը: Ըստ դրա՝ նմանատիպ շտեմարանները մասնագետների հավանությանն արժանանալուց հետո դեռ 2-3 տարի էլ պիտի անցնեին փորձաքննություն հանրակրթական դպրոցների ավարտական դասարաններում, հետո միայն հիմք դառնային միասնական քննության թեստերը կազմելիս: Իսկ ի՞նչ ենք տեսնում իրականում... Մեկ-երկու ամիս առաջ հրատարակված շտեմարանները ԿԳՆ-ի թույլտվությամբ հիմք դարձան 2012 թ. պետական ավարտական և միասնական քննությունների թեստերը կազմելու համար՝ խախտելով ՀՀ Սահմանադրությամբ ամրակայված օրենքը հանրակրթության մասին: Ո՞վ պետք է պատասխան տա օրենքի խեղաթյուրման համար:

Ինչ վերաբերում է վերջին երկու շտեմարանների բովանդակային կողմին, ապա դրանք տարակուսանք առաջացրին մասնագետների շրջանում և հիասթափեցրին շրջանավարտներին: Կազմողները ջանք ու եռանդ չէին խնայել շտեմարան խցկելու բազմաբնույթ հնացած բառեր, բարբառաբանություններ, գրաբարաբանություններ, քարացած ածանցներ ու ստուգաբանական արմատներ՝ շատ դեպքերում ստուգաբանական բառարաններում վիճահարույց և անստույգ համարված: Իսկ ամենացնոց նորարարությունը <<Պնդումների փունջն>> է, որոնցում առկա հարցերից շատերի պատասխանները գիտական գրականության մեջ էլ չես գտնի, քանզի խրթին ձևակերպումներ են: Այլ կերպ ասած՝ նույնիսկ լավ պարապած շրջանավարտն իրեն կզգա ականապատ դաշտում: Տեսական գիտելիքները պիտի երևան գործնական առաջադրանքներ կատարելիս. դա է պահանջում օրենքը:

Ինչո՞ւ ենք անդրադառնում հանրակրթական ոլորտին առնչվող այս հարցին լեզվագործածության արդի խնդիրներն արծարծելիս: Հենց այն պարզ պատճառով, որ դպրոցական դասագրքերով աշակերտին քերականախեղդ անելով՝ դեռ նրան չենք տալիս մայրենի լեզվին պատշաճ չափով տիրապետելու, իր մտքերն անկաշկանդ արտահայտելու, բանավոր ու գրավոր գեղեցիկ խոսք կառուցելու բավարար ունակություն, հմտություն: Այլ խոսքով՝ հանրակրթությունը չի ծառայում իր բուն նպատակին՝ ունենալ համակողմանի զարգացած, կիրթ ու գրագետ քաղաքացի:

Եթերի լեզուն

Անառարկելի է, որ այսօր ամենաեծան և մատչելի լրատվամիջոցը հեռուստատեսությունն է: Հսկայական է նրա դերը հասարակության կյանքում: Եթերից հնչող խոսքը օրինակ կարող է ծառայել աճող սերնդի համար, ցավոք, շատ դեպքերում՝ վատ օրինակ: Եթե հեռուստագովազդի ժամանակ հնչում են. <<**թարմեցնող հյութ**>>, <<**փափկեցնող օձառ**>> բառակապակցությունները, սկզբում շատերն են նկատում և ընդվզում այդպիսի սխալների դեմ, սակայն աստիճանաբար աշխատում են չնկատել, կամ ուղղակի ալիքը փոխել: Վատն այն է, որ ուղղախոսական սխալներին կարելի է աստիճանաբար ընտելանալ: Շատ հաճախ ժամանցային ծրագրերի ընթացքում գիտակցաբար են աղավաղում լեզուն՝ իբր թե կատակով, բառախաղի տեսք տալով սխալին: Իսկ իրականում այդ տգեղ, անճոռնի, խեղված բառաձևերը թափանցում և արմատավորվում են երեխաների, երիտասարդների առօրյա խոսքում, մոլախոտի նման արագորեն տարածվում են՝ վտանգելով մեր խոսքը, մեր լեզուն: Լեզվական աղետը կանխելու համար անհրաժեշտ է վերանայել մեր լեզվաքաղաքականությունը:

Ստահոգությունները շատ են, և առաջին հերթին մայրենի լեզվի մշակները պիտի գտնեն լավագույն լուծում լեզվապահպանության, նույնն է թե՛ ազգապահպանության խնդիրների համար:

ՆԱԶԻԿ ՆՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Ն.ԱՃառյանի անվան լեզվի ինստիտուտի փոխտնօրեն,
բանասիրական գիտությունների թեկնածու

ԼԵԶՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻՑ ՄԻ ՇԱՐՔ ՇԵՂՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Լեզուն՝ իբրև կարևորագույն երևույթ, ունի դրսևորման յուրահատկություններ կյանքի տարբեր ոլորտներում: Բայց բոլոր դեպքերում՝ քաղաքական և այլ հաղորդագրություններից սկսած մինչև կենցաղին վերաբերող ակնարկները, գիտական հոդվածները, առօրյա խոսակցականը, լեզվի դրսևորումները պետք է ունենան լեզվական ճշգրտություն, հակիրճություն, ընթերցողին կամ լսողին վարակելու գրավչություն, մատուցման բազմազանություն: Մա ընդհանուր պահանջ է, որը միաժամանակ ենթադրում է մայրենի լեզվի հարըստության, արտահայտչականության հնարավորությունների ու միջոցների զգացողություն և իմացություն: Լեզվական պատշաճ զգացողությամբ, օր առ օր հղկվող-պատվաստվող ճաշակով միայն կարելի է խուսափել խոսքը կաշկանդող, հայերենին օտար, հայերենը ճապաղեցնող բազմատեսակ խորթ կաղապարներից, մաշված, ծեծված-ծեծկոտված պատրաստի արտահայտություններից:

Ամեն պարագայում՝ նման չարաշահումները լեզվի աղքատության նշան են, որոնք ժամանակին Պարույր Սևակը որակել է «հայերենի բառամթերից կեսբուռ օգտվելու կամավոր մուրացիկություն»:

Դժբախտաբար, լեզվական բազմապիսի չարաշահումները և աղաղակող սխալները ահավոր չափերի են հասնում մերօրյա և՛ գրական, և՛ խոսակցական լեզվում: Այդ պատճառով պետք է հանձն առնել ամենօրյա հաղորդագրություններում, լուրերում, խոսակցական լեզվում նկատվող աղավաղումներն ու վրիպումները, պատճենված կաղապարները վեր հանելու, բացատրելու, շտկելու-ուղղելու պարտավորություն: Այդ դեպքում, թերևս, կնվազեն անվերջ հոլովվող, հայոց լեզվամտածողությանն ու լեզվին օտար կաղապարները, որոնցով՝ *խոսակցությունները գնում են, վերլուծությունը կատարվում է, հարցադրումները լինում են, պրոբլեմների ուսումնասիրումն ու առաջարկությունների մշակումը կազմակերպվում է, հարցը կայանում է նրանում, հաճախ էլ կարծիք են հայտնում, խոսում, մտորում կամ գրույցներ վարում (ասել է՝ գրուցում) որևէ հարցի շուրջը* և այլն:

Մինչդեռ հայոց լեզվի բայերն ինքնին լիցքառատ են, նույն այդ մտքերը կարելի է արտահայտել առանց ավելորդ բառակույտի՝ *լրջորեն խոսել, հարց հարուցել/առաջ քաշել/արձարծել, իրավիճակը վերլուծել, հարցն այն է...* և այլն՝ չդիմելով ավելորդ ինչ-ինչ օգնության, ինչ-ինչ հենակներով չաղճատելով հայերենի լեզվամտածողությունը, չդիմելով մտածողական «մուրացիկության»:

Իր դարավոր ճանապարհին հայերենը, ժողովրդի ազգային էությանն ու նկարագրին համապատասխան, հղկվել-բյուրեղացել է և ունի համազոր մտածողական համակարգ: Մանավանդ բայական ձևերում շատ ավելի ճկուն ու ճշգրիտ է, քան շատ այլ լեզուներ: Հայերեն մտածողը երբեք չի ասի՝ ...*ուզում եմ կրկնվեմ* (հմմտ. ռուս. не хочу повторяться), քանի որ խոսքը վերաբերում է ասվածին, կրկնվում է ասվածը, ոչ թե ասողը, մարդը ինչպե՞ս կարող է կրկնվել... Նույն ձևով էլ՝ *Ես արդեն մոռացել եմ...*-ից բխում է, որ մարդ ինքն է ոտքից գլուխ բանկ կամ գանձարկղ մտցվում, վճարվում, ներդրվում..., ուրեմն ճիշտը՝ *մոռել եմ, բայց՝ գումարը մոռցվել է:*

Առավել արտառոց է անվերջ հոլովվող հորդորը՝ *բռնվիր...*, երբ պարզապես պետք է բռնել ձեռքի սովորական շարժումով. հո մարդը գողություն չի՞ արել, որ բռնվի: Կոպիտ սխալ է նաև *խնդրվել, վիճվել, տուժվել* ձևերը գործածելը:

Անշուշտ, ավերածությունները բայերով չեն ավարտվում, շարունակում են տակն ու վրա անել և կապերի լեզվամտածողական համակարգը: Լեզվաբանները բազմիցս անդրադարձել են *մոտ, համար, հետ, մասին, մեջ* կապերի սխալ գործածություններին: Բացատրվել է, որ *մոտ* կապը չի արտահայտում առարկայի ներսում եղածը. եթե՝ *փաստն ընթերցողի մոտ կասկած չի հարուցում* (հմմտ. ռուս. у читателя), ապա կարելի է ենթադրել, որ կասկածը հարուցվում է ընթերցողի կողքին կամ թիկունքում՝ նրանից դուրս, ուրեմն ճիշտը *ընթերցողի կասկածը հարուցել*-ն է: Ճիշտ այդպես էլ՝ *մեզանում*-ի փոխարեն ասում և գրում են *մեզ մոտ...*

Հայերեն մտածողը երբեք չի ասի՝ ...*հարցը պարզաբանել առաջին ձեռքից* (հմմտ. ռուս. из первых рук), ...*տարածքների գավթման մեջ մեղադրել* (հմմտ. ռուս. обвинить в чем-то), ...*սցենարի մանրամասների մեջ մտնել* (հմմտ. ռուս. войти в детали), *դրանում համոզված լինել* (հմմտ. ռուս. быть уверенным в чем-то), առողջացման գործընթաց (հմմտ. ռուս. процесс выздоровления) և այլն:

Հայերենը ողողված է նաև անորոշ գնահատականների, մի տեսակ ոչ այս, ոչ այն կիսատ-պոատ, ծանծաղ վերաբերմունք արտահայտող ծամածռություններով: Հաստատականի փոխարեն հանդիպում են բացասականախառն այնպիսի կիրառություններ, որոնց սարքովի լինելը ականջ է ծակում՝ *ոչ քիչ թվով մարդիկ, ոչ քիչ թվով խոշոր սխալներ* (կարծես խոշոր սխալը ոչ քիչով կարելի է փրկել), *ոչ վատ արդյունքներ* (հմմտ. ռուս. неплохие результаты, неправильные оценки) և այլն:

Դժվար չէ նկատել, որ բոլոր այսպիսի դեպքերում կադապարն է իշխում մտածողության վրա, ուրեմն և չի գործում ազգային լեզվամտածողությունը...

Ի դեպ, ռուսերեն *в связи* նախդրով երբեմն այսպես բռնադատվում է և *կապակցությամբ*-ը՝ *Ես շատ նեղված էի զգում այդ կապակցությամբ*, մինչդեռ մենք *նեղվում ենք ինչ-որ բանից, նեղված ենք զգում ինչ-որ բանի պատճառով*, ոչ թե կապակցությամբ:

Անհարկի նմանակելով ռուսերեն *в результате* կապակցությունը՝ թարգմանում են *արդյունքում հետևանքով*-ի, *որպես հետևանք*-ի փոխարեն, և փոխանակ ասելու՝

վթարի կամ հրդեհի հետևանքով, շարունակ կրկնում են *վթարի/բախման/հրդեհի արդյունքում* անհեթեթ արտահայտությունը: Արդյունքը որևէ աշխատանքի հետևանք է. դժբախտ պատահարը չի կարող արդյունք տալ:

Վրիպումներն անպակաս են *հետ* կապից, անխնա չարաշահվում է *համար*-ը, *կողմից* և *կերպով* բառերի չարաշահումները բացարձակապես հեղեղել են լեզուն, մշտապես շահարկվում են կապերը սխալ հոլովածներով՝ *Ձեր և մեր բոլորիս համար...*, *ճիշտը՝ Ձեզ և մեզ համար, Հույսը դրեք մեր վրա*, փխն.՝ *...մեզ վրա* և այլն:

Նույնը վերաբերում է գրաբարյան նախդրավոր կառույցներին, որպիսիք կոչված են հուշել-բորբոքելու մեր լեզվի հնադարյան «արքայական» շքեղությունն ու բույրը: Ուրեմն պետք է գրվեն և արտասանվեն ստույգ՝ հարցնելով գիտակ մարդկանց կամ դիմելով բառարանների օգնությանը:

Եվ վերջապես դառնանք մեր օրերում համաճարակի պես տարածված մի անչափ տհաճ երևույթի: Դա բառավերջի *ն, ս, լ, ը* հնչյունների սղումն է, որը լսողության հետ միասին տառացիորեն սղոցում է նյարդերը: *Առնվազն*-ի փոխարեն ասում են *առնվազ*, մշտապես հոլովվող *բավականին բարձր մակարդակի* փոխարեն՝ *բավականի...*, *մանրամասը* քննարկել *մանրամասն* քննարկել-ի փոխարեն, *ուրեմ*՝ լիահունչ *ուրեմըն*-ի փոխարեն, *ոչ մեկ*՝ փոխանակ *ոչ մեկը*:

Ռնգային հաճելի երանգ հաղորդող *ն*-ն չի արտասանվում նույնիսկ թվականներում, և ստացվում է կիսատ-պոատ՝ *տասամյակ, տասերկու տասութ, տասհինգ...*

Զգիտես՝ ինչ ասես, ինչով բացատրես, բառի վերջին հնչյունները արտաբերելու համար ծախսվող եռանդը խնայելու ցանկությամբ, թե՞ գործ ունենք մեղմ ասած (հմմտ. *ռուս. мягко говорить*) թերի զարգացած լսողության հետ:

Նույն անճարակությամբ ու անգործությամբ հարկադրված ենք ամենուրեք, անգամ մտավորական շրջաններում՝ նյարդեր քայքայելով լսել՝ *ոչինչ չես արե, դուք լավ չեք հասկացե, հարցապնդում ենք արե, ինչ ա դուս գալի, ինձ բավականի դուր չի գալի, ոչ մեկ չլսեց...*

Եվ այսպես հանցագործ լռությամբ հանդուրժում ենք ավերածության հասնող այս ահավոր փնթիությունը, որը սպառնում է հիշողությանը, տրամաբանել-փաստարկելու ունակությանը, առհասարակ մարդկային մտածողությանը, զգայարաններին, որոնք բոլոր ժողովուրդների համար մնում են ազգային; Խեղվում-խաթարվում է հայերենի մտածողության ձուլածո համակարգը, լեզվի երաժշտականությունը, առողջանությունը, շեշտադրման համակարգը, ավերվում է հնչեղության կերպը..., գրողի դիպուկ բնութագրմամբ «...այսպես տնքում է հայերենը Հայաստանում»:

Այսպես նահանջելով՝ աղքատանում է մեր լեզուն՝ մեր հոգևոր հայրենիքի ամենահզոր զենք-զինանոցը: Հոգևոր հայրենիք, որ զուգակշիռն է նյութական, հողեղեն հայրենիք...

ԺԱՆՆԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի վարիչի տեղակալ,
բանասիրական գիտությունների թեկնածու

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԼԵԶՈՒՆ

Անկախությունն ձեռք բերելուց հետո մեր երկրում, ի թիվս հասարակական կյանքի զանազան ոլորտներում կատարվող լուրջ փոփոխությունների, մայրենի լեզվին առնչվող հարցերում նույնպես դրական տեղաշարժեր եղան:

Փակվեցին ռուսական դպրոցները, մի հանգամանք, որ ժամանակին հանրության մեջ խորը շերտավորումների պատճառ էր դարձել: Բուհական համակարգի ընդունելության քննություններում մտցվեց հայոց լեզվից պարտադիր գրավոր քննություն: Սկսեցին հայերեն թարգմանվել փոխառյալ շատ բառեր, տերմիններ, շրջանառության մեջ մտան նոր՝ մաքուր հայեցի բառեր: Ընդունվեց լեզվի մասին օրենքը, ստեղծվեց լեզվի տեսչություն կառույցը, որը, այն ժամանակվա տեսչության պետի խոսքերով, ավելի շատ <<ռուսիկանական>> դեր էր կատարելու: Թվում էր՝ այս ամենին զուգահեռ՝ պետության կողմից շարունակական հոգածություն կլինի մայրենիի նկատմամբ: Սակայն, ավա՛ղ, այդպես չեղավ:

Այսօր հանրության ամենամեծ լսարան ունի հեռուստատեսությունը: Այն դիտում են թե՛ մեր երկրում, թե՛ սփյուռքում: Իսկ հեռուստատեսության ալիքներով մատուցված հայերենը, կոպիտ ասած, ուղղակի խայտառակ պատկեր է ներկայացնում: Մեզ մի այնպիսի աղավաղած հայերեն են հրամցնում, որ երբևէ մենք չենք ունեցել և չենք լսել: Հատկապես քննադատության չի դիմանում սերիալների սցենարների լեզուն: Այնպիսի տպավորություն է, որ տեղից վեր կացողը սցենար է գրում՝ նայած, թե ինչ հզոր կապեր ունի հեռուստատեսությունում: Ումանց համար կարծես այդ դարձել է փող աշխատելու շահեկան միջոց: Մի կողմ թողնենք սերիալների բովանդակային կողմը, երբեմն էլ՝ դերասանների անհաջող խաղը, որոնցից համընդհանուր դժգոհություն կա. մեր նպատակն է այստեղ վեր հանել սերիալների, և ոչ միայն դրանց, լեզվական անթույլատրելի սխալները:

Հանուն արդարության պետք է ասել, որ համեմատաբար մաքուր է հնչում զանազան ալիքների քաղաքական լուրերի լեզուն: Սակայն այս դեպքում էլ պատահում է, որ հաղորդավարը վարժ չի կարողանում կարդալ տեքստը, հազիվ հեզում է կամ էլ, պարզ երևում է, չի հասկանում կարդացածի իմաստը: Իհարկե, կան նաև հաղորդումներ, որոնք հանգիստ խղճով կարող ես դիտել և չնյարդայնանալ, սակայն, ցավոք, դրանք շատ չեն: Հատուկ կուզենայինք առանձնացնել <<Երգ երգոց>> հաղորդաշարը, որը

հեռուստադիտողների շատ մեծ լսարան ունի, և որի սցենարները միշտ շարադրված են լինում շատ բովանդակալից և գեղեցիկ հայերենով: Ընդհանրապես, զարմանալիորեն հաղորդումից հաղորդում, մի հեռուստաալիքից մյուսին արագ են տարածվում սխալ բառերը, սխալ արտահայտությունները: Այս առումով բացառություն չէ ալիքներից և ոչ մեկը, բացառություն չեն նույնիսկ ԱՄՆ-ից տրվող հայերեն հեռարձակումները, այնտեղ նկարահանված հայերեն սերիալները:

Որոշ օրինակներ բերենք ամենաարտառոց սխալներից: Այսպես. անհասկանալի է, թե ինչու է լծորդության որոշ բայեր բանավոր խոսքում խոնարհվում են *ա* լծորդության բայերի նման: Այս <<վարակը>> վերաբերում է և՛ սերիալների լեզվին, և՛ շատ հաղորդումներ վարողների խոսքին: Այսպես. <<Դե, *ծիծաղա, ծիծաղա* >> (սերիալից): Կամ՝ *խոսա, խոսացել եմ*. <<Պայմանավորվե՞լ եք՝ ինչ եք *խոսալու*>>. <<Դրա մասին *խոսացվել է*>> (տարբեր հաղորդավարների խոսքերից). <<*Զբաղացրեք* ձեր տեղը>> (հաղորդավար): <<Զգիտեմ՝ *վախացնում եք*, թե՛ ինչ>>. <<*Վախացրիք*, ձենդ *ցածրացրա, վերջացրա*>> (սերիալից) և այլն:

Համատարած կրկնվող սխալներից են՝ *փորձվել, մուծվել, խաչակնքվել, տուժվել, զանգվել* և այլն. <<Դե լավ, *կզանգվեն*>>. <<Ես չեմ ուզում *կրկնվել*>>. <<Էն օրվանից, որ դուք Գայանեի հետ *վիճվեցիք*...>> <<Ես *մուծվող եմ*>> (սերիալներից): Ուղղակի անհասկանալի է, թե ի՞նչ դեր ունի այս բայերի մեջ կրավորական սեռը ցույց տվող *-վ-* ածանցը : Հարց է առաջանում՝ իսկ ի՞նչ են նշանակում *փորձել, մուծել, խաչակնքել, տուժել, վիճել, զանգել* (իրար, միմյանց), *կրկնել* (խոսքը) բայերը: Նույնքան անընդունելի են շատ գործածվող *կապնվել, խաբնվել* ձևերը: Չարաշահվում է փոխարենը բառի գործածությունը: Այն փոխարինում է թե՛ *փոխանակ-*ին, թե՛ դրա *փոխարեն* բառակապակցությանը: Օրինակ. <<*Փոխարենը* (այսինքն՝ փոխանակ) դու գնաս, ասում ես...>> (սերիալից). <<*Փոխարենը* (փոխանակ) ավելի լավանաս, կարգավորվես, ավելի՞ ես գժվում>> (սերիալից). <<Մի՛ գնա, *փոխարենը* (դրա փոխարեն) մնա տանը, մի բանով զբաղվի>> (սերիալից):

Հաջորդ տարածված սխալը. <<*Ոչ/չ մեկ* չգիտի>>. <<*Ոչ մեկ չի* տեսել>>. <<*Ոչ մեկ չի կանա* ասի>>. <<*Ոչ մեկ* լուրջ չի ընդունել>> (սերիալներից): Եվ այսպես՝ անընդհատ, նաև տարբեր հաղորդումներում ենք նույն արտահայտությունը լսում: Հայերենն ունի ոչ մեկը անձ ցույց տվող բաղադրյալ ժխտական դերանունը: Իսկ *ոչ մեկ* բառակապակցությունը կարելի է գործածել, օրինակ, այսպիսի նախադասության մեջ. *Ոչ մեկ անգամ է այդ մասին նա ասել* (այսինքն՝ մեկ անգամից ավելի): Ինչպես տեսնում ենք, առանց ը հնչյունի այս բառակապակցությունը որևէ անձի չի վերաբերում, այսինքն՝ դերանվան նշանակություն չունի, անիմաստ է հնչում :

Բառեր կան, որոնք եթերից (ինչու միայն եթերից) ճիշտ հակառակ նշանակությամբ են գործածվում: *Մեղանչել*-ը լսում ենք *մեղքը քավել, զոջալ* կամ *մեղա գալ* իմաստով, այնինչ ճիշտ հակառակն է, այն պարզապես նշանակում է <<մեղք

գործել>> կամ՝ <<սխալ գործել>>: Չգիտես ինչու, հաճախ խառնում են *ժառանգել*-ը *կտակել* բառի կամ *ժառանգություն թողնել* արտահայտության հետ: Օրինակ. <<Ամուսինս (մահացածի մասին է խոսքը - Ժ.Մ.) ինձ ոսկի էր *ժառանգել*>> (սերիալից): Մահացածը, թեկուզ և մինչ մահանալը, չէր կարող որևէ բան ժառանգել, թերևս՝ ոսկի էր *ժառանգություն թողել* կամ էլ *կտակել* էր: Այսօրինակ արտահայտությունները շատ-շատ են հատկապես սերիալների սցենարներում: Եվ, ցավոք, ամենաշատն էլ ընդօրինակելի է դարձել սերիալների լեզուն:

Հաճախ *տեսագրել*, *տեսագրություն* բառերի փոխարեն գործածում են՝ *ձայնագրել*, *ձայնագրություն* և կամ՝ հակառակը: Այսպես. <<Բա որ հանկարծ խոսակցությունը *տեսագրվե՞ր*>> (սերիալից): <<Ես նորից կնայեմ *ձայնագրությունը*>> (սերիալից): Ավելի սովորական է դարձել այն դեպքը, երբ *տեսագրություն* - ը իր տեղը <<զիջում է>> *ձայնագրության-ը*: Հարց է առաջանում՝ այս խառնաշփոթը որտեղի՞ց է գալիս, արդյո՞ք որևէ օտար լեզվի ազդեցություն է...

Անընդհատ ականջալուր ենք լինում անհարկի ռուսաբանությունների՝ ռուսերենից բառացի, շատ դեպքերում՝ նույնիսկ զավեշտալի թարգմանությունների: Այսպես. <<Դու էլ էիր ուզո՞ւմ, որ քեզ մատանի *հազցնեին*>> (հաղորդավարի խոսքից). <<Էս գալուստիկո փոխի, հա՞, էս մի տարի ա՛ եղ ես *հազնում*>>. <<Ժամացույցս *հազել են*>> (սերիալներից): Երևի թե հարկ կա հիշեցնելու, որ *ժամացույցը*, *փողկապը* *կայուն են*, *զիսարկը* կամ *մատանին դնում են*: *Հազնում են* շորը, կոշիկը, վերարկուն:

Մյուս հաճախ կիրառվող, ոչինչ չասող, ռուսերենից պատճենած արտահայտությունը՝ *մեծ հաշվով...* (но *большомы сумы*): Իսկ ինչու՞ չասել՝ *ընդհանուր առմամբ*: Ռուսական կրթություն ունեցող հաղորդավարի խոսքից մեկ այլ օրինակ. *ով* եկան, *ով* գնացին...(ռուսերենի *кто* -ն հոգնակի թիվ չունի): Լավ, մի՞թե այս հաղորդավարը ովքեր բառը երբևէ լսած չէ:

Ստորև բերվող օրինակներում անճիշտ արտահայտությունները բավականին հին <<կենսագրություն>> ունեն: Դրանք խորհրդային թվերին անընդհատ քննադատվում էին: Բայց, ինչպես համոզվում ենք, անօգուտ: Այսպես. <<*Ինչու՞մն է խնդիրը*, *ինչու՞մն է բանը*>> (սերիալից). <<Բանը (կամ՝ խնդիրը) *նրանումն է*, որ...>>. <<Ես գնում եմ *իմ մոտ*>>. <<*Իմ մոտ* կասկած առաջացավ>> (սերիալներից). <<Էս լողավազանի պատմությունից հետո *մոտս* հարցերը շատացան>> (սերիալից). <<Դու *քո մո՞տ ես* >> (սերիալ): Սովորական են դարձել խոսքը *գնում ա...* խոսքը *գնալու ա ...* խոսքը *գնացել ա* և այլ արտահայտություններ: Հավելենք, որ նույն սխալները կրկնում են նաև հաղորդավարները՝ շատ քիչ բացառությամբ:

Այլ կարգի ռուսաբանություններ. մոդայիկ է դարձել *դիվանագիտական խողովակներով* բառակապակցությունը: Այստեղ *канал* բառն է թարգմանվել: Դեռևս չունենք դեպք, գոնե արևելահայերենում, որ *խողովակ* բառը գործածվի փոխաբերական իմաստով: Մի թե քաղաքականությունից խոսող մարդիկ լսած չեն երբևէ

դիվանագիտական ճանապարհ(ներ)ով, դիվանագիտական ուղի(ներ)ով
բառակապակցությունները:

Սերիալներում՝ զինվորականների կամ ոստիկանների զեկույցներում, լսում ենք՝
Ոչ մի կերպ - ռուսերեն՝ Ну как нем - ի բառացի թարգմանությունը: Հայերեն սա
անիմաստ է՝ հատկապես եթե անկախ էգործածվում: Թերևս կարելի է ասել՝ ոչ, կամ՝
քոլորովին: <<Ես սիրում եմ *համով* ուտել>>(*вкусно поесть*): Համով **բան** կարելի է ուտել,
ոչ թե՝ *համով* ուտել: <<Ես իմ *ափսեի մեջ չեմ*>> (սերիալից). <<Ականջներից *լապշա*
կախեցին>> (սերիալից).<<Սրա մոտ *բոլորը տանը չեն*>> (*У нее не все дома*) (սերիալից):
Սա ռուսերենից անհեթեթ թարգմանության <<զլուխգործոց>> կարելի է համարել: Այս
արտահայտությունը սերիալի հերոսուհիներից մեկն է ասում՝ բանտի խցում, և խոսքը
վերաբերում է գլխավոր հերոսուհուն: Թերևս պետք է ասեր՝ *սրա ծայր* (կամ՝
տախտակը) *պակաս է*:

Հիշեցնենք, որ այսօր հայկական հեռուստատեսությունը դիտում են նաև
աշխարհի տարբեր երկրներում բնակվող հայերը: Եվ նրանք պարտավոր չեն ծանոթ
լինել ռուսերեն դարձվածքներին, պատկերավոր արտահայտություններին: Նույնիսկ
Հայաստանում շատերը ռուսերեն չգիտեն կամ վատ գիտեն: Բացի այդ, դարձվածքների
բառացի թարգմանությունը միայն կարող է ծիծաղելի իրավիճակներ ստեղծել: Ի՞նչ հարկ
կա հայերենի նման գեղեցիկ, հարուստ լեզուն կաղապարել ռուսերենով: Ամբողջ
դժբախտությունն այն է, որ հաղորդավարների, բանից պարզվում է՝ նաև
սցենարիստների, 80-90 տոկոսը ռուսական կրթություն ունի: Եվ որքան էլ այդ մարդիկ
հայտարարեն, թե հոյակապ տիրապետում են հայերենին, այնուամենայնիվ, չեն
կարողանում ձերբազատվել ռուսերենի անբարենպաստ ազդեցությունից:

Ինչ խոսք, ցանկացած լեզու, այդ թվում՝ նաև հայերենը, տարիների, դարերի
ընթացքում փոփոխության է ենթարկվում և՛ բառապաշարով, և՛ քերականորեն: Բայց
դրանք չպետք է լինեն տվյալ լեզվի արտահայտչական ձևերի նեղացման հաշվին:

Սերիալների սցենարները հաճախ գրում են մարդիկ, որոնց հայերենի
իմացությունը, եթե նույնիսկ հայկական կրթություն ունենան, ուղղակի ողորմելի
մակարդակի վրա է գտնվում:

Նույն դիտողությունները կարելի է ասել գովազդների լեզվի մասին: Օրինակ.
<<Դաշտերում, դաշտերում, գիտե՞ք՝ *ու* է արածում, Կովիկները...>>.<<Խանութները լիքն
են *անորակ* մազերի խնամքի միջոցներով>>և այլն: Դեռ մի կողմ թողնենք այն փաստը,
որ գովազդները կարդացվում են ոչ հայեցի, կեղծ առոգանությամբ ու կեղծ հնչերանգով:

Անթույլատրելի է *ա* օժանդակ բայով հեռուստատեսությամբ հանդես գալը. *ասում*
ա, *գնում ա*, *գալիս ա*: Եթե դա ինչ-որ չափով արդարացված է կինոնկարների հերոսների
խոսքում, **անհանդուրժելի է** հաղորդավարների կամ հաղորդմանը մասնակից այլ
անձանց լեզվի մեջ:

Շարունակենք սխալների <<շքերթ>>: *Ինքը, ոմանք* դերանունները վերաբերում են միայն անձ ցույց տվող գոյականներին: Այնինչ թե՛ հաղորդավարները, թե՛ սերիալների հերոսները, թե՛ զանազան հաղորդումների մասնակից հյուրերը հաճախ դրանք վերագրում են կենդանիներին, անշունչ առարկաներին, նույնիսկ՝ երևույթներին:

Շնչավոր գոյականների կողքին են սովորաբար դնում *հետ* կապը (չնչին բացառություններ կարող են լինել): Այնինչ, տեղի-անտեղի այն գործածում են: Այսպես. <<Գեներալները ծանոթացել են ուսումնական գործընթացների *հետ*>> (<<Հայլուր>>). <<Ինձ պայմանների *հետ* կծանոթացնե՞ք>>. <<Աճել է գրիպի *հետ* կապված բողբոջների թիվը>> (<<Ժամը>> լրատվական):

Չափազանց շատ և որպես մակբայ է գործածվում *միանշանակ* բառը: Օրինակ՝ <<Մասնագետները *միանշանակ* պիտի գնահատական տան>>. <<Ես *միանշանակ* համաձայն եմ>> (հեռուստատեսային հաղորդումներից):

Է. Աղայանի բացատրական բառարանում տվյալ բառի դիմաց կարդում ենք՝ *մեկ նշանակություն* ունեցող: Այսինքն՝ այն ածական է և չի կարող դրվել գործողություն ցույց տվող որևէ բառի կողքին: Խորհուրդ ենք տալիս բառապաշարից ընդհանրապես հանել *միանշանակ* -ը: Ունենք հոմանիշների մի ամբողջ շարք. *անշուշտ, անկասկած, աներկբա, իհարկե, ինչ խոսք* և այլն:

Շատ ենք լսում *ի օգուտ, ի ուրախություն* բառակապակցությունները, փոխանակ ասելու՝ *hoգուտ, հուրախություն*, այնպես, ինչպես՝ *հընթացս, հանիրավի, հանպատրաստի* և այլն:

Մեկ այլ տարօրինակ փաստ. ամերիկյան ֆիլմերից մեր սերիալներին անցած <<նորամուծություն>> պետք է համարել ոչ միայն անգլերեն խոսքին հատուկ առոգանությունը, հնչյունների անգլիական արտասանությունը, այլև մեր կենցաղին անհարիր արտահայտությունները: Օրինակ՝ հայկական սերիալում հերոսը վայր է ընկնում (կամ պարզապես իրեն վատ է զգում): Բնականաբար, մեծ ցավ պետք է զգա, մի ուրիշ հերոս մոտենում, հարցնում է՝ *ամեն ինչ կարգին ա՞, կամ՝ լա՞վ ես:*

Սերիալից սերիալ հազար անգամ կրկնվող, չարչրկված արտահայտություններ են՝ *հասկանում ես, հասկացա՞նք իրար, կասե՞ս, լու՞րջ:*

Այսպիսով՝ վերոշարադրյալը փաստում է, անշուշտ, որ սցենար գրողները, շատ դեպքերում նաև հաղորդավարները, ունեն ողորմելի բառապաշար, վատ են տիրապետում մեր մայրենիին:

Կադրից դուրս խոսող հեռուստալրագրողների տեքստերն էլ չեն փայլում գրագիտությամբ: Օրինակներ բերենք. <<Դաշտերում *արածող գյուղացիների* անասունները...>>. <<Շողովրդավարական դերասանուհի Կարդուհի Կարդերեսյանը...>>: Հարկ է նշել, որ անկախությունից հետո շատ այլ օտար բառերի շարքում թարգմանվեց նաև *դեմոկրատական* բառը՝ *ժողովրդավարական*: Պարզվում է՝

այս մարդը դրանից էլ տեղյակ չէ: Տարակուսում ես՝ մի՞թե լրագրողները մինչև եթեր դուրս գալը չեն կարդում, չեն մշակում իրենց գրած տեքստերը...

Մի շաբաթ առաջ <<ATV>>-ով ուղիղ հեռարձակվում էր տիեզերական մարմիններին նվիրված մի հաղորդում: 30 – 40 րոպեի ընթացքում հաղորդավարը՝ կադրից դուրս, բավականին զվարճացրեց մեզ իր <<փայլուն>> մտքերով: Մի քանի անգամ կրկնեց. <<ATV>>-ն միակ ալիքն է, ով այս պահին ուղիղ հեռարձակում է իրականացնում>>: Իսկ երկնաքարի մասին ասված նույն հաղորդավարի խոսքը պարզապես որևէ տրամաբանության չի ենթարկվում. <<Սա վտանգ չի ներկայացնում երկրի և *երկրագնդում* գտնվող որևէ մոլորակի համար>>... Ի՞նչ է եղել որ, նա թող *երկրագունդ* ասի, իսկ մենք *տիեզերք* պետք է հասկանանք:

Խառնում են՝ *միննույն է և միննույնն է, հասկացություն և հասկացողություն* տերմինները: *Առաջիկա*-ի փոխարեն գործածում են *մոտակա*-ն, որը ոչ թե ժամանակի, այլ տեղանքի, տեղի իմաստ ունի հայերենում: Սա էլ է ռուսերենի ազդեցություն, որտեղ բոլոր դեպքերի համար կա միայն *близость* միակ բառը:

Հաճախ է պատահում, որ անհարկի օտար բառեր են գործածվում: Այսպես. <<Դուք էնքան էլ *աղեքվատ* չեք>>(սերիալ): Նախ՝ այս *աղեքվատ*-ը մարդուն հնարավոր չէ վերագրել, երկրորդ՝ ունենք հայերեն գեղեցիկ *համարժեք* կամ *համահունչ* բառերը:

Գրեթե ամեն օր օտար բառերի մի ամբողջ <<բույլ>> է հնչում հեռուստատեսային տարբեր ալիքներով. *դրայվ, էքսքլուզիվ, հիթ, օնլայն, վիրտուալ, վիզուել, գլամուր, մեսիջ, լեգիտիմ* և այլն, և այլն: Բոլորովին էլ պարտավոր չենք մենք՝ հայաստանցիներս, իմանալ այս բառերի իմաստները: Հայերենը թարգմանելու մեծ հնարավորություններ ունի, ինչո՞ւ չօգտվել դրանցից, հատկապես որ ունենք հիշյալ բառերի հայերեն տարբերակները:

Ընդհանրապես, մի կողմից՝ ականջալուր ենք լինում անհարկի օտարաբանությունների, մի ուրիշ դեպքում էլ կեղծ թարգմանություններով, պարզ չէ՝ ում կողմից <<կյանքի ուղեգիր>> ստացած, հայերեն հորջորջված մի շարք բառեր են երևան գալիս: Լեզվական խնդիրները պետք է լուծեն միայն լեզվաբանները: Ժամանակին Տերմինաբանական կոմիտեն էր այդ խնդիրներով զբաղվում, որի որոշումները պարտադիր էին բոլորի համար, և որը, դժբախտաբար, վաղուց լուծարվել է:

Հոետորական հարցեր ենք ուզում բարձրացնել. մի՞թե հեռուստատեսային ալիքների տարբեր բաժիններ չունեն իրենց գրագետ խմբագիրները: Իսկ հաղորդավարները կամ սերիալներում խաղացող դերասանները արդյո՞ք հայերենի իմացության տարրական գիտելիքներ չունեն, որ իրենք ուղղորդեն սցենարիստներին: Պարզվում է՝ չունեն, այլապես այս ծիծաղելի, երբեմն էլ ողբալի վիճակը չէր լինի: Հատկապես երիտասարդները չեն կարդում գրականություն, չունեն մտավոր զարգացման քիչ թե շատ պատշաճ մակարդակ: Այդ է պատճառը, որ նման դեպքերում հեշտ են վերցնում ուրիշի բառերը, թեկուզ և՛ սխալ, որովհետև իրենց սեփական

բառապաշարը շատ խեղճ վիճակում է գտնվում: Այստեղ հիշենք ծիծաղաշարժ ևս մի արտահայտություն, որ արտաբերեց առաջնակարգ (պրիմադոննա) համարվող երիտասարդ դերասանուհին իր դերը խաղալիս՝ դարձյալ սերիալում. <<Ռու 360 աստիճանով շուռ ես եկել>>: Այսինքն՝ միանգամայն փոխվել ես: Մի՞թե շատ խելք է պետք՝ պատկերացնելու համար, որ մարդը, 360 աստիճան<<շուռ գալով>>, նույն կետին է դարձյալ վերադառնում:

Համարյա նույն՝ ոչ մխիթարական վիճակն է տիրում նաև լրատվական մյուս աղբյուրներում՝ ռադիոհաղորդումներ, լրագրեր, ամսագրեր և այլն:

Կարծում ենք՝ լեզվի անադարտության խնդրով պետք է բոլորս մտահոգվենք՝ ոչ միայն լեզվաբանները, այլ նաև հեռուստաալիքների տնօրենները, լրատվական բոլոր միջոցների խմբագիրները, հանրությունն ընդհանրապես:

Հնարավոր չէ՞, արդյոք, հայոց լեզվի մասնագետ խորհրդականներ ունենալ հեռուստաալիքներում: Ինչու՞ լեզվական հարցերով երբևէ ոչ ոք չի դիմում մեզ՝ լեզվաբաններին: Աստված մի արասցե, ասօրվա կորցրածը կարող է հետո անդառնալի հետևանքներ ունենալ: Եվ չմոռանանք, պետության հիմքերից մեկը ազգային լեզուն է:

ԱՄԱԼՅԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի արդի հայերենի բաժնի ավագ գիտաշխատող,
բանասիրական գիտությունների թեկնածու

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՉ ԿԱՆՈՆԱԿԱՆ

ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ ՁԼՄ-ՆԵՐԻ ԼԵԶՎՈՒՄ

Գլխավոր անդամների կապակցությունը նախադասության (մասնավորապես երկկազմ) կառուցվածքային հիմքն է և այդ պատճառով միշտ գրավել է շարահյուսագետների ուշադրությունը: Հատկապես շատ է գրվել այդ անդամների համաձայնության մասին: Համաձայնությունը նախադասության անդամների կապակցման եղանակ է, այն դրսևորվում է նրանով, որ իրար հետ կապված անդամներն ստանում են միևնույն քերականական կարգը, ուրեմն և համապատասխան քերականական ձևավորումը: Ժամանակակից հայերենում կապակցման այս եղանակը գրաբարի համեմատությամբ զգալի չափով սահմանափակել է իր ոլորտը, և ամենաբնորոշը ենթակայի և ստորոգյալի համաձայնությունն է: «Ստորոգյալը բայական դիմայնությամբ (դիմավոր բայով) ձևավորվող անդամ է, որով հատկանիշը վերագրվում է առարկային»¹: Հասկանալի է, որ այդ կապակցության բաղադրիչները՝ ենթական և ստորոգյալը պետք է համապատասխանեն միմյանց. համաձայնությունը կատարվի դեմքով և թվով:

Սույն հոդվածում ի մի են բերված ենթակայի և ստորոգյալի հատկապես թվային համաձայնության վերաբերյալ դիտարկված ոչ կանոնական դրսևորումները ՁԼՄ-ների լեզվում, և արված են ճշգրտումներ: Շարահյուսական այս հարցը քննված է ոչ միայն նկարագրական առումով, այլև փորձեր են կատարված դրանք պատճառաբանելու ուղղությամբ: Այս կապակցությամբ ցույց է տրված առանձին բառախմբերի իմաստային դերը նրանց համաձայնական յուրահատկությունների դրսևորման հարցում:

Ենթակայի և ստորոգյալի թվային համաձայնության ամենաընդհանուր և հայտնի օրինաչափությունն այն է, որ եզակի ենթակայի հետ սովորաբար դրվում է եզակի ստորոգյալ, հոգնակի ենթակայի հետ՝ հոգնակի ստորոգյալ: Սակայն ՁԼՄ-ների լեզվում հանդիպում ենք այս օրինաչափությունից բազմաթիվ շեղումների: Այսպես՝

¹ Ս.Աբրահամյան, Ժամանակակից գրական հայերեն, Ե., 1981, էջ 283:

«Դաջվածքները այսօր երիտասարդական շրջանում լայն տարածում ունի» (փխ.՝ ունեն) /բժշկի խոսքից/. «Նման միջոցառումները պետք է հաճախ լինի» (փխ.՝ լինեն) /ֆիլմ/. «Առաջ ինչպես էր (փխ.՝ էին) գրքերը վաճառվում» (լուրեր). «Մոտենում է (փխ.՝ են) շատ արագ տոնական օրերը» (լուրեր). «Էսօրվա (փխ.՝ այսօրվա) ելույթները ինձ շատ դուր եկավ» (փխ.՝ դուր եկան) /«Հեռուստառեստորան»/. «Հարգանքը կան» (փխ.՝ կա) /լուրեր/. «Կան դեպքեր, որտեղ օրենքը *չեն գործում*» (փխ.՝ չի գործում) /պատգամավորության թեկնածու/. «Թե ինչ տարածքներ է *ընդգրկում*» (փխ.՝ են ընդգրկում) հրդեհները Լոռվա մարզում» (լուրեր). «Ամեն տեղ մատնահետքեր կա» (փխ.՝ կան) /կրկ. Ֆիլմ/. «Այս անգամ *ստել էին*» (փխ.՝ ստել էր) մի հանցագործ» (կրկ. Ֆիլմ.). «Սակայն եղել են *դեպք*» (փխ.՝ դեպքեր), երբ թունավորվել են ընտանիքի բոլոր անդամները» (բժշկի խոսքից). «Ուսուցիչները հիմնականում *բերվեց*» (փխ.՝ բերվեցին) Երևանից» (դպրոցի տնօրենի խոսքից). «*Մա*» (փխ.՝ սրանք) ակնհայտ փաստեր են» (կինոռեժիսոր). «*Մա*» (փխ.՝ սրանք) այն աշխատանքներն են» (հաղորդավար). «*Մա*» (փխ.՝ սրանք) մանրէներ են» (գովազդային տեքստից):

Հայտնի է՝ բազմակի ենթակաների հետ սովորաբար դրվում է հոգնակի ստորոգյալ: Այսպես չէ հետևյալ նախադասությունում. «Անթալիայում ծանրամարտի լավագույն եռյակ *չի մտել*» (փխ.՝ չեն մտել) Սամվել Գրիգորյանը և Արթուր...» (սպորտային լուրեր):

Ժողովրդախոսակցական ոճի դրսևորում պետք է համարել բազմակի ենթակաների հետ եզակի ստորոգյալի գործածությունը: Երբ բազմակի ենթակաները կապված են *ոչ* շաղակապով, ունենում են եզակի ստորոգյալ: Այսպես՝ «Ես նոր կյանք եմ սկսել, որտեղ ոչ դու, ոչ էլ Ռաֆոն տեղ *չունեն*» (փխ.՝ չունի) /ֆիլմ/:

Մ. Աբեղյանը գրում է, որ *ո՞վ* հարցական դերանվան հոգնակի ձևը քիչ է գործածվում, սովորաբար եզակի ձևով է դրվում իբրև ստորոգյալ: Բերում է հետևյալ օրինակը. «*Ո՞վ են* այն տղան ու աղջիկը»²: Անշուշտ, Մ. Աբեղյանն այսպիսի հարցում չէր կարող սխալվել, պարզապես այն ժամանակ երևույթն այդպես էր, ինչպես նշում է նա: Այս և այլ կարգի երևույթները ցույց են տալիս, որ գրական հայերենի օրինաչափությունները (տվյալ դեպքում ենթակայի և ստորոգյալի համաձայնության հարցում) գնալով ավելի են կայունանում և ստանում համապարփակ բնույթ: Թեև ԶԼՄ-ների լեզվում հանդիպում ենք՝ «Բոլոր նրանց, *ով*» (փխ.՝ ովքեր) ունեն» (հաղորդավար). «Գնամ տեսնեմ, *ո՞վ են*» (փխ.՝ ովքե՞ր են):

– Գալիս են...

– *Ովքերո՞վ են*» (փխ.՝ ովքե՞ր են) գալիս (ֆիլմ):

² Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հ. Զ, Ե., 1974, էջ 416:

«Ես շատ լավ եմ նկատում, թե *ովքերով* (փխ.՝ ովքեր են) են նստած սեղանի շուրջ» (Ֆիլմ). «Նինա, *ովքերո՞վ եք* (փխ.՝ ո՞ւմ հետ ես կամ՝ ովքե՞ր են եկել) /Ֆիլմ/:

Ժողովրդախոսակցական ոճի դրսևորում պետք է համարել *ովքեր*-ի փոխարեն *ովքերով*-ի գործածությունը:

Նախընտրելի է *ինքը* դերանվան հոգնակի թվի *իրենք* կազմությունը: Այսպես՝ «Հեռուստաընկերություններն *ինքներն* (փխ.՝ իրենք) էին իրենց մարտավարությունն ընտրում» («Կենդանի մատյան»):

Եթե ստորոգելին արտահայտված չէ գոյականով կամ գոյականաբար գործածված բառով, ապա ենթակայի հետ համաձայնությունը իրացվում է դիմավոր բայի միջոցով, որը անտեսված է հետևյալ օրինակներում. «Ձեր գունային ընկալումը զարմանալիորեն *հանդարտ են*» (փխ.՝ հանդարտ է) /հաղորդավար/. «Այս գծագրերը շատ *կարևոր է* (փխ.՝ կարևոր են) ինձ համար» (կրկ. Ֆիլմ.):

Ինչպես երևում է օրինակներից, եզակի և հոգնակի ենթակաների հետ ածական ստորոգելին չի համաձայնել, մնացել է անփոփոխ, երկու դեպքում էլ համաձայնությունը պետք է իրացվեր դիմավոր բայի միջոցով (որը չի կատարվել), քանի որ ածականին բնորոշ չէ թվի քերականական կարգը:

Օտարաբանության դրսևորում պետք է համարել ենթակայի հետ *դա* դերանվան գործածությունը: Այսպես՝ «Երևանը *դա* Հայաստանը չի (չէ)» (լուրեր). «Երկրորդ խնդիրը *դա* ուսման վարձն է» (լուրեր). «Բացասականը *դա* այն է, որ վերածվեց կուսակցամոլության» (լուրեր). «Ստամոքսի խոցը *դա* լորձաթաղանթի բորբոքումն է» (բժշկի խոսքից). «Ստամոքսի խոցը *դա* առաջանում է» (բժշկի խոսքից). «Սահմանադրությունը *դա* համաձայնագիր է կամ հասարակական դաշինք: Սահմանադրությունը *դա* ապրող իրականությունն է» (հաղորդում սահմանադրության վերաբերյալ). «Խնդիրը *դա* մտածելակերպի փոփոխությունն է» (իրավաբանի խոսքից):

Ենթակայի և ստորոգյալի համաձայնության հարցում հաճախ մեծ դեր է կատարում կառույցի ձևային կողմը: Եթե եզակի ենթակայի գործողությանը մասնակից է նաև մեկ ուրիշը, և դա արտահայտված է սեռական հոլովաձևի և հետ կապի միջոցով, ստորոգյալը դրվում է եզակի թվով: Թեև *հետ* կապով կապվող բառը մասնակից է գործողությանը, բայց չի ազդում ենթակայի և ստորոգյալի համաձայնության վրա, քանի որ այդ առարկայի անունը չի դրվում ենթակայի պաշտոնով³: Մինչդեռ ՁԼՄ-ների լեզվում այդպես չէ, օրինակ՝ «Հենց երեկ խանութներից մեկում *կնոջս հետ* առևտուր էինք (փխ.՝ էի) անում» (նախագահի թեկնածու). «Ես *ընկերուհուս հետ մոտեցանք* (փխ.՝ մոտեցա) նրան» (Ֆիլմ). «Ես *էրեխու* (երեխայի) *հետ մտանք* (փխ.՝ մտա) շենքի մուտքը» (Ֆիլմ). «Տատն էլ *էրեխու* (երեխայի) հետ խաղում են» (փխ.՝ խաղում է) /Ֆիլմ/:

³ Տե՛ս Մ.Պալասանյան, Քերականություն մայրենի լեզվի, մաս Ա, Բ, Գ, Թիֆլիս, 1894, էջ 192:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում հավաքական գոյականով արտահայտված ենթական: Այն, որպես կանոն, ունի եզակի թվով ստորոգյալ: Այսինքն՝ ձևային համաձայնությունը վերածվել է հստակ օրինաչափության: Մ.Աբեղյանն այս երևույթն անվանում է բակառություն: Այդպիսիք են՝ *ժողովուրդ, մտավորականություն, ընտանիք* և այլն: Մինչդեռ ՋԼՄ-ների լեզվում հանդիպում ենք գրական լեզվի կանոնից շեղումների: Այսպես՝ «Ժողովուրդը *կընտրեն* (փխ.՝ կընտրի) այդ երգերից մեկը» (երգչի խոսքից). «Դրա համար էլ կարտոշկան (կարտոֆիլը) ժողովուրդը քիչ *ցանեցին*» (փխ.՝ ցանեց) /ռադիոունկնդիր/. «Հետևաբար ժողովուրդը պետք է *գիտակցեն*» (փխ.՝ գիտակցի) /ոստիկան/. «Մի տեսակը հանգիստ բնավորություն ունեն» (փխ.՝ ունի) /կրկ. Ֆիլմ/. «Ընկերությունը *բանակցում են* (փխ.՝ բանակցում է) նաև այլ հարցերով» (լուրեր): «Յուրմալայում շատ լավ *ձկնեղեն կային*» (փխ.՝ կար) /«Չէին սպասում»/. «Այդ ժամանակ նրա ընտանիքը տանն *են եղել*» (փխ.՝ է եղել) /լուրեր/:

Սակայն հավաքական իմաստ ունեցող դերանունների հետ ստորոգյալը սովորաբար դրվում է հոգնակի թվով: Այսպես՝ «Բոլորը թարմ *վիճակում է*» (փխ.՝ վիճակում են) /լուրեր/:

Հավաքական գոյականով արտահայտված եզակի ենթակայի հետ հոգնակի ստորոգյալի գործածությունը բարբառայնության արտահայտություն է և գրական հայերենի արդի փուլում կանոնական չէ:

ՋԼՄ-ներին հարիր չէ գրական լեզվի նորմերի խախտումը: Նրանք պարտավոր են ավելի ուշադիր լինել և նման կարգի սխալներ չսփռել, այլ նպաստել մայրենիի անաղարտությանը և նրա նորմերի պահպանմանն ու բնականոն զարգացմանը:

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(«Արդի լեզվաքաղաքականության խնդիրներ» գիտաժողովի մասնակիցների կողմից)
21.02.2013 թ.

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրությունը, որը հայերենը հռչակում է Հայաստանի Հանրապետության պետական լեզու,

և ՀՀ «Լեզվի մասին» օրենքը, որը հաստատագրում է, որ Հայաստանի Հանրապետության պաշտոնական լեզուն գրական հայերենն է, ու սահմանում է լեզվաքաղաքականության հիմնական դրույթները, լեզվավիճակն ու լեզվահարաբերությունները կարգավորող նորմերը,

նկատի ունենալով ՀՀ «Կրթության մասին», «Մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին», «Գովազդի մասին» և այլ օրենքների ու իրավական ակտերի՝ պետական լեզվի՝ հայերենի գործառությունը կարգավորող հոդվածները,

հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականության պետական ծրագրում» և «Հայագիտության զարգացման հայեցակարգում» առաջադրված խնդիրներն ու ռազմավարությունը,

կարևորելով ինքնիշխան պետականության ամրապնդման և երկրի ազգային անվտանգության ապահովման գործում պետական լեզվի՝ հայերենի հսկայական դերը,

ելնելով ներկայումս աշխարհում տեղի ունեցող տարաբնույթ զարգացումներից և առաջ եկող մարտահրավերներից՝

«Արդի լեզվաքաղաքականության խնդիրներ» գիտաժողովի մասնակիցներս,

փաստելով, որ հայերենը ոչ միայն հայության հաղորդակցման միջոցն է ժողովրդի գոյության բոլոր փուլերում ու վայրերում, այլ նաև ազգային մնայուն արժեք է, գիտական ու մշակութային արժեքների ստեղծման, պահպանման ու սերնդեսերունդ փոխանցման կարևորագույն միջոց, հայեցի մտածողություն ու հոգեկերտվածք ձևավորող, ազգի միասնականությունն ապահովող ու հայապահպան հզոր գործոն,

արձանագրում ենք, որ մայրենի լեզուն՝ իր գրական երկու ճյուղերով, ինչպես նաև խոսակցական ու բարբառային դրսևորումներով, մշտապես պետական ու հասարակական հոգածության, արդյունավետ ու համակարգված լեզվաքաղաքականության կարիք ունի և ենթակա է գիտական շարունակական

հետազոտության ու կանոնարկման, ուստի առկա հրատապ խնդիրները լուծելու նպատակով **դիմում ենք**

1. ՀՀ կառավարությանը՝ առաջարկելով վերականգնել Հայերենի բարձրագույն խորհուրդը՝ իբրև կառավարությանն առընթեր կառույց,

2. ՀՀ ԿԳ նախարարությանը՝ առաջարկելով

ա) մայրենիի ուսուցման դպրոցական, բուհական ծրագրերի և դասագրքերի շարունակական բարեփոխման գործընթացում առանձնապես կարևորել սովորողների մեջ ճիշտ ու գեղեցիկ գրավոր և բանավոր խոսքի կառուցման ունակությունների, հմտությունների, հայրենասիրության, ազգային արժանապատվության ու մարդասիրության բարձր որակների ձևավորումը,

բ) հաստատել հայալեզու նոր դասագրքերի ձեռագրերի լեզվական փորձաքննության կարգ՝ գործընթացում ներգրավելով լեզվի պետական տեսչությանը, ԳԱԱ լեզվի ինստիտուտին, բուհերի հայերենագիտական ամբիոններին,

գ) խրախուսել բուհերի հայերենագիտական ամբիոններին՝ բակալավրիատի համակարգում ավելի մեծ ուշադրություն դարձնելու արևմտահայերենի ուսուցման խնդիրներին և մագիստրոսական ծրագրերում ընդգրկելու արևմտահայերենի հետազոտման ու կանոնարկման հարցերը,

դ) քննարկել մայրենիի՝ ընդունելության քննության առկա կարգի նպատակահարմարության հարցը, տարբերակված մոտեցում հանդես բերել հումանիտար և բնագիտական ուղղվածությունների դիմորդներին առաջարկվող հարցաշարերը կազմելիս,

3. ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտին, լեզվի պետական տեսչությանը, բուհերի հայերենագիտական ամբիոններին՝ առաջարկելով համատեղ աշխատանքներ ծավալել ժամանակակից գրական հայերենի (արևելահայերեն և արևմտահայերեն) կանոնարկման ուղղությամբ, մշակել բառակերտման, եզրույթաբանության, ուղղագրության և ուղղախոսության, տառադարձության և կետադրության կանոնարկման միասնական սկզբունքներ,

4. ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտին, բուհերի հայերենագիտական ամբիոններին՝ առաջարկելով ավելի խորացնել հայերենի համակողմանի ուսումնասիրությունը, օգտագործել գիտության արդի նվաճումները, տեղեկատվական բարձր տեխնոլոգիաները՝ ապահովելով հայերենագիտության մրցունակությունը բազմամշակույթ աշխարհում,

5. ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտին՝ առաջարկելով կազմավորել արևմտահայերենի ուսումնասիրության բաժին, ձեռնարկել արևմտահայերենի համակողմանի ուսումնասիրություն, գրական արևմտահայերենի կանոնարկում, արևելահայերենի և արևմտահայերենի մերձեցման սկզբունքների մշակում՝ ՀՀ սփյուռքի նախարարության

աջակցությամբ համագործակցելով այլ պետություններում գործող հայագիտական կենտրոնների, հայերենագետների հետ,

6. հեռուստաընկերություններին և զանգվածային լրատվության այլ միջոցներին՝ առաջարկելով միջոցներ ձեռնարկել՝ շտկելու լեզվական ոչ բարվոք իրավիճակը, պահանջելով հանրությանը մատուցել ճիշտ ու մաքուր գրական հայերենը, ինչպես նախատեսված է ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով,

7. պետական մարմիններին, կազմակերպություններին, ձեռնարկություններին, հիմնարկներին, գործարարներին, տնտեսվարողներին՝ հորդորելով կատարել ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրենց պարտավորությունները լեզվական բնագավառում,

8. Հայաստանի Հանրապետությունում, Սփյուռքում և Արցախում ապրող մեր հայրենակիցներին՝ հորդորելով սրբորեն պահպանել, սովորել և սերունդներին փոխանցել մաքրամաքուր մայրենին, այն զերծ պահել տարատեսակ աղավաղումներից, նպաստել ճոխ ու ճկուն հայերենի հետագա հարստացմանն ու զարգացմանը, անաղարտ ու անխաթար գործառությանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈՔՅԱՆ

ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ -----4

ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ

ԱՐԴԻ ԼԵԶՎԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ----- 7

ՍԵՐԳՈ ԵՐԻՑՅԱՆ

ԼԵԶՎԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ -----16

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՔԱՐՅԱՆ

ՀՀ ԼԵԶՎԱՎԻՃԱԿԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ _____ 19

ԼՈՒՍԻՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱՐԴԻ ԼԵԶՎԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԼԵԶՎԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՈՒՄ _____ 30

ՍՈՒՐԵՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԱՐԵՎՍՏԱՀԱՅ ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒԹՅՈՒՆՔՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ _____ 36

ՅՈՒՐԻ ԴԱՎԹՅԱՆ

ԱՐԴԻ ԼԵԶՎԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՁ _____ 38

ՄԱՐԻ ԶԱՔԱՐՅԱՆ

ԼԵԶՈՒՆ ՀԱՅ ԷԹՆԻԿ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆ _____ 40

ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ _____ 46

ՅՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԼԵԶՎԱԿԱՆ ԿԱՆՈՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ _____ 55

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՒՄ _____ 61

ԱՇՈՏ ԳԱԼՍՏՅԱՆ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ՝ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ԴԱՐԲՆՈՑ _____ 65

ՀԵՆՐԻԵՏԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԲՈՒՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ _____ 68

ՍՈՒՍԱՆՆԱ ՏԻՈՅԱՆ

ՄԻՐԻԱՀԱՅ ՆԵՐԳԱՂԹՅԱԼՆԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒ _____ 71

ԳԱՅԱՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԿԱՏԱՈՈՒՄՆԵՐ ՕՏԱՐԱԽՈՄՆԵՐԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ

ՀԻՄՆԱԽԽԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ _____ 78

ՆԵԼԼԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՈՉ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԲՈՒՀԵՐՈՒՄ ԵՎ

ԲԱԺԻՆՆԵՐՈՒՄ _____ 83

ՋԵՄՄԱ ԲԱՌՆԱՍՅԱՆ

ԼԵԶՎԱԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐ ՇՈՒՐՋ _____ 91

ՆԱԶԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԼԵԶՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻՑ ՄԻ ՇԱՐՔ ՇԵՂՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ _____ 96

ԺԱՆՆԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԼԵԶՈՒՆ _____ 99

ԱՄԱԼՅԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՉ ԿԱՆՈՆԱԿԱՆ

ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ ԶԼՄ - ՆԵՐԻ ԼԵԶՎՈՒՄ _____ 106

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ _____ 110